ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՍԱՀԱԿՅԱՆ ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲԻ

ԱԴԴԻԿՏԻՎ ՎԱՐՔՈՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ժ/Թ.00.05 «ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ՏԱՐԻՔԱՅԻՆ, ՀԱՏՈՒԿ)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ հ.գ.թ. դոցենտ ՎԱՐԴԱՆՅԱՆ Ա.Վ.

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....4

ԳԼՈՒԽ 1. ԱԴԴԻԿՏԻՎ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....12

1.1 «Ադդիկտիվ վարք» հասկացության բովանդակային վերլուծությունները հոգեբանության մեջ

1.2 Ադդիկտիվ վարքի հիմնախնդրի ուսումնասիրման առկա վիճակը հոգեբանության տեսափորձարարական հետազոտություններում **.....15**

ԳԼՈՒԽ 2. ԱԴԴԻԿՏԻՎ ՎԱՐՔՈՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....26

2.1. Դեռահասների հոգեկան զարգացման հիմնական մեխանիզմները 26

2.2 Ադդիկտիվ վարքով դեռահասների սոցիալ-հոգեբանական և անձնային առանձնահատկությունների հիմնական բնութագիրը.....39

ԳԼՈՒԽ 3. ԱԴԴԻԿՏԻՎ ՎԱՐՔՈՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.....55

3.1 Փորձարարական հետազոտության նպատակը,մեթոդները, փուլերը 55

3.2.Փորձարարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունները.....67

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....107

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 110

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը. Վերջին տասնամյակներում դեռահասության շրջանում դրսևորվող շեղված վարքի մասշտաբները հասել են հսկայական չափերի: Վարքի դեվիանտ, դելիկվենտ դրսևորումների և ձևերի կողքին դեռահասության տարիքում նկատվում է հոգեակտիվ նյութերի օգտագործման երևույթի կտրուկ աճ: Հոգեակտիվ նյութերն առաջ են բերում գլխուղեղի բազմատեսակ ֆունկցիոնալ խանգարումներ և ունենալով էյֆորիկ, ակտիվացնող ազդեցություն, հանգեցնում են ֆիզիկական և հոգեբանական կախվածության:

Բոլոր հիմքերը կան եզրակացնելու, որ նշված երևույթը պետք է դիտարկել որպես հոգեմարմնական առողջությանը սպառնացող էական վտանգ, առավել ևս, որ այն անմիջական կապ ունի նաև գենոֆոնդի պահպանման հետ:

Վիճակագրական տվյալները, ըստ տարբեր երկրներում դեռահասների կողմից հոգեակտիվ նյութերի օգտագործման երևույթի, տալիս են հետևյալ պատկերը՝ Ուկրաինայում 88%, Ռուսաստանում 96%, ԱՄՆ-ում կազմում է 90% , Կանադայում 85%, Մեծ Բրիտանիայում 84%, Ֆրանսիայում՝ 80%, Հոլանդիայում՝ 93%, Պորտուգալիայում 89 %, Իտալիայում 90% և այլն **[125;126]:**

Ըստ ռուսական աղբյուրների, Ռուսաստանում դեռահասների ադդիկտիվ վարքի դրսևորումները հասել են ճգնաժամային չափերի՝ վերջին 10 տարիների ընթացքում աճելով 16 անգամ, ընդ որում դա միայն հաշվառման մեջ գտնվող դեռահասների թվին համարժեք **[5, 51, 65, 97]**:

Ավելին, ըստ Ե.Ավերինայի, Ե.Գուսևի և ուրիշների, հոգեակտիվ նյութեր օգտագործող դեռահասների 50 % մահանում են մարմնային խանգարումների կամ գերդոզավորման արդյունքում 14-18 տարեկան հասակում **[3, էջ 72-78; 57]:**

Միաժամանակ, ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների, նշված երևույթը նկատելիորեն երիտասարդացել է. եթե 10 տարի առաջ ալկոհոլի և ծխախոտի հետ առաջին ծանոթացումը կատարվում է 15-18 տարեկանում, ապա ներկայումս՝ 11-15 տարեկանում **[5]**:

Վերը շարադրվածը ցույց է տալիս, որ հոգեակտիվ նյութեր օգտագործելու երևույթը լուրջ սպառնալիք է, որը ոչ միայն դժվար է կառավարել, այլև լուծմանը

հասարակությունը դեռևս պատրաստ չէ: Հետազոտությունների մեծամասնությունը անցկացվել է բժշկական գիտության շրջանակում և հիմնականում դիտարկվել է երևույթի կլինիկական ասպեկտները (Վրուբլեվսկի Ա., Գենայլո Ս., Կոլոմեց Ա., Պյատնիցկայա Ի., Սիդորով Պ., Բիտենսկի Վ., Լևին Բ., Էտնին Գ. և ուրիշն.):

Վերջին տարիներին հոգեբանները սկսել են հետազոտել են հիմնախնդրը հոգեբանական մակարդակում, բացահայտելով տարբեր գործոնների նշանակությունը և ազդեցությունը ադդիկտիվ վարքի կազմավորման վրա:

Մասնավորապես 2000-2012 թվականներին աճել է գիտական հետաքրքրությունը դեռահասների կողմից հոգեակտիվ նյութեր օգտագործելու երևույթի հանդեպ, այն դրսևորվել է մեծաքանակ գիտաժողովներում, սիմպոզիումներում, տարբեր երկրներում պաշտպանված ատենախոսություններում և գիտական հրապարակումներում **[3; 5; 10; 40; 47; 48; 62; 76; 86; 97; 98; 101; 118; 122; 125; 126; 127]:**

Չնայած հիմնախնդրի արդիականությանը և կարևորությանը, հայ հոգեբանական գիտության մեջ այն հետազոտված չէ, մասնավորապես՝ բացահայտված չեն հայ դեռահասի անձնային, դաստիարակության առանձնահատկությունների, մեր մշակույթին, ընտանիքին բնորոշ միջավայրի և ադդիկտիվ վարքի փոխհարաբերության հարցերը:

Ատենախոսական հետազոտությունը ուղղված է նշված խնդիրների ուսումնասիրմանը: Հարկ է նշել, որ դրա անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն գիտական նկատառումներով, այլև վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական, տնտեսական և հոգևոր ոլորտների կտրուկ փոփոխություններով և դրանց հետևանքներով: Հայաստանում ձեռք բերված անկախությանը ուղեկցող հոգևոր վերելքը ուղեկցվեց բարոյական և հոգևոր անկումով, հասարակության դեպրեսիվ տրամադրությամբ: Տեղի ունեցավ արժեքների վերագնահատում, նախկին սոցիալ-հոգեբանական վարքի կարծրատիպերի քայքայում: Ձեռք բերված անկախության հետ կապված սոցիալ-հոգաբանական սպասումները չարդարացան: Տնտեսական ճգնաժամի, գործազրկության, ընտանիքների կազմալուծման երևույթները դարձան սթրեսոգեն գործոն, ավելացնելով դեռահասների շրջանում ադդիկտիվ վարքի դրսևորումները:

Ոչ պակաս կարևոր գործոն է նաև Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը, որն էլ իր հերթին մեծապես նպաստեց օտար բարքերի, տարբեր հոգեակտիվ նյութեր երկիր ներթափանցման երևույթին՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով բազմատեսակ ասոցիալ և դելիկվենտ դրսևորումների զարգացման համար:

Արդյունքում նշված գործոններն էապես դժվարացրին աճող սերնդի հետ տարվող կանխարգելիչ և դաստիարակչական աշխատանքները: Հատկապես՝ դեռահասի համար, որն ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ հոգեսոցիալական զարգացման առումով խիստ խոցելի է անբարենպաստ ազդեցությունների հանդեպ: Կենսագրական հետազոտությունը Երևան քաղաքի Հանրապետական նարկոլոգիական դիսպանսերում ցույց տվեց, որ հաշվառված հիվանդներն առաջին անգամ հոգեակտիվ նյութեր փորձել են հենց դեռահասության տարիքում:

Հատկապես հայկական իրականության մեջ հոգեակտիվ նյութերից կախվածությունն ունի իր յուրահատկությունները, քանի որ հայ ծնողների և երեխաների կողմից այն տարբեր կերպ է ընկալվում: »Դեռահաս-ծնողներ» փոխհարաբերությունը և փոխըմբռնումը դժվարանում է գերխնամակալության ոճի դեպքում, երբ ծնողներն ամեն գնով ուզում են վերահսկել դեռահասների գործունեությունը, վարքը, կյանքը, ընդհուպ մինչև անմիջական ենթակայաթյուն պահանջելը, դեռահասի փոխարեն որոշումներ կայացնելը, նրա ինքնուրույնությանը ճնշելը:

Վերոհիշյալը ևս մեկ անգամ ընդգծում է մեր կողմից ընտրված թեմայի արդիականությունը և հետազոտության անհրաժեշտությունը:

Հետազոտության օբյեկտը դեռահասների ադդիկտիվ վարքն է:

Հետազոտության առարկան. Ադդիկտիվ վարքով հայ դեռահասների անձնային, տարիքային, սեռային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններն են:

Հետազոտության նպատակն է բացահայտել ադդիկտիվ վարքով դեռահասների անձնային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները ժամանակակից հայ իրականության մեջ:

Հետազոտության վարկած. ենթադրվում է, որ

1. դեռահասության տարիքում որոշակի անձնային հատկանիշները՝ ագրեսիվությունը, իմպուլսիվությունը, վատատեսությունը, կասկածամտությունը, տագնապայնությունը, բնավորության շեշտված հիստերոիդ, հիպերտիմ, զգայուն և անկայուն տիպերը և սոցիալ-հոգեբանական գործոնները՝ շրջապատի, ընտանիքի, տարաբնույթ խմբերի անբարենպաստ ազդեցությունը, պայմանավորում են ադդիկտիվ վարքի նախատրամադրվածությունը և նպաստում են ադդիկցիաների կազմավորմանը;

2. դեռահասության շրջանում ադդիկտիվ վարքն ունի դրսևորման վառ արտահայտված տարիքային և սեռային առանձնահատկություններ;

3. հայ իրականության մեջ դեռահասի ադդիկտիվ վարքի դրսևորմանը նպաստում է նաև ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները, հատկապես ծնողի կողմից ցուցաբերած գերխնամքը:

Հետազոտության նպատակից և վարկածից բխում են հետևյալ խնդիրները.

1. Վերլուծել դեռահասության տարիքում ադդիկտիվ վարքի ուսումնասիրության հիմնական տեսական մոտեցումները և առանձնացնել ադդիկտիվ վարքով դեռահասների անձնային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ընդհանուր բնութագիրը.

2. Հետազոտել ադդիկտիվ վարք ունեցող և ադդիկտիվ վարք չունեցող հայ դեռահասների անձնային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները և կատարել դրանց համեմատական վերլուծություն.

3. Ուսումնասիրել և բնութագրել ադդիկտիվ վարքով դեռահասների հոգեկան զարգացման տարիքային, սեռային յուրահատկությունները դեռահասության շրջանի յուրաքանչյուր հատվածում:

Հետազոտության տեսական նշանակությունը

Առաջին անգամ Հայաստանում ուսումնասիրվում են ադդիկտիվ վարքով դեռահասների անձնային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Ստացված տվյալները հարստացնում են դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորման գործընթացում անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնի նշանակության մասին եղած պատկերացումները, ինչպես նաև հնարավորություն են ընձեռում հիմնախնդրի

հետագա ավելի լայնածավալ հետազոտությունների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել գործնական հոգեբանների, մանկավարժների, իրավապահ մարնինների կողմից որպես միջոց՝ ախտորոշիչ, կանխարգելիչ, շտկող աշխատանքների պլանավորման, կազմակերպման և իրակա-նացման միջոց: Դրանց հիման վրա հնարավոր է մշակել ծրագրեր, որոնք կնպաստեն դեռահասի հոգեֆիզիկական և հոգեմարմնական զարգացմանը և առողջ ապրելակերպին:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել դեռահասների ադդիկտիվ վարքին նվիրված կարևորագույն – հիմնարար աշխատությունները, (Ն.Շաբալով, Յուր.Անտոնյան, Ս.Բերեզին, Վ.Բիտենսկի, Վ.Գուլդան, Տ.Դոնսկիխ, Ն.Իվանով, Վ.Կաչալով, Ց.Կորոլենկո, Ս.Կուլակով, Ե.Կոշկինա, Ռ.Լազուրուս, Կ.Լիսենսկի, Ա.Լիչկո, Ն.Մակսիմովա, Օ.Ռոմանովա, Ն.Սիրոտա, Յու.Պոպով, Ի.Տոլստիխ, Վ.Յալտոնսկի) և դեռահասների դեվիանտ վարքի հոգեբանական առանձնահատկությունների տեսական հայեցակարգերը (Ս.Արզումանյան, Տ.Եվդոկիմովա, Ու.Աբշաիխովա, Յու. Պոպով, Ս.Բորոդին, Բ.Բրատուս, Ի.Կոն, Ա.Ռեան, Ն.Շիլովա, Ս.Ենիկոլոպով, Ա.Լիչկո, Վ.Կովալյով, Ց.Կորոլենկո, Պ.Սիդորով, Brenner , Davidson F):

Հետազոտության մեթոդաբանական հիմք է հանդիսացել Ս Ռուբինշտեյնի, Ա.Լեոնտևի աշխատանքներում մշակված տեսական դրույթները և մեթոդաբանական հիմնական սկզբունքները, Բ.Անանևի՝ անձի ուսումնասիրության համալիր մոտեցումը, Լ.Բոժովիչի, Լ.Վիգոտսկու, Ա.Լեոնտևի, Է.Էրիկսոնի, Դ.Էլկոնինի, Ժ.Պիաժեի և ուրիշների անձի զարգացման առանձնահատկությունների տեսությունները դեռահասության տարիքում: Հենվել ենք նաև Բ.Բրատուսի, Ա.Լիչկոյի, Ն.Մակսիմովայի, Ն.Շիլովայի, Ց.Կորոլենկոյի, Ն.Սիրոտայի աշխատություններում տեղ գտած դեռահասների ադդիկտիվ վարքը մեկնաբանող դրույթների և մոտեցումների վրա:

Հետազոտության կազմակերպումը և բազան

Հետազոտությունը անցկացվել է Երևան քաղաքի թիվ 5 և 29 միջնակարգ

դպրոցներում, կույր և թույլ տեսնող երեխաների գիշերօթիկ դպրոցում և Երևան քաղաքի Հանրապետական նարկոլոգիական դիսպանսերում:

Հետազոտության մեթոդները և փուլերը

Հետազոտության մեթոդները – Հետազոտական խնդիրների լուծման նպատակով կիրառել ենք մեթոդների հետևյալ խումբը - կենսագրական մեթոդը՝ ուսումնասիրվել են Երևան քաղաքի նարկոլոգիական դիսպանսերում հաշվառման մեջ գրանցված անձանց 220 անկետա, դիտման մեթոդ, մեր կողմից կազմված ադդիկտիվ վարքի ախտորոշման հարցաշար, դեռահասների ադդիկտիվ վարքի դրդապատճառները բացահայտման հարցաշար, Բասս Դարկի ագրեսիվության ախտորոշման մեթոդիկա, Լ.Սոբչիկի դեռահասների համար ադապտացված «MMPI» Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսոթյան հարցարան և Լիչկոյի՝ «Բնավորության ախտաբանության ախտորոշման» մեթոդիկա, փորձարարական հետազոտության տվյալների քանակական և որակական վերլուծություն:

Նշված մեթոդիկաները հետազոտության ընթացքում թարգմանվել և ադապտացվել են:

Հետազոտությունը անցկացվել է երեք փուլով, հետազոտվող խումբը կազմվել է կամավորության սկզբունքի հիման վրա:

Առաջին փուլի ընթացքում (2007-2008թթ.) դպրոցներում անցկացվել է ազատ դիտումներ, որի ժամանակ դեռահասների հետ կազմակերպվել և անցկացվել է նաև դասախոսություններ և բանավեճեր «ինչ գիտեմ ես հոգեակտիվ նյութերի մասին», «իմ ընկերը թմրամոլ է, ինչ անել», «թմրանյութերը ամեն ինչ կորցնելու միջոց են» և այլ թեմաներով: Բանավեճերը անց են կացվել շաբաթը երկու անգամ: Այս փուլի նպատակն էր խմբի ընտրությունը:

Դիտման ժամանակ առանձնացրել ենք հետազոտվողների վերբալ ակտիվությունը և պասիվությունը, էքսպրեսիայի, տագնապի և ագրեսիայի արտաքին դրսևորումները: Ըստ մեր կողմից կազմված ադդիկտիվ վարքի ախտորոշման հարցաշարի էմպիրիկ տվյալների, կազմվել են ստուգիչ և փորձարարական խմբերը: Ստուգիչ խումբը բաղկացած էր ադդիկտիվ վարք չունեցող 90 դեռահասից՝ 50 տղա, 40 աղջիկ, որոնցից 20 աղջիկ 11-13 տարեկան, 20 տղա 11-13 տարեկան և 20 աղջիկ 14-16

տարեկան և 30 տղա 14-16 տարեկան, իսկ փորձարարական խումբը՝ 85 ադդիկտիվ վարքով դեռահասներից՝ 45 տղա և 40 աղջիկ, որոնցից 20 աղջիկ 11-13 տարեկան, 20 տղա 11-13 տարեկան և 20 աղջիկ 14-16 տարեկան և 25 տղա 14-16 տարեկան:

Հետազոտության երկրորդ փուլում ստուգիչ և փորձարարական խմբերում անց ենք կացրել Բասս Դարկի ագրեսիվության ախտորոշման, Լ.Սոբչիկի կողմից դեռահասների համար ադապտացված «MMPI» Անձի բազմապրոֆիլային ուսումնասիրության մինեսոթյան հարցարան և Լիչկոյի՝ Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկաները՝ ադդիկտիվ վարքով դեռահասների անձնային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները բացահայտելու նպատակով:

Հետազոտության երրորդ փուլում (2010-2012թ.) կատարել ենք փորձարարական հետազոտությունների արդյունքների մշակում, վերլուծություն և ընդհանրացում եռագործոն դիսպերսիոն վերլուծության միջոցով, որոնք իրենց արտացոլումն են գտել աղյուսակներում և գրաֆիկներում:

Արդյունքների հավաստիությունը

Ստացված արդյունքների հավաստիությունը պայմանավորված է օգտագործված մեթոդների հուսալիության և վալիդայնության բարձր աստիճանով և մեթոդների քանակով: Բացի այդ, հետազոտության հավաստիության և հուսալիության մասին է խոսում ուսումնասիրված դեռահասների քանակը, ստացված տվյալների որակական և քանակական վերլուծությունը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը ապահովվել է ընտրանու ծավալով անց կացված՝ ադդիկտիվ վարքի, ագրեսիայի մակարդակի, անձնավորության ուսումնասիրության և բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկաների համապատասխանությամբ հետազոտական խնդիրներին և դրանց արդյունքների եռագործոն դիսպերսիոն վերլուծությամբ:

Որպես կախյալ գործոն օգտագործվել են մեթոդիկաների կիրառումից ստացված բնութագրերը: Որպես անկախ փոփոխական օգտագործվել են հետազոտվողների տարիքը, սեռը և հոգեակտիվ նյութեր օգտագործելու հանգամանքը:

Անձնային բնութագրերի, բնավորության շեշտվածության տիպի և ագրեսիվության դրսևորման ձևերի պրոֆիլները, կազմվել են յուրաքանչյուր հետազոտվող խմբի համար առանձին՝ 11-13 տարեկան աղջիկների և տղաների և 14-16 տարեկան աղջիկների և տղաների համար «կրտսեր և ավագ դեռահասներ»:

Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանվել են 95 % վստահելի ինտերվալներ, որոնք ներկայացվել են գրաֆիկներում:

Գիտական նորույթը

ա/ Գիտափորձերից ստացված արդյունքները մատնանշում են ադդիկտիվ վարքով և ադդիկտիվ վարք չունեցող հայ դեռահասների անձնային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների էական, հավաստի տարբերություններ.

բ/ Առանձնացվել են հայ դեռահասի անձի այն հոգեբանական առանձնահատ-կությունները՝ ագրեսիվություն, իմպուլսիվություն, վատատեսություն, կասկածամտություն, տագնապայնություն և դեռահասի բնավորության շեշտված այն տիպերը՝ հիստերոիդ, հիպերտիմ, զգայուն և անկայուն, որոնք նպաստում են ադդիկտիվ վարքի ձևավորմանը.

գ/ բացահայտվել են դեռահասության յուրաքանչյուր հատվածին բնորոշ տարիքային, սեռային տարբերություններ, ինչպես նաև հայ դեռահասին բնորոշ մոտիվացիայի առանձնահատկությունները:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները

1. Հայաստանում դեռահասների ադդիկտիվ վարքի ուսումնասիրությունը արդիական և կարևորագույն հիմնախնդիր է, որի արդյունավետ լուծումով են պայմանավորված դեռահասների սոցիալ-հոգեբանական հարմարման, ինչպես նաև անձի ձևավորման և կայացման գործընթացները;

2. Ադդիկտիվ վարքի ձևավորումը պայմանավորված է դեռահասների որոշակի անձնային հատկություններով, հոգեկանի զարգացման տարիքային և սեռային առանձնահատկություններով:

3. Հայ դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորմանը նպաստում են անձի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ագրեսիվությունը իմպուլսիվությունը, վատատեսությունը, կասկածամտությունը, տագնապայնությունը,

շեշտված բնավորության տիպերը՝ հիստերոիդ, հիպերտիմ, զգայուն և անկայուն, ինչպես նաև ընտանիքում միջանձնային փոխազդեցության առանձնահատկությունները:

4. Ադդիկտիվ վարքի ձևավորման հիմքում ընկած անձնային և սոցիալ-հոգեբանական օրինաչափությունների բացահայտումը հնարավորություն է տալիս մշակել համարժեք շտկող և կանխարգելող միջոցառումներ՝ դեռահասի անձի ներդաշնակ զարգացման և ձևավորման նպատակով:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և ներդրումը.

Ատենախոսության հետազոտության արդյունքները քննարկվել են Վ.Բրյուսովի անվ. ԵՊԼՀ-ի հոգեբանության և փիլիսոփայության և մանկավարժության և լեզուների մոթոդիկայի դասավանդման ամբիոնների նիստերին, ատենախոսության նյութերի հիման վրա մշակվել է «Կախվածությունների հոգեբանություն» առարկան: Ատենախոսության նյութերը ներկայացվել են մի շարք գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Համեմատված ադդիկտիվ վարքով և ադդիկցիաներ չունեցող դեռահասների առանձնահատկությունների, դրդապատճառների արդյունքները ամփոփ ներկայացված են 2 աղյուսակներում և 16 գրաֆիկներում: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 135 համակարգչային էջ:

ԳԼՈՒԽ 1. ԱԴԴԻԿՏԻՎ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 «Ադդիկտիվ վարք» հասկացության բովանդակային վերլուծությունները հոգեբանության մեջ

Ադդիկտիվ վարքի ուսումնասիրությունը վերջին տարիներին դարձել է առավել արդիական: Լատիներենից «addictus» թարգմանվում է ստրկորեն նվիրված, անգլեներից ադդիկտիվ վարքի մեկնաբանությունը նշանակում է հակում, կործանիչ սովորույթ, մեկ կամ մի քանի նյութերի չարաշահում, որ ընթանում է փոփոխված գիտակցության ֆոնի վրա: Ռուսերեն լեզվով նշանակում է խիստ հակում, կապ-վածություն, ինչ-որ բանի կույր գերապատվություն, կիրք որևէ բանի նկատմամբ **[55, էջ 191; 68, էջ 32-68; էջ 160; 170]:**

Որոշ հետազոտողներ գտնում են, որ ադդիկտիվ վարքը կախվածության հոմանիշն է, մյուսները՝ դեռևս չձևավորված հիվանդություն, վարքի խանգարում ֆիզիկական և հոգեկան կախվածության բացակայությամբ **[7, էջ 210-214; 24, էջ 143; 33, էջ 77-85]:**

Ռուս գիտնական Ց.Կորոլենկոյի աշխատանքներում ադդիկտիվ վարքը դիտարկվում է ավելի լայն իմաստով: Ըստ հեղինակի ադդիկտիվ վարքը դեվիանտ «շեղված» վարքի տարատեսակ է՝ իրականությունից փախուստի ձգտման ձևավոր-մամբ, որին անձը հասնում է որոշ նյութերի ընդունման, կամ գործունեության որոշ ձևերի վրա գիտակցության սևեռման միջոցով, որը բերում է հոգեվիճակի փոփո-խության և ուղեկցվում է սուբյեկտիվ հաճելի հուզական վիճակներով: Ինչպես նշում է հեղինակը, ադդիկցիայի խնդիրը սկսվում է, երբ իրականությունից հեռանալու ձգտումը՝ կապված գիտակցության փոփոխման հետ սկսում է դառնալ տիրապետող գիտակցության մեջ, գլխավոր միտք **[62, էջ 8-15; 63, էջ 94-135; 64, էջ.50-58; 149]:**

Ա.Լիչկոյի և Բ.Բիտենսկու կարծիքով, դեռահասների համար ադդիկտիվ վարք տերմինը ամենանպատակահարմարն է, քանի, որ խոսքը գնում է ոչ թե ձևավորված հիվանդության, այլ վարքի խանգարման մասին **[80, էջ 8-35; 81, էջ 105-200; 83, էջ 26-46]:**

Ի.Ս Կոնի կարծիքով, անկախ այն բանից, որ դեվիանտ վարքը դրսևորվում է տարբեր ձևերով, այդ դրսևորումները փոխկապակցված են: Հարբեցողությունը,

թմրանյութերի օգտագործումը, ագրեսիվ վարքը, հակահիրավական վարքը կազմում են մեկ միասնական խումբ: Դեռահասներիի ներգրավվածությունը դեվիանտ վարքի ձևերից մեկում մեծացնում է մյուս ձևերում նրա ներքաշման հավանականությունը **[59; 60]**:

Ռուս գիտնական Ե. Իլյինը դեռահասների ադդիկտիվ վարքը դիտարկում է ոչ թե որպես դեստրուկտիվ, այլ դեվիանտ վարքի ձև, պայմանավորված նրանց վնասակար սովորություններով: Բայց հեղինակը անտեսում է այն փաստը, որ դեռահասության տարիքը բնորոշվում է համատարած վարքի նորմերի շեղումներով **[54]**:

Լ.Լեոնովան և Բ.Բոչկարյովը գտնում են, որ դեռահասների ադդիկտիվ վարքը դեստրուկտիվ է, երբ ադդիկտիվ ռեալիզացիան միջոցից աստիճանաբար վերածվում է նպատակի **[27]**:

Վ. Մենդելևիչը ադդիկտիվ վարքը մեկնաբանում է որպես յուրաքանչյուր գերարժեքավոր հետաքրքրություն, երբ ադդիկցիայի օբյեկտը մարդու համար դառնում է կյանքի ամենանշանակալին, ուղեկապելով մյուս գործունեությունները **[89]**:

Տարբեր հեղինակների կողմից առանձնացվում են ադդիկտիվ վարքի հիմնական ձևերը - հոգեակտիվ նյութերի, դեղանյութերի, տարաբնույթ քիմիական նյութերի ընդունում, մոլախաղերի մասնակցություն՝ նեռարյալ նաև համակարգչային, սեռական ադդիկտիվ վարք, բուլիմիա, անոռեքսիա, ֆանատիզմ, երաժշտության երկարատև ունկնդրում՝ հիմնականում ռիթմիկ, հեռուստացույց և այլն: Նրանք ադդիկտիվ վարքը մեկնաբանում են որպես նշված դրսևորումների ինչպես ախտաբանական, այնպես էլ ոչ ախտաբանական ձևեր **[15, էջ 35-95; 19, էջ 216; 40, էջ 84-91; 42, էջ 40-45; 51, էջ 83-89; 118, էջ 9-13]**:

Տարբեր հետազոտություններ բնութագրում են հոգեակտիվ նյութերից հոգեկան կախվածության հոգեախտաբանական վիճակը և դրան ուղեկցող վարքային խանգարումները, բայց դեռևս պարզ չեն դառնում ադդիկցիայի ձևավորման մեխանիզմները, որոնց հիմքերը անձի հոգեկանի խորքում են և բնութագրվում են ոչ թե այլ մարդկանց, այլ անշունչ առարկաների նկատմամբ հուզական հարաբերությամբ կամ, մարդկային գործունեության տարբեր տեսակների նկատմամբ ակտիվությամբ, տարվածությամբ, օրինակ գրքեր կարդալով, նկարչությամբ, ֆիլմեր նայելով, սպորտով

զբաղվելով և այլն: Դեռահասության տարիքային փուլը, որը բնորոշվում է զարգացման անհամաչափությամբ, սոցիալական և հոգեբանական անկայունությամբ, անձի ձևավորման գործընթացի անավարտությամբ, ադդիկտիվ վարքի ախտաբանական և ոչ ախտաբանական ձևերի տարբերակումը ունի իր առանձնահատկությունը **[60, էջ 150-211]:**

Ս.Կուլակովի կողմից առաջադրված սահմանման մեջ ադդիկտիվ վարքը մեկնաբանվում է որպես ադապտացիայի խանգարում, որը բնութագրվում է որպես մեկ կամ մի քանի հոգեակտիվ նյութերի չարաշահում՝ առանց հոգեկան և ֆիզիկական կախվածության նշանների՝ համակցված վարքի այլ խանգարումների հետ **[68, էջ 190; 69]:**

Մեր կողմից կատարված հատուկ հոգեբանական գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ թեև տարբեր հեղինակներ և ուղղություններ ցուցաբերում են խնդրին տարբեր մոտեցումներ, այնուամենայնիվ, որպես ընդհանրություն առանձնացնում ենք, որ ադդիկտիվ վարքը կարելի է դիտարկել որպես ինքնակործանող վարք, երբ մարդը ձգտում է անընդհատ վերարտադրել այն, անտեսելով դրա անարդյունավետ լինելու հանգամանքը: Դրա արդյունքում լրջորեն խաթարվում է մարդու նորմալ կենսագործունեությունը: Կպչուն, կրկնվող գործողությունների կատարման նպատակը հոգեկան ուժեղ լարվածության լիցքաթափումն է: Այդ գործողությունները առանձին դեպքերում զուգորդվում են հաճույքի, բավարարարվածության ուժեղ զգացումով, որը և պայմանավորում է հոգեկանում դրանց ամրապնդումն ու այն կրկնելու միտումը: Ադդիկտիվ վարքը նաև դիտարկվում է որպես սոցիալ-հոգեգեբանական երևույթ: Դեռահասների համար ադդիկտիվ վարք տերմինը ամենանպատակահարմարն է, քանի, որ խոսքը գնում է ոչ թե ձևավորված հիվանդության, այլ վարքի խանգարման մասին:

1.2 Ադդիկտիվ վարքի հիմնախնդրի ուսումնասիրման առկա վիճակը հոգեբանության տեսափորձարարական հետազոտություններում

Ներկայումս հատուկ գրականության մեջ առկա են մեծաքանակ հետազոտություններ նվիրված այն խնդրին, թե հատկապես ինչպիսի հոգեակտիվ նյութեր են նախընտրում դեռահասները **[2, էջ 72-7; 10, էջ 97-105; 15, էջ 251; 18, էջ 216; 30, էջ 31-80; 37, էջ 84-91; 40; 51, էջ171; 55, էջ 192; 63, էջ 8-15; 65, էջ 53-58; 70, էջ 98-101; 78, էջ 129-134; 97, էջ 28-38; 114, էջ 64; 140, էջ 79-80]:**

Սակայն նշված հետազոտություններում կամ բավականաչափ ներկայացված չեն, կամ էլ ընդհանրապես վերհանված չեն հոգեակտիվ նյութերի օգտագործման հոգեբանական բովանդակությունը՝ մոտիվացիան, անձնավորության ուղղվածությունը, տիպաբանությունը և այլն:

Ադդիկտիվ վարքի ձևավորման գործընթացի մեկնաբանման հարցում մեծ ներդրում ունեն վարքային ուղղվածության հետազոտողները՝ Ա.Բանդուրան, Ջ.Ուոտսոնը, Ռ.Օլտեռը: Մասնավորապես նրանք նշում են որ ադդիկտիվ վարքի ձևավորման հիմքում ընկած են հասակակիցների հետ հուզական կապեր հաստատելու դժվարությունները և մեծահասակների հետ կախվածություն-անկախություն կոնֆլիկտի ապրումը **[14]:**

Նրանց տեսություններում երեխան դիտարկվում է որպես կախյալ էակ, և կախվածության օբյեկտը տարիքի հետ փոխվում է, անցնում է նրա ավելի հասուն ձևերի ՝ ցուցաբերելով իր նկատմամբ հետաքրքրություն և պահանջելով ճանաչում, ինչի արդյունքում էլ ծագում է անկախությունը: Դեռահասության տարիքում, երբ կտրուկ անցում է կատարվում դեռահասի ծնողների կախվածությունից դեպի հասակակիցներից կախվածությանը, զարգանում է կոնֆլիկտ, որի արդյունքում շատ դեռահասներ անընդհունակ են դառնում կայուն հուզական կապեր ձեավորելու և պահպանելու, որը կարող է հանգեցնել ադդիկտիվ վարքի ձեավորման՝ որպես հետևանք տվյալ իրավիճակում առկա տագնապի:

Ինչպես նաև ըստ նրանց, ադդիկցիայի հիմքում ընկած է հեդոնիզմը՝ որպես բացասական հույզերից ազատվելու միջոց: Բայց և այնպես, հետազոտողները հաշվի

չեն նստել այն հանգամանքի հետ, որ որոշ հոգեակտիվ նյութերի ընդունումը առաջ է բերում բացասական հուզական վիճակ **[2; 16, էջ 256; 37, էջ 84-91; 65, էջ 53-58; 118, էջ 9-13; 136, էջ 12-54]:**

Հոգեակտիվ նյութերն օգտագործում են այն բանի համար, որպեսզի խուսափեն իրական պրոբլեմները լուծելուց, ազատվեն հուզական դիսկոմֆորտից, բայց հաշվի չեն առնում, որ դրանց օգտագործումը միայն խորացնում է կենսական պրոբլեմները: Պետք է նշել, որոշ հոգեակտիվ նյութերի ընդունումը առաջ է բերում ոչ թե էյֆորիա, այլ հակառակը՝ վախ, ցնորք, այսինքն վերոնշյալ հեդոնիստական մեկնաբանությունը խիստ կասկածելի են:

Ռուս գիտնականներ Ա.Բորոխովը և Դ.Իսաևը գտնում են, որ դեռահասների՝ հոգեակիվ նյութեր օգտագործելու հիմնական պատճառը սոցիալական դեզադապ-տացիան է: Ընդ որում, սոցիալական դեզադապտացիան հիմնականում նկատվում է տղաների մոտ, իսկ աղջիկների մոտ գերակշռում են նևրոտիկ խանգարումները **[23, էջ 88-93]:**

Ջ.Ջեկոբսոնը մատնանշում է, որ դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորմանը կարող են նպաստել հետևյալ անձնային գործոնները.

ա/ աֆեկտիվ ոլորտի դեֆեկտը, երբ մարդը չի կարողանում վերահսկել ներքին մղումները,

բ/ ցածր ինքնագնահատականը,

գ/ դժվարություններ միջանձնային հարաբերությունների ոլորտում:

Ի.Պյատնիցկայան և Վ.Կաչալովը նույնպես նշում են ադդիկտիվ վարքով դեռա-հասի ոչ բավարար սոցիալական ադապտացիայի մասին՝ հատկապես դժվար իրավիճակներում **[110]**:

Ֆ.Կիլխոլցը ենթադրում է, որ դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորման կարևոր գործոն են հանդիսանում թաքնված դեպրեսիաները: Երկարատև հուզական լարվածությունը հանգեցնում է հոգեկանի քայքայմանը, որը ուղեկցվում է քնի խանգարումով, խրոնիկ հոգնածությամբ, գերզգայունակությամբ և այլն: Այդ հոգեվիճակից դուրս գալու նպատակով դեռահասները դիմում են տարբեր հոգեակտիվ նյութեր օգտագործմանը **[118]**:

Ռ.Լազուրուսը ներմուծել է կոպինգ հասկացությունը՝ այսինքն սթրեսի հաղթահարում, որի համար յուրաքանչյուր մարդ գտնում է իր միջոցը՝ կոպինգ-ստրատեգիան: Կախված այն բանից, թե ինչպիսի ռեսուրսներ և ստրատեգիա է օգտագործվում, կարող են ձևավորվել վարքի ադապտիվ և ոչ ադապտիվ ձևեր: Եթե դեռահասը ընտրում է փախուստի ստրատեգիան, որի ժամանակ աշխատում է խուսափել շրջապատող իրականության հետ շփման մեջ մտնելուց, հեռանալ, պրոբլեմների լուծումից, ապա կարող է ձևավորվել ադդիկտիվ վարք **[71, էջ 24-53]**:

Ն.Սիրոտան և Վ.Յալտոնսկին **[120, էջ 12-41; 121, էջ 8-21]** գտնում են, որ ադդիկտիվ վարքի ձևավորման հիմքում ընկած են կոպինգ վարքի դեզադապտիվ մոդելնել և առանձնացնում հոգեակտիվ նյութեր օգտագործող դեռահասների դեզադապտիվ կոպինգ-վարքի ձեավորման հետևյալ հոգեբանական գործոնները.

- փախուստի կոպինգ ստրատեգիաների սիստեմատիկ օգտագործում;

-սոցիալական աջակցություն գտնելու կոպինգ ստրատեգիաների ցածր արդյունավետություն;

- պրոբլեբների ակտիվ լուծման հմտությունների բացակայություն;

- բացասական աղավաղված դեֆորմացված ես-կոնցեպցիան;

- ասոցիալ աջակցություն և միջավայրի սուբյեկտիվ վերահսկողության ցածր մակարդակ;

- մերժման նկատմամբ մեծ զգայունություն;

-ինքնագնահատականի իրական և իդեալական բաղադրիչների միջև ընդհանրության բացակայություն:

Հոգեվերլուծական կոնցեպցիայի ներկայացուցիչները՝ Զ.Ֆրոյդը, Ա.Ֆրոյդը, Գ.Գարտմանը, Ա.Ադլերը, Է.Ֆրոմը և ուրիշները հիմնական ուշադրություն են դարձնում մանկության տարիների չլուծված կոնֆլիկտներին և մեծահասակներից ունեցած հուզական կախվածությանը, հոգեսեռական զարգացման առանձնահատ-կություններին: Ըստ նրանց, անձի զարգացումը ընթանում է որոշ փուլերով, որոնց դեֆեկտները, այսինքն ներանձնային կոնֆլիկտները, հատկապես օրալ կամ անալ փուլերի ընթացքում կարող են նպաստել ադդիկտիվ վարքի ձևավորմանը:

Ըստ Պ.Բլոսի, մարդը պետք է ազատվի մանկության կախվածությունից, որպեսզի

ձեռք բերի անկախություն հասունացման փուլում, որտեղ կարևոր է հակումը ռեգրեսիայի նկատմամբ, որն արտահայտվում է կուռքերի ստեղծումով, խմբի հետ նույնականությամբ՝ որպես ընտանիքի փոխարինող, այդ ամենը կարող է ուղեկցվել ադդիկտիվ վարքով **[25]**:

Ա.Ադլերը հիմնականում ուշադրություն է դարձնում բնածին թերարժեքության բարդույթին և դրա փոխհատուցմանը: Ըստ հեղինակի, թերարժեքության բարդույթը կարելի է հաղթահարել միայն հանրության զգացումի զարգացմամբ, այսինքն դեռահասները պետք է լուծեն իրենց պրոբլեմները և հաճույք ստանան սոցիալական շփումներից, հակառակ դեպքում, հակում կառաջանա դեպի ադդիկտիվ վարքագիծը: Ըստ Ա.Ադլերի, ադդիկտիվ վարքը փախուստ է իրականությունից, երբ մարդը ձգտում է հաղթահարել անլիարժեքության բարդույթը **[4]**:

Ըստ Է.Էրիկսոնի հոգեսոցիալական զարգացման տեսության, դեռահասության ճգնաժամի ընթացքում տեղի է ունենում անձի նույնացում և դեռահասը ստեղծում է իդեալներ, և երբ հիմնական խնդիրը սեփական դերի ինտեգրումն է ապագային: Եթե դեռահասը ընդունակ չէ իր տեղը կյանքում գտնելու, որի հիմքում ընկած է կասկածանքը իր սեռական, էթնիկական և դերային նույնացման նկատմամբ, ապա կարող է առաջ գալ հուսահատություն, որը կարող է բերել ադդիկտիվ վարքի **[139]**:

Է.Ֆրոմը իր տեսությունում նշում էր, որ մարդկային պահանջմունքներից մեկը, օտարացվածության հաղթահարումն է, շրջապատող իրականությունից վախը, միայնությունից ազատվելը, որը երբեմն ձեռք է բերվում ադդիկտիվ վարքի միջոցով **[134]**:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Է.Բեռնի տրանսակտ վերլուծությունը, որտեղ ադդիկտիվ վարքը դիտարկվում է որպես խաղի տարբերակ, որտեղ մարդը կարող է խաղալ ամբողջ կյանքում և չվախենալ առողջությունը կորցնելուց: Նման ձևով հեղինակը նշում է, որ թմրամոլությունը և ալկոհոլիզմը ճնշված հոմոսեքսուալության արդյունք է: Ըստ հեղինակի, ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ հստակ արտահայտված է մոր ազդեցությունը: Նրանց անհրաժեշտ է ադդիկտիվ վարքից ազատվելու հրաման, որը համարժեք է մորը թողնելու և իր ձևով ապրելու հրահանգին: Ապագա հարբեցողները կամ թմրամոլները մանկության տարիներին չեն ունեցել

իսկական առնական մոդել, այսինքն հայր, որը բացակայել է կամ վատ մոդել է եղել: Այդ հանգամանքը նպաստել է որպեսզի ոչ լիարժեք նույնացում կատարվի հոր հետ և մեծացրել են կախվածության պահանջմունքը, այսինքն ենթագիտակցորեն ձևավորվում է տվյալ սեռի թուլության զգացում **[17, էջ 53]**:

Այսպիսով, հոգեվերլուծական դպրոցի ներկայացուցիչները նշում են դեռահասի կողմից հոգեակտիվ նյութեր օգտագործման կենսաբանական բնույթը, իսկ սոցիալական և միկրոազդեցությունը անտեսում են:

Համաձայն Կ.Ռոջերսի հումանիստական տեսության, անձի կենտրոնական հասկացությունը իրական «ես ն է», այսինքն այն պատկերացումները, որը մարդը ունի իր սեփական պահանջմունքների, դիրքորոշումների, մոտիվների մասին: Մի կողմից, մարդը ձգտում է իր ապրումները համապատասխանեցնել դրանց: Մյուս կողմից, նա փորձում է իր մասին պատկերացումները մոտեցնել իդեալական «ես-» պատկերացումներին, բայց արտաքին հանգամանքների կամ իրական «ես-ը» իդեալական «ես-ից» բաժանող պահանջմունքների, դիրքորոշումների ճնշման տակ այդ համապատասխանեցումը կարող է չլինել, որի արդյունքում առաջ է գալիս սոցիալական տհասություն, որը նպաստում է ադդիկտիվ վարքի ձևավորմանը **[113, 41-65էջ]**:

Վ.Ֆրանկլը գտնում է, որ էկզիստենցիալ նևրոզը, այսինքն՝ կյանքի իմաստի բացակայությամբ պայմանավորված հուսահատությունը, բարոյական կոնֆլիկտների և արժեքային կոնֆլիկտների առկայությունը, դեռահասի մոտ ադդիկտիվ վարքի ձևավորման կարևոր գործոն է:

Հետաքրքիր է Ա.Մենեգետտիի օնտոհոգեբանական տեսությունը, որտեղ ադդիկտիվ վարքով անհատը արդեն հոգեբանորեն ադդիկտ է, այսինքն ադդիկտիվ վարքը հանդիսանում է ոչ թե պատճառ, այլ անձի խանգարման հետևանք **[92]**:

Ե. Զմանովսկայան ևս նշում է, որ էկզիստենցիալ ֆրուստրացիան և էկզիստենցիալ վակուումը կարող են նպաստել դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորմանը:

Կյանքի իմաստի որոնման ֆրուստրացված պահանջմունքը կարող է փոխհատուցվել դեստրուկտիվ վարքով, բայց էկզիստենցիալիզմը չի բացատրում, օրինակ պարզունակ մտածողության ձևերով օլիգոֆրենների կողմից հոգեակտիվ

նյութերի չարաշահման փաստը **[59; 60]:**

Ռուս գիտնականներ Վ.Յալտոնսկին և Ն.Սիրոտան դեռահասի կողմից հոգեակտիվ նյութերի օգտագործումը դիտարկում են որպես նույնականացման ճգնաժամի դրսևորում: Ադդիկտիվ վարքի միջոցով դեռահասները փնտրում են սեփական ես-ի արտաքին սահմանները, թուլացնում ճգնաժամին ուղեկցող սթրեսը: Չձևավորված էգո- նույնության պատճառով նրանք հեշտ են տրվում անբարենպաստ ազդեցություններին **[141, էջ 41-43]**:

Հետաքրքիր է նաև Գրոֆի այն պնդումը, որ ադդիկտիվ վարքը ունի ներարգանդային արմատներ, մասնավորապես նորածնի՝ ծննդյան պահի ապրումները: Որոշակի նյութեր, որոնք օգտագործվում են մոր ցավերը մեղմելու համար, սովորեցնում են նորածնին տվյալ նյութի կիրառումից առաջ եկած վիճակը դարձնել ցավից, ծանր ապրումներից ազատվելու միջոց **[38; 39; էջ 65; 98, էջ 8-35]**:

Ինքնակործանող միտումները ևս կարող են խորանալ նորածնության և մանկական անբարենպաստ իրադարձություններով և հետագայում դրսևորվել ադդիկտիվ վարքի միջոցով, որպես «հոգեկան ճգնաժամի» կամ «ձևափոխման ճգնաժամի» յուրահատուկ ձև **[43; 44; 127, էջ 9-13]**:

Վ.Մենդելևիչը, Ռ.Սամիգինը գտնում են, որ ադդիկտիվ վարքը օգնում է դեռահասներին մանիպուլյացիայի ենթարկել շրջապատող մարդկանց զգացմունքները և գործողությունները **[89; 117]**:

Հետազոտողների մեծամասնությունը քննարկում է նաև ադդիկտիվ վարքի մոտիվացիայի խնդիրը: Մասնավորապես, Վ.Զավյալովը ընդգծում է վարքի գերակտիվացումը, որը արտահայտնվում է «պարապությունից, ձանձրույթից պաշտպանվելով»: Նա գտնում է, որ խմբի կողմից ճնշումը, անվստահությունը սեփական ուժերին, նոր զգացողությունների ծարավը առաջացնում են դրդապատճառների լայն խումբ, որը բացահայտում է դեռահասների ադդիկտիվ վարքի տարբեր առանձնահատկություններ **[50, էջ 102–111]:**

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Ս.Ռուբինշտեյնի մոտեցումը, որտեղ վարքը դա կազմակերպված գործունեության հատուկ ձև է, որն ապահովում է արտաքին միջավայրի և օրգանիզմի միջև կապը դրդապատատճառների

բավարարման միջոցով, որոնք էլ իրենց հերթին ամրապնդվում են և վերածվում անձի բնութագրիչ գծի, ըստ այն բանի, թե որքանով են որոշում տվյալ անձի գործունեության ձևը **[115, էջ 328]**:

Ակտիվ վարքը այստեղ կարելի է սահմանել որպես կեղծ առարկայացված պահանջմունք, իսկ նրա ձևավորման մեխանիզմը՝ որպես դրդապատճառի մոտեցում նպատակին:

Տիրապետող դրդապատճառ է դառնում առարկայի որոնումը, որը կբավարարի պահանջմունքը և ներքին լարվածությունը կթուլացնի, որի արդյունքում անձի ողջ մտավոր ոլորտը վերակառուցվում է՝ համապատասխան առաջատար դրդապատճառի:

Ըստ Բ.Անանևի սահմանման, անձի վարքը դա սոցիալական գործունեության տեսակ է: Անձի վարքում գոյություն ունի մարդկանց և միջանձնային հարաբերությունների մասին տեղեկությունների միջև կապ, ինչպես նաև հաղորդակցման և ինքնակառավարման միջև, որոնք իրենց արտացոլումն են գտնում անձի ներաշխարհի կառուցման գործընթացում: Ինչպես գիտենք, ըստ Դ.Էլկոնինի դեռահասության տարիքի առաջատար գործունեությունը շփումն է հասակակիցների հետ, որի պակասը կարող է փոխհատուցվել ադդիկտիվ վարքով: Այն կարող է մտնել անձի ես-կոնցեպցիայի կառուցվածքի մեջ, որպես ինքնուրույն կերպար, իսկ հետո ազդել վարքի վրա **[6, էջ 10-65; 7]:**

Հարկ է նշել, որ վերջին տարիներին կտրուկ մեծացել է այն հետազոտությունների թիվը, որոնք նպատակաուղղված են դեռահասի ադդիկտիվ վարքի ուսումնասիրությանը, հատկապես ռիսկի խմբի առանձնացմանը [Աբաշիխովա Ու., Սիրոտա Ն., Ավերինա Ե., Բաբրովա Տ., Եգոզինա Վ., Զավյալով Վ., Կաչալով Վ., Կռոնիկ Ա., Լիսեցկի Կ., Նազարով Ե., Նովիկովա Վ., Ադինցովա Տ., Բադալևա Ա, Պոլյակովա Ն., Ռոջերս Կ., Սիդորով Պ., Սմիրնով Ո., Սոբչիկ Լ., և այլոք]:

Բացահայտելով ռիսկը պայմանավորող գործոնները, նրանք փորձում են առանձնացնել հենց ռիսկի խումբը: Ընդհանրացնելով տարբեր հետազոտողների կարծիքները, կարող ենք նշել ռիսկային խմբի ախտորոշման հետևյալ չափանիշները.

- հոգեսոցիալական դեզադապտացիա;
- դեվիանտ վարք;

- նարկոլոգիական ժառանգականություն;
- ընտանիքի կառուցվածքի և գործառույթի խանգարում, ընտանիքում ադդիկցիայի սոցիալական նախադրյալներ;
- հուզական և հոգեսոցիալական ուշ հասունություն;
- հոգեակտիվ նյութերի օգտագործում վաղ տարիքում և այլն:

Ակնհայտ է, որ դեռահասի ադդիկտիվ վարքը տարաբնույթ սոցիալական, հոգեբանական, կենսաբանական գործոնների փոխազդեցության արդյունք է:

Դրա ապացույցն է այն, որ հետազոտողների մեծամասնությունը նշում են դեռահասների տարիքային առանձնահատկությունների կարևորությունը անկախ տեսական հիմքերից **[10 էջ 10-65; 8, էջ 163; 33, էջ 77-85; 74, էջ 38-95; 98, էջ 8-35; 105, էջ 402; 110, էջ 50-58]:**

Հետաքրքիր է Ա.Գոգոլևայի կողմից առաջադրված ռիսկի խմբի գործոնները: Դեռահասների ադդիկտիվ վարքի բնույթի և մոտիվացիայի ուսումնասիրության տեսակետների բազմազանությունը առաջ է բերում դեռահասների սոցիալ-հոգեբանական և անձնային առանձնահատկությունների ուսումնասիրման անհրաժեշտության **[46, էջ 80-98; 100, էջ 26-46]:**

Ա.Գոգոլևան առանձնացնում է սոցիալական դեզադապտացիայի հետևյալ պատճառները.

- դպրոցական դեզադապտացիան;
- անձնային առանձնահատկությունները;
- սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիկ բնույթի պատճառները;
- ասոցիալ ընտանիքը **[41, էջ 80-98]:**

Ըստ Լ.Շիպիցինայի, ռիսկի գործոն հանդիսանում է գերակտիվությունը համակցված ուշադրության պակասի սինդրոմի հետ, որը բնութագրվում է գրգռվածությամբ, իմպուլսիվությամբ, ցածր ֆրուստրացիոն տոլերանտությամբ:

Նշված հիմնախնդիրը առավել լիարժեք ուսումնասիրված են Ն.Սիրոտայի աշխատություններում **[120, 121]:** Հեղինակը ուսումնասիրելով դեռահասների հակազդման առանձնահատկությունները նշում է, որ նրանց բնութագրական են անկայունությունը, ոչ լրիվ ձևավորվածությունը և կախվածությունը ռեֆերենտային

խմբից: Այդ դեռահասներին բնորոշ է ձգտումը տվյալ խմբում լինել նորմատիվային, խրախուսվել խմբի անդամների կողմից, ազատվել հուզական լարվածությունից՝ վարքի միջոցով: Ադդիկտիվ վարքով դեռահասները հակված են պսիխոպաթանման հակազդման ձևերին: Հեղինակի կարծիքով այդպիսի դեռահասների միջանձնային շփումը պայմանավորված է շրջապատի գնահատականից խուսափելու միտումով, քանի որ նրանց մոտ ձևավորված չէ հարաբերությունների գնահատման համարժեք ընդունակություն, բացակայում են դրանք վերլուծելու ձգտումը:

Ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ բացակայում է նաև կոնֆլիկտային իրավիճակները լուծելու կարողությունը:

Ըստ է Խ. Ֆրիդմենի՝ դեռահասների ադդիկտիվ վարքը պայմանավորված է սոցիալական աջակցման բացակայությամբ, կամ ոչ ադեկվատ աջակցությամբ **[145]:**

Վերոնշյալը ուրվագծում է դեռահասային դեզադապտացիայի պատկերը: Բայց անհասկանալի է մնում ադդիկցիաներով դեռահասների և դեվիանտ վարքի այլ ձևերով դեռահասների առանձնահատկությունների տարբերությունները: Բացահայտված չեն նաև դեռահասների ադդիկտիվ վարք ձևավորման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները:

Այդ տեսակետից ուշագրավ են Վ.Կաչալովի, Ս.Բերեզինի, Ա.Բորոխովի, Ա.Իսաևայի աշխատությունները, որտեղ հեղինակների կողմից ուսումնասիրվել են դեռահասության տարիքում ադդիկտիվ վարքի ձևավորման գործընթացում սոցիալական ազդեցությունը միջնորդավորող ինտերակտիվ մեխանիզմները [16; 23; 65; 182, էջ 115-124]: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորման վրա սոցիալական ազդեցությունը բնութագրվուն են տվյալ ազդեցության նկատմամբ սուբյեկտի զգայունակության աստիճանով: Բայց տվյալ մոտեցումը ևս ամբողջությամբ չի բացահայտում ադդիկտիվ վարքի ձևավորման մեխանիզմը:

Ա.Խուդյակովը առանձնացնում է ադդիկտիվ վարքի առաջացման երկու տեսակ՝ տրանզիտոր «բարենպաստ» և պրոգրեդիենտ «անբարենպաստ»: Առաջինի դեպքում ադդիկտիվ վարքը դառնում է կոպինգ-վարք, երկրորդի դեպքում՝ ադդիկցիան դառնում է կյանքի նպատակ:

Տ.Տոմիրովը ուսումնասիրելով դեռահասների վարքի ձևերը, առանձնացրել է ադդիկտիվ վարքի հակում ունեցող դեռահասների տիպաբանական առանձնահատկությունների հինգ դասակարգումները: Առաջին դասակարգման դեռահասներին բնութագրական է հակահասարակական հայացքներ, աղավաղված են ընկերության մասին պատկերացումները, թուլացած է ամոթի զգացումը, ագրեսիվ են, կռվարար, անտարբեր են նույնիսկ հարազատների նկատմամբ: Երկրորդ դասակարգման դեռահասներին բնութագրական է իրենց համար նշանակալի մեծահասակներին, հատկապես թմրամոլներին, ընդօրինակելը և ենթարկվելը: Նրանք ճնշում են թույլերին, փորձում հասնել իշխող դիրքին, իմպուլսիվ են, անկայուն, փոփոխական տրամադրությամբ: Երրորդ դասակարգման դեռահասները չնայած հոգեակտիվ նյութերի օգտագործումը ճիշտ չեն համարում, բայց նաև դժվար իրավիճակներում չեն կարողանում դիմակայել գայթակղությանը: Չորրորդ դասակարգումում հեղինակը ընդգրկել է այն դեռահասներին, որոնց բնորոշ է թուլակամությունը, ներշնչվողականությունը, անկայունությունը, անվստահությունը սեփական ուժերին, կասկածամտություն: Հինգերորդ դասակարգումը միավորում է դեռահասներ, որոնք թուլակամ են, ամաչկոտ, հեշտ են տրվում միկրոմիջավայրի տարաբնույթ ասոցիալ ազդեցությանը **[129, էջ 78-92]:**

Վ.Շաբալինայի կարծիքով, ադդիկտիվ վարքի ձևավորման գործընթացում սոցիալական ռիսկի գործոնները կարելի է բաժանել երկու խմբի՝ մակրոսոցիալ և միկրոսոցիալ: Մակրոսոցիալ գործոններն են՝ հոգեակտիվ նյութերի ձեռք բերման մատչելիությունը, հասարակության էթնոմշակութային վերաբերմունքը հոգեակտիվ նյութերի նկատմամբ և այլն: Միկրոսոցիալական գործոններ կարելի է համարել ընտանիքի անբարենպաստ մոդելը, որտեղ հարազատների կողմից օգտագործվում են օրինակ ծխախոտ, ոգելից խմիչքներ, ուսումնական գործընթացում նեգատիվ երևույթներ՝ ցածր առաջադիմություն, վատ հարաբերություններ համադասարանցիների և մանկավարժների հետ **[135]**:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը շարադրվածը, կարելի է եզրակացնել, որ դեռահասների ադդիկտիվ վարքը հետազոտող հեղինակների մեծամասնությունը շեշտը դնում են անձի որակների, առաջատար դրդապատճառի, ներքին լարվածության

ժամանակավոր թուլացման, շրջապատի հետ փոխազդեցության աղավաղված ձևերի որպես ադդիկտիվ վարքի ձևավորման ռիսկի գործոնների ուսումնասիրության վրա: Չի կարելի անտեսել տարիքային ռիսկի գործոնը ադդիկտիվ վարքի ձևավորման մեջ, քանի, որ դեռահասի տարիքային առանձնահատկությունները նրան շատ խոցելի է դարձնում անբարենպաստ ազդեցությունների և կյանքի դժվարությունների հանդեպ: Հաճախ նրանք պատրաստ չեն կյանքի կոշտ պայմաններին, ընդունակ չեն ինքնուրույն ընտրություն կատարելու և պատասխանատվություն կրելու, ինչի պատճառով հաճախ հայտնվում են սթրեսային իրավիճակներում: Չունենալով կյանքի հմտություններ և լարվածությունից ազատվելու արդյունավետ միջոցներ, նրանք հաճախ հակվում են դեպի ադդիկտիվ վարքը: Կարևոր գործոն է հանդիսանում ադդիկտիվ վարքի ձևավորման մեջ նաև ծնողների պատկերացումները դաստիարակության մասին, սպորտային և այլ խմբերի անմատչելիությունը, ցուցադրվող ֆիլմերի և հաղորդաշարերի ցածր որակը, որոնք հանգեցնում են իրական արժեքների աղճատմանը:

Այս ոլորտում կուտակվել է մեծաքանակ փաստացի նյութ, բայց և այնպես դրանք հնարավորություն չեն ընձեռում բացահայտել և հասկանալ դեռահասության տարիքում ադդիկտիվ վարքի ձևավորման մեխանիզմները:

ԳԼՈՒԽ 2. ԱԴԴԻԿՏԻՎ ՎԱՐՔՈՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2.1. Դեռահասների հոգեկան զարգացման հիմնական մեխանիզմները

Անձի զարգացման փուլը 10-11-ից մինչև 14-16 տարեկանը, ըստ մեր աղբյուրների, ավանդաբար կոչվում է դեռահասություն, ինչպես նաև անցումային, ճգնաժամային տարիք: Այս փուլում «ճգնաժամ» է ապրում դեռահասի ողջ օրգանիզմը, վերափոխվում են մարմինը և արտաքինը, մեծ փոփոխությունների է ենթարկվում հոգեկան աշխարհը: Դեռահասությունը մարդու կյանքում մի շրջան է, երբ նա խնդիր ունի հրաժեշտ տալու իր մանկական մարմնին, մանկական հուզական կապվածության առարկաներին և օբյեկտներին: Դեռահասը փորձեր է անում մեծահասակին բնորոշ հասուն հարաբերություններ ստեղծել շրջապատի հետ, որը ծնում է հոգեկան մեծ լարվածություն: Դեռահասության տարիքի հիմնական խնդիրները՝ ծնողներից ինքնավարության և անկախության ձեռք բերում, խմբավորման ձգտում, որը կբավարարի սերտ անձնային շփման պահանջմունքը, նույնականացման ձևավորում, ամբողջական Ես-ի ստեղծում, որը ներդաշնակորեն կամբողջացնի տարբեր անձնային ասպեկտներ, ինքնագիտակցության արագ զարգացում, բնավորության ձևավորում, ինքնահաստատման ձգտում, բարձր հուզականություն և այլն, հետազոտվել են շատ հայտնի հոգեբանների կողմից:

Դեռահասության հիմնախնդիրներին նվիրված աշխատություններից հարկ ենք համարում առանձնացնել Լ.Օբուխովայի, Լ.Սեմչուկի, Գ.Աբրամովայի, Ի.Կոնի, Ի. Կուլագինայի, Վ.Մուխինայի, Ի.Նոսկոյի աշխատությունները՝ որպես առավել ընդգրկուն և ամփոփ նյութեր:

Մասնավորապես, հենվելով իր կողմից մշակված ռեկապիտուլյացիայի տեսության վրա, Ս.Հոլլը ենթադրեց, որ դեռահասության փուլը անձի զարգացման գործընթացում համապատասխանում է ռոմանտիզմի դարաշրջանին ըստ մարդկության զարգացման պատմության և վերարտադրում է քաոսի դարաշրջանը, երբ մարդու բնական մղումները բախվում են սոցիալական կյանքի պահանջմունքների հետ **[100; 138, էջ**

200-314; 144]: Հեղինակը նաև նշում է, որ դեռահասության շրջանի ամենաբնութագրական գիծը վարքի հակասականությունն է: Այն դրսևորվում է հետևյալ կերպ՝ անզուսպ ուրախությունը կարող է փոխարինվել թախիծով, ինքնավստահությունը՝ անվստահությամբ, եսասիրությունը՝ այլասիրությամբ, ինտենսիվ շփումը՝ ինքնանփոփությամբ, հետաքրքրությունը՝ անտարբերությամբ:

Ավելին, Ս.Հոլլը դեռահասության շրջանը բնութագրեց նաև որպես ճգնաժամային: Այդ շրջանի բացասական ճգնաժամային երևույթները անձի օնտոգենեզում նա բնութագրեց որպես անցումային՝ ելնելով զարգացման գործընթացի կենսաբանական պայմանավորվածությունից, քանի որ դեռահասության շրջանում երեխայի ֆիզիկական զարգացման ոլորտում տեղի են ունենում վերակառուցումներ: Դրանք այնքան նշանակալի են, որ բնութագրվում են որպես «հորմոնալ փոթորիկ», հասակի թռիչք և այլն: Օրգանիզմի վերակառուցումները կատարվում են բոլոր ուղղություններով. հասակը ինտենսիվ աճում է, ավելանում է մարմնի զանգվածը. մկանային ուժը, զարգանում է սիրտ-անոթային, շնչառական և այլ համակարգերը **[120; 121; 144; 148; 105, էջ 304]:**

Հայտնի փաստ է, որ դեռահասության շրջանը սեռական հասունացման սկիզբն է: Դեռահասի օրգանիզմում տեղի ունեցող մորֆոֆունկցիոնալ փոփոխությունները առաջ են բերում հետաքրքրություն հակառակ սեռի նկատմամբ: Բազմաթիվ հետազոտություններ ապացուցում են, որ սեռական զարգացման առաջին դրսևորումները կարող են պատճառ դառնալ ապրումների, հիմքում ունենալով հասակակիցներից տարբերվելու անհանգստությունը: Հասակը, արտաքինը և քաշը կարող են դեռահասի համար տագնապի լուրջ աղբյուր դառնալ: Ինտենսիվ աճի և ֆիզիոիլոգիական փոփոխությունների ընթացքում դեռահասի մոտ կարող է առաջանալ դեպրեսիա, տագնապ, նյարդայնություն և այլն **[1; 25; 54; 55; 121; 144; 148; 105, էջ 304]:**

Նա կարող է մեծ անհագստություն ապրել վաղ կամ ուշ հասունացման, իդեալից ցանկացած շեղման առիթով: Շատ դեռահասներ հիվանդագին զգայուն են սեփական արտաքինի նկատմամբ: Սովորաբար, տղաները մտահոգված են լինում իրենց ցածր հասակով և թույլ ֆիզիկական ուժով, իսկ աղջիկները իրենց բարձր

հասակով և քաշով: Դրա հետ մեկտեղ, օրգանիզմի ֆիզիոլոգիական փոփոխությունները ուղղակիորեն չեն կարող կապվել դեռահասի հոգեբանական զարգացման հետ: Այդ փոփոխությունները ունեն միջնորդավորված բնույթ, բեկվում են այլ մարդկանց հետ ունեցած հարաբերություններին և մյուսների հետ համեմատվելու միջոցով: Դեռահասի բնածին առանձնահատկությունները կազմում են նրա զարգացման նախադրյալների միայն մի մասը և չեն կարող որոշել զարգացման ողջ ընթացքը և արդյունքները:

Այդ գործընթացում կարևորվում է նաև սոցիալմշակութային դետերմինանտը, որն առաջին պլանի վրա է մղում դեռահասության տարիքն ուսումնասիրող մշակութային տեսությունները:

Ըստ Վ.Շտերնի, դեռահասության տարիքը հանդիսանում է մանկական խաղի և մեծահասակի լուրջ, պատասխանատու գործունեության միջանկյալ **[120; 121; 144]:**

Է. Շպրանգերը դեռահասության շրջանը դիտարկում է մշակութային–հոգևոր կոնտեքսում: Դեռահասության շրջանի զարգացման առանձնահատկությունները մեկնաբանվում է՝ ելնելով անհատի զարգացման ներքին օրինաչափություններից, այն անհատի, որը ներգրավված է որոշակի մշակույթի և պատմության մեջ: Ըստ Շպրանգերի, դեռահասության շրջանի բովանդակությունը կազմում է անձի ինտեգրումը մշակույթին, տվյալ ժամանակաշրջանի ոգուն: Իսկ դեռահասության շրջանի նորագոյացումը ես-ի բացահայտումն է, սեփական անհատական գիտակցումը, ռեֆլեքսիայի ծագումը **[86;100; 121; 116; 119]:**

Լ.Վիգոտսկին նույնպես նշում է դեռահասության շրջանի համար երկու նորագոյացություն: Դա ռեֆլեքսիայի զարգացումն է, որի հիման վրա նաև՝ ինքնագիտակցությունը: Ռեֆլեքսիայի զարգացումը չի սահմանափակվում միայն անձի ներքին փոփոխություններով, իսկ ինքնագիտակցության զարգացումը դեռահասի համար հնարավոր է դարձնում նաև այլ մարդկանց հասկանալը: **[34; 35; 100; 59; 60, էջ 250-300; 116]:**

Լ. Օբուխովան նկարագրել է Է.Շպրանգերի կողմից ներկայացված դեռահասի հասուն կյանքի անցման երեք տիպ, որտեղ առաջին տիպը բնութագրվում է կտրուկ բուռն ճգնաժամային ընթացքով, որի արդյունքում ծնվում է նոր ես: Երկրորդ տիպը դա

սահուն, դանդաղ աստիճանական աճ է, երբ դեռահասը շփվում է հասուն կյանքի հետ՝ առանց սեփական անձի մեջ լուրջ տեղաշարժերի: Երրորդ տիպի զարգացման գործընթացում դեռահասները կամային հատկանիշների շնորհիվ հաղթահարում են տարիքային ճգնաժամը **[100]:**

Ժ.Պիաժեի կարծիքով, դեռահասության շրջանում վերջնական ձևավորվում է անձը և կառուցվում է կյանքի ծրագիրը:

Վ.Դավիդովը որպես առաջատար գործունեություն դեռահասի համար նշում է հասարակականորեն նշանակալի գործունեությունը, որն իր մեջ ներառում է աշխատանքային, ուսումնական, հասարակական-կազմակերպչական, սպորտային և գեղարվեստական տեսակները **[45, էջ 40-95]:**

Գիտակցելով սեփական մասնակցության նշանակալիությունը գործունեության նշված տեսակներին, դեռահասները համագործակցում են միմյանց հետ, զարգացնում հաղորդակցման կարողությունները: Տվյալ գործունեությունը նպաստում է հասակակիցների և մեծահասակների հետ շփման պահանջմունքների բավարարմանը, մեծահասակների կողմից ճանաչում ձեռք բերելու, ինքնուրույնությունը, ինքնահարգանքին և ինքնահաստատմանը **[100; 101]:**

Շ.Բյուլերը դեռահասության փուլում առանձնացնում է նեգատիվ և պոզիտիվ շրջաններ: Նեգատիվ շրջանի հիմնական բնութագիրը նախկին հետաքրքրությունների կորուստն է, սկսում է ի հայտ գալ սեռական մղումը, ինչն էլ պայմանավորում է այս շրջանի բացասական ախտանշանները (տագնապայնությունը, ագրեսիվությունը, լարվածությունը, նեգատիվիզմը և այլն): Պոզիտիվ շրջանը բնութագրվում է նոր արժեքների հետաքրքրությունների ի հայտ գալով, որի հետևանքով դեռահասը ձգտում է մտերմիկ հարաբերությունների, արթնանում է սիրո զգացմունքը **[100; 144]:**

Ի.Նոսկոն իր աշխատությունում մեկնաբանում է Մ.Միդի մշակութային–անտրոպոլոգիական հետազոտությունը, որտեղ հեղինակը վեր է հանել դեռահասի զարգացման գործընթացում մշակութային գործոնի նշանակալի ազդեցությունը: Ըստ հեղինակի, կենսաբանական զարգացումը օնտոգենեզում իրենից ներկայացնում է հաստատուն գործոն և ընթանում է ամեն տեղ միատեսակ, բայց տարբեր մշակույթի դեռահասները հոգեբանորեն տարբերվում են միմյանցից: Օրինակ, Սամոա կղզու

երեխաների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տվյալ աբորիգենների դեռահասության շրջանում կոնֆլիկտները և ճգնաժամերը բացակայում են, տագնապները և սթրեսները նրանց անծանոթ են: Ճիշտ հակառակը՝ այդ շրջանը նրանց մոտ անցնում է անհոգ և սահուն **[99]:**

Ռուս գիտնական Լ.Վիգոտսկին ուսումնասիրել է դեռահասի հետաքրքրություններ հիմնախնդիրը՝ այն համարելով հիմնաքար այդ շրջանի հոգեկան զարգացման համար, քանի որ այստեղ տեղի է ունենում նախկին հետաքրքրությունների մահացում և նորերի առաջացում **[34; 35; 100]:**

Լ.Վիգոտսկին ներկայացնում է դեռահասի դոմինանտ հետաքրքրությունների հիմնական մի քանի խումբ: Դրանք են «էգոցենտրիկ դոմինանտ» - դեռահասի հետաքրքրությունը սեփական անձի նկատմամբ, «հեռավոր դոմինանտ» - դրանք ավելի հեռանկարային, գլոբալ և դեռահասի համար ավելի ընդունելի քան ներկա ընթացիկ հետաքրքրություններն են, «ջանքերի դոմինանտ» - դեռահասի ձգտումն է դիմադրության, հաղթահարման, կամային ջանքերի նկատմամբ, որոնք դրսևորվում են տարբեր նեգատիվ երևույթներով, «ռոմանտիկայի դոմինանտ» - դեռահասի ձգտումն է անհայտին, արկածներին, հերոսությանը: Լ.Վիգոտսկիի կարծիքով այս տարիքում էական փոփոխություններ են կատարվում նաև երևակայության ոլորտում, քանի որ առաջին պլան են մղվում այն ֆանտազիաները և երազանքները, որոնք գաղտնի են պահվում, դառնում մտածողության սուբյեկտիվ ձևեր, մտածողություն՝ բացառապես միայն իր համար: **[34; 100]:**

Մ.Կլեն նշում է զարգացման գործընթացի հասարակական պայմանավորվածությունը և առաջ է քաշում «զարգացման խնդիր» հասկացությունը **[57]:**

Զարգացման խնդիրը դեռահասության տարիքում ձևավորվում է չորս հիմնական ոլորտներում. մարմին, մտածողություն, սոցիալական կյանք, ինքնագիտակցություն:

Համեմատաբար կարճ ժամանակահատվածում դեռահասի մարմինը ենթարկվում է նշանակալի փոփոխությունների: Դա առաջ է բերում զարգացման երկու հիմնական խնդիր. ես-ի մարմնային կերպարի վերանորոգում և կանացի ու առնական ինքնությունների կառուցում, աստիճանական անցում հասուն սեռականության:

Դեռահասի մտավոր ոլորտը բնութագրվում է քանակական և որակական

փոփոխություններով, որոնք դեռահասի ճանաչողությունը տարբերում են երեխայի աշխարհաճանաչման միջոցներից: Կոգնիտիվ ընդունակությունների կայացումը նշվում է երկու հիմնական ձեռքբերումներով. աբստրակտ մտածողության զարգացմամբ, ժամանակային հեռանկարների ընդլայնումով:

Հայտնի փաստ է, որ դեռահասության շրջանում ընտանիքի գերակշռող ազդեցությունը աստիճանաբար փոխարինվում է հասակակիցների խմբի ազդեցությամբ, որը դառնում է վարքի ռեֆերենտային նորմերի և որոշակի կարգավիճակ ստանալու աղբյուր: Այդ փոփոխությունները ընդանում են երկու ուղղությամբ, որոնք էլ իրենց հերթին առաջ են բերում զարգացման երկու խնդիր: Առաջինը՝ ծնողների խնամքից ազատվելը և երկրորդը աստիճանաբար հասակակիցների խմբում ներգրավվելը:

Ի.Նոսկոն, Լ.Օբուխովան, Վ.Մուխինան նշում են դեռահասի հոգեսոցիալ ինքնության կայացումը, որն ընկած է ինքնագիտակցության երևույթի հիմքում ներառում է զարգացման երեք հիմնական խնդիր՝ սեփական ես-ի գիտակցում ժամանակի մեջ՝ ներառյալ մանկական անցյալը և ապագան, սեփական անձի գիտակցում որպես ներքնայնացված ծնողական կերպարներից տարբերվող կերպար, ընտրությունների կատարում, որոնք ամբողջական են դարձնում անձը, օրինակ մասնագիտական ընտրություն **[93; 99; 100]:**

Հարկ է նշել, որ թեպետ Մ.Կլեի կողմից դեռահասության շրջանը վերլուծվել է բազմակողմանի, այնուամենայնիվ, նրա աշխատանքներում առանձնացված չեն դեռահասության և պատանեկության շրջանների զարգացումը, ինչպես նաև զարգացման գործընթացը ըստ ոլորտների դիտարկելը չի բացահայտում զարգացման ճգնաժամի էությունը, որին կարելի է հասնել բացահայտելով միայն զարգացման ներքին ուժերը և փոփոխությունները **[57; 100]:**

Այդ առումով Լ.Վիգոտսկին առաջինն է նշել ինքնագիտակցությունը որպես դեռահասության շրջանի կենտրոնական նորագոյացություն: Լ.Բոժովիչը նույնպես նշել է, որ դեռահասության տարիքի ճգնաժամը կապված՝ ինքնագիտակցության զարգացման մակարդակի հետ, որը բնութագրվում է դեռահասի մոտ իրեն որպես անձ ճանաչելու ընդունակության և պահանջմունքի զարգացմամբ: Դա նրանց մոտ առաջ է բե-

ում ինքնաարտահայտման, ինքնահաստատման և ինքնադաստիարակման ձգտում, որի խոչընդոտումը դառնում է դեռահասության տարիքի ճգնաժամի հիմքը **[22; 34; 59; 79, էջ 8-35; 100; 116]:**

Տ.Դրագունովայի կողմից ևս ուսումնասիրվել է չափահասության զգացումը որպես ինքնագիտակցության բաղադրիչ: Տ.Դրագունովայի կարծիքով չափահասության զգացումն արտահայտում է մարդկանց և աշխարհի նկատմամբ դեռահասի նոր կենսական դիրքորոշումը, որոշում է նրա սոցիալական ակտիվության ուղղվածությունը, ապրումները, աֆեկտիվ հակազդումները **[46, էջ 36-74]:**

Դեռահասների յուրատեսակ սոցիալական ակտիվությունը դրսևորվում է մեծահասակների խմբում և հարաբերություններում տեղ գտած արժեքների և նորմերի, վարքի ձևեի յուրացմամբ: Գիտակցելով իրեն որպես մարդ, որն արդեն երեխա չէ, դեռահասը մանկական նորմերից անցում է կատարում մեծահասակների նորմերին:

Նա սահմանափակում է մեծահասակների իրավունքները, իսկ իրենը ընդլայնում է, հավակնում հասուն մարդուն արժանի հարգանքի, վստահության, ճանաչման և իրավունքների:

Դ.Էլկոնինը ենթադրում է, որ դեռահասության տարիքը ուղեկցվում է մեծահասակության զգացումով և հասունության միտումներով **[100; 60, էջ 250-300; 138]:** Հասունության զգացումը, որպես սեփական անձի նկատմամբ վերաբերմունք դրսևորվում է այն բանում, որ դեռահասը համառորեն ձգտում է, որ իրեն վերաբերվեն որպես մեծահասակի, այսինքն հարգանքի, վստահության, մարդկային արժանապատվության ճանաչում և որոշակի ինքնուրույնության իրավունքի: Հասունության զգացման կարևոր չափանիշ է, հեղինակի կարծիքով, դեռահասի կողմից որոշակի հայացքների, վարքի որոշակի ձևերի, գնահատականների պնդումը՝ անկախ մեծահասակների և հասակակիցների անհամաձայնությունից: Մեծահասակների կողմից այդ պահանջմունքների չբավարարումը բերում է ըմբոստության տարբեր ձևերի՝ կոպտություն, համառություն, հակադրվելու ցանկություն, կոնֆլիկտներ:

Չափահասության միտումը դա ձգտումն է լինել, երևալ և համարվել մեծահասակ, որն ի հայտ է գալիս մեծահասակների և հասակակիցների հետ շփվելիս, մեծահասակների արտաքինի և վարքի տարբեր ձևեր ընդհորինակելիս:

Դեռահասի համար կարևոր է շրջապատի կողմից սեփական անձի ընդունումը որպես մեծահասակի: Մեծահասակների հետ շփումից անբավարարվածությունը արտահայտվում է վիրավորանքներում, ըմբոստության տարբեր ձևերում **[98, էջ 8-35; 100; 121, էջ 63-74]:**

Կ.Լևինը դեռահասության կարևորագույն բնութագիրն է համարում կենսագործունեության դաշտի ընդարձակումը: Ըստ նրա մոտեցման այս տարիքի հիմնական պրոբլեմները պայմանավորված են դեռահասի մարգինալ կարգավիճակով՝ նա ոչ երեխա է և ոչ էլ մեծ, անորոշ վիճակում է, ինչն էլ ներքին հակասությունների, ոչ ադեկվատ վարքի, մի ծայրահեղությունից մյուսի մեջ հայտնվելու, անինքնավստահության պատճառ է դառնում **[72; 79, էջ 8-35; 99, էջ 440-460, 100; 119]:**

Այսպիսով, վերլուծելով հոգեբանական հետազոտությունները, կարելի է դեռահասության ճգնաժամի մասին պատկերացումները համակարգել հետևյալ կերպ: Ճգնաժամի էությունը անձի ներքին հակասություններն են՝ իր անձի մասին պատկերացումներում և ինքնագիտակցության մեջ: Ինքնագիտակցության նոր մակարդակի ձևավորումը կապված է ուսումնական գործընթացում տեսական մտածողության զարգացման հետ: Տեսական մտածողությունը թույլ է տալիս ձևավորել նոր իմացական հետաքրքրություններ, առաջ է բերում ներքին ռեֆլեքսիա, նախադրյալներ է ստեղծում շրջապատի հետ հարաբերությունների վերանայման: Ժ.Պիաժեի կարծիքով դեռահասի իմացական զարգացումը բնութագրվում է ձևական ինտելեկտի կայացմամբ, որը հնարավորություն է տալիս համեմատել իրականությունը այն իրադարձությունների հետ, որոնք կարող են տեղի ունենալ: Դեռահասը ընդունակ է դառնում վարկածներ առաջադրելու, ստուգելու և գնահատելու **[93; 99; 100]:**

Վ.Մուխինան, Լ.Օբուխովան, Լ.Սեմչուկը, Ի.Նոսկոն մատնանշում են, որ նոր մտավոր հնարավորությունները ընդլայնում են նաև դեռահասի ներքին կյանքի սահմանները. նրա կյանքը լցվում է վարկածներով իր շրջապատի և աշխարհի մասին, որոնք դուրս են գալիս անմիջական ընկալումների սահմաններից և հիմք են դառնում սեփական հնարավորությունների փորձարկման համար: Ինչպես նշում է Լ.Վիգոտսկին, այս տարիքում էական փոփոխություններ են կատարվում նաև

երևակայության ոլորտում, քանի որ առաջին պլան են մղվում այն ֆանտազիաները և երազանքները, որոնք գաղտնի են պահվում, դառնում մտածողության սուբյեկտիվ ձևեր, մտածողություն՝ բացառապես միայն իր համար **[59; 60;93; 100]:**

Դրա հետ մեկտեղ ճգնաժամի փուլում դեռահասը անկախ է դառնում իր գիտելքներում և հմտություններում, ընդհուպ մինչև համառորեն պնդելը «ես գիտեմ»: Միաժամանակ դեռահասը քննադատաբար չի վերաբերվում իր գիտելիքների և հմտությունների ծավալին, քանի որ կուտակված փորձը նրան ներշնչում է, որ ինքը պատրաստ է ամբողջ կյանքի համար: Այստեղից էլ ծնվում է ազատության և անկախության պահանջը: Ուսումնական գործունեության գործընթացում դեռահասի մեջ ձևավորվում է նաև ինքնաճանաչման ընդունակություն: Սեփական ես-ի բացահայտումը մարդկային հարաբերություններում, իր տեղի և դերի որոնումը այն հիմնական իրադարձություններն են, որոնցով սկսվում է դրսևորվել ճգնաժամը: Սեփական ես-ի բացահայտումը և գիտակցումը եղել է, բայց դեռահասը դեռևս չգիտե, թե ինչ է իրենից ներկայացնում այդ ես-ը, որն է աշխարհում նրա տեղը: Այստեղից ծնվում է սեփական ֆիզիկական, մտավոր և սոցիալական հնարավորությունների հաստատման ձգտումը: Այն կարող է հաճախ ընդունել նյարդային կամակոր, կոնֆլիկտային ձևեր: Մեծանում է դեռահասի և ծնողների միջև եղած հուզական հագեբանական տարածությունը, դեռահասը ձգտում է անկախության, սեփական դատողությունների իրականացման, ինքնակառավարման **[1; 34; 35; 99; 100; 116]**:

Շատ հետազոտողներ նշում են սեռային տարբերություններ անկախության ձգտելիս: Աղջիկների մոտ ծնողներից հուզական կախվածությունից ազատվելու ձգտումը ավելի թույլ է արտահայտված, քան տղաների մոտ, քանի որ նրանք հիմնա-կանում համաձայնվում են ծնողների պահանջներին, պահպանում են հուզական կապը ընտանիքի հետ, ձգտում են վերարտադրել ընտանեկան կյանքի բնույթը և կառուցում են իրենց իդեալները համաձայն ծնողական պատկերացումների **[79, էջ 150-211; 98, էջ 8-35; 121; 139; 144; 148; 164; 174]:**

Տղաները ավելի վճռական են տրամադրված ընտանիքի վերահսկողությունից ազատվելու նկատմամբ, որի համար նրանք օգտագործում են հասակակիցների խմբերը, հրաժարվում ընտանեկան նորմերից և փորձում ձեռք բերել ազատություն:

Առաջատար գործունեությունը դեռահասության շրջանում ըստ Դ.Էլկոնինի համարվում է շփումը հասակակիցների հետ: Հետևաբար դեռահասի համար կտրուկ աճում է հասակակիցների խմբի նշանակությունը, որտեղ նրանք կարող են համատեղ քննարկել իրենց կյանքում ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական փոփոխությունները: Այսինքն՝ հասակակիցների շրջապատը մեծ նշանակություն է ձեռք բերում դեռահասի սոցիալական զարգացման գործընթացում, հենց այստեղ է դեռահասը որոշում, թե ով է ինքը և ով է ուզում դառնալ: Նա սկսում է ուշադրությունը սևեռել այն բանի վրա, թե ինչ տեսք ունի ինքը, իր որ գծերն են իրեն հայտնի և ընդունելի դարձնում հասակակիցների խմբում: Այդ խմբերում շփումը հնարավորություն է տալիս սեփական հասունության զգացումը վերածել բառերի, արարքների, ապրումների, դեռահասը ընդունում է այդ խմբի նորմերը և արժեքները: Հասակակիցների խմբերը հնարավորություն են տալիս նրան գիտակցել սեփական ես-ը, սոցիալական դերի միջոցով և միաժամանակ իրականացնել այդ սոցիալական դերը միջանձնային հարաբերություններում **[100; 138]:**

Մինչդեռ, Ա.Բորոխովը, Ա.Գաբիանինը, Վ.Գուլդանը նշում են, որ մյուս կողմից էլ հասակակիցների հանրությունը փորձում է ամբողջովին իրեն ենթարկել դեռահասի ներաշխարհը՝ դառնալով այն տարածությունը, որտեղ դեռահասը կառուցում է իր ես-ը, լրացնում նրա սոցիալ-հոգեբանական բովանդակությունը **[23; 36;37]:**

Լ.Սեմչուկը, Գ.Աբրամովան նշում են, որ դեռահասության շրջանում վերակառուցվում է նաև զարգացման սոցիալական իրադրությունը: Առաջին հերթին, դեռահասը սկսում է իրեն ընկալել որպես կենսական խնդիրների լուծման առաջին պայման, իսկ այդ կենսական խնդիրներից ամենակարևորը շրջապատի մարդկանց հետ հարաբերությունների հաստատումն է: **[1; 116]:**

Մեծահասակների սկզբունքները, կերպարները, գործողությունները յուրացնելու ընդունակությունը դուրս է գալիս դպրոցական առարկաների շրջանակից: Դեռահասի համար նոր ընդունակությունները փորձարկելու ամենամատչելի ոլորտը միջանձնային հարաբերություններն են, որոնք էլ հենց դառնում է ինքնուրույնության դրսևորման միջոց, ընկերների որոնում, կոնֆլիկտներ, հարաբերությունների պարզում և այլն:

Ինչպես նշում է Լ.Օբուխովան, դեռահասության շրջանը կարևորվում է նաև

նրանով, որ մանկությանը բնորոշ փոխհարաբերություններից անցում է կատարվում որակապես նոր՝ մեծահասակներին բնորոշ փոխհարաբերություններին, դեռահասի և մեծահասակի սոցիալական փոխներգործության նոր ձևերի: Հին ձևերը աստիճանաբար դուրս են մղվում դրանց կողմից՝ դեռևս որոշ չափով պահպանվելով, որը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում ինչպես դեռահասի, այնպես էլ մեծահասակի համար **[100]:**

Այդ հարաբերությունների փոփոխության բնույթը, ինչպես նշում է հեղինակը, մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե ով է դրանց նախաձեռնողը: Մեծահասակների նախաձեռնողականության դեպքում դժվարությունները ավելի քիչ են լինում, իսկ երբ նախաձեռնում է դեռահասը՝ կոնֆլիկտների հավանականությունը մեծանում է, սրվում է դեռահասի անկախության պահանջմունքը: Իսկ կոնֆլիկտի բնույթը կախված է արդեն մեծահասակի ռազմավարությունից: Դեռահասը դառնում է վերոնշյալի նախաձեռնող, երբ նրա մոտ ծագում է չափահասության զգացումը, և եթե մեծահասակը չի փոխում իր վերաբերմունքը, ծագում է կոնֆլիկտ, որը կարող է խոչընդոտել դեռահասի անձի զարգացմանը **[1; 121]:**

Ինչպես նշել ենք, Դ.Էլկոնինը ընդգծել է, որ դեռահասության շրջանում առաջատար գործունեությունը հասակակիցների հետ շփումն է, իսկ Դրագունովան ուսումնասիրել է դեռահասի հասունացման ուղղությունները: Այդ ուղղությունները որոշվում են այն կերպարների կամ էտալոնների բնույթով, որոնցով դեռահասը կողմնորոշվում է հասուն գծեր ձեռք բերելիս: Իսկ այդ գործընթացը իրականանում է մեծահասակների և հասակակիցների հետ շփվելու ընթացքում ինքնադաստիարակման և կայացման ճանապարհով **[46; 116; 138, էջ 78-92]:**

Հավասարացնելով իրենց մեծահասկներին, դեռահասները ձգտում են արտաքինով ևս նմանվել նրանց, շփվել նրանց կյանքի և գործունեության տարբեր կողմերի հետ, ձեռք բերել նրանց առանձնահատկությունները, որակները, գիտելիքները, իրավունքները: Ընդ որում, դեռահասը ձգտում է ընդօրինակել մեծահասակների առավել վառ արտայատված գծերը: Տղաները սկսում են զարգացնել իրենց մեջ առնական որակներ, ուժ, քաջություն, համառություն, կամք, պարապում են սպորտով. իսկ աղջիկները ձգտում են ձեռք բերել որոշ կանացի հմտություններ: Այսինքն,

մեծահասակը դառնում է նրանց համար գործունեության օրինակ: Բովանդակությամբ նշանակալի սոցիալական հասունության զարգացումը տեղի է ունենում մեծահասակների հետ գործունեության տարբեր ձևերում համագործակցելիս, երբ դեռահասը հանդես է գալիս որպես մեծահասակի օգնական: Մտավոր հասունությունը արտահայտվում է դեռահասի՝ ինչ-որ բան լիարժեք իմանալու և կարողանալու ձգտման մեջ, որը խթանում է ինքնուրույն ուսումնա-իմացական գործունեության զարգացմանը, որը դուրս է գալիս դպրոցական ծրագրի սահմաններից: Նոր գիտելիքներ ձեռք բերելու պահանջը բավարարվում է ինքնուրույնության, ինքնակրթության միջոցով **[Օբուխովա Լ., Եվդոկիմովա Տ., Կոնդրատևա Ս., Լիչկո Ա., Օվչարենկո Վ., Սիրոտա Ն., Ֆելդշտեյն Դ., Յալտինսկի Վ.]:**

Մեր կողմից կատարված տարբեր հեղինակների և ուղղությունների վերլուծությունը ցույց տվեց, որ դեռահասության շրջանը իրենից ներկայացնում է մի ժամանակահատված, որի ընթացքում մարդը գործ է ունենում իր հոգևոր և ֆիզիկական գոյության հետ կապված բարդ խնդիրների հետ: Սա ժամանակահատված է, երբ, ինչպես նշում է Գ.Աբրամովան, «մարդու հոգին գտնում է իր տեղը այլ մարդկանց շրջանում և սեփական մարմնի մեջ, որն ինտենսիվ փոփոխվելով նոր տուն է ստեղծում զարգացող հոգու համար» **[1]**: Ընդհանրացնելով վերը շարադրվածը, կարող ենք եզրակացնել, որ դեռահասության շրջանի հիմնական առանձնահատկությունները պայմանավորված են դեռահասի անձի ֆիզիկական, կոգնիտիվ, անձնային, սոցիալական, հուզական ոլորտներն ընդգրկող քանակական և որակական փոփոխություններով, որոնք արտաքին ամենատարբեր ազդեցությունների նկատմամբ դեռահասին դարձնում են ավելի խոցելի: Քանի, որ դեռահասությունը մարդու կյանքում մի շրջան է, երբ նա խնդիր ունի հրաժեշտ տալու իր մանկական մարմնին, մանկական հուզական կապվածության առարկաներին և օբյեկտներին, դեռահասը փորձեր է անում մեծահասակին բնորոշ հասուն հարաբերություններ ստեղծել շրջապատի հետ, որը ծնում է հոգեկան մեծ լարվածություն: Դեռահասության տարիքի հիմնական խնդիրները՝ ծնողներից ինքնավարության և անկախության ձեռք բերում, խմբավորման ձգտում, որը կբավարարի սերտ անձնային շփման պահանջմունքը, նույնականացման ձևավորում, ամբողջական Ես-ի ստեղծում, որը

ներդաշնակորեն կամբողջացնի տարբեր անձնային ասպեկտներ, ինքնագիտակցության արագ զարգացում, բնավորության ձևավորում, ինքնահաստատման ձգտում, բարձր հուզականություն և այլն:

2.2 Ադդիկտիվ վարքով դեռահասների սոցիալ-հոգեբանական և անձնային առանձնահատկությունների հիմնական բնութագիրը

Վերը շարադրվածից, կարելի է ենթադրել, որ դեռահասության շրջանը ինչպես ֆիզիոլոգիական գործընթացների, այնպես էլ հոգեսոցիալական ոլորտների առումով խիստ խոցելի է անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ, մեծանում է նշված պայմաններում ադդիկտիվ վարքի ձևավորման հավանականությունը: Ադդիկտիվ վարքի հասկացությունը ձևակերպվել է որպես դեվիանտ վարքի մի տեսակ, որը բնութագրվում է իրականությունից փախուստի ձգտմամբ սեփական հոգեվիճակը որոշ հոգեակտիվ նյութերի ընդունման միջոցով արհեստականորեն փոխելով կամ ուշադրությունը գործունեության որոշ տեսակների վրա սևեռելով, որն ուղեկցվում է դրական հուզական վիճակների զարգացմամբ:

Ս.Կուլակովը, Ա.Ռեանը, Ի.Տոլստիխը նշում են, որ դեռահասության տարիքում հոգեակտիվ նյութեր օգտագործելու հանգամանքը՝ որպես ադդիկտիվ վարք, ունի իր հոգեբանական պատճառները, հատկապես անձնային հատկությունները, որոնք ձևավորվում են նրա հոգեկան օնտոգենետիկ զարգացմանը ուղեկցող սոցիալ-հոգեբանական իրավիճակներում: Սոցիալ-հոգեբանական գործոնների շարքում կարևորվում են դեռահասի հուզական հարաբերությունների բնույթը առաջնային կապվածության օբյեկտների հետ, որի հետևանքով ձևավորվում է նրա հոգեկերտվածքը և պայմանավորում այն, թե ինչպիսի պաշտպանական մեխանիզմներ գործի կդրվեն **[68; 69; 111; 128]:**

Հիմնախնդրի հետազոտման ընթացքում հոգեբանների և այլ գիտությունների ներկայացուցիչների կողմից ձևակերպվել են դրա ուսումնասիրության տեսական մոտեցումները, առանձնացվել են դեռահասներիի ադդիկտիվ վարքի ձևավորմանը նպաստող գործոնները, ինչպես նաև կանխարգելման որոշ ուղիներ:

Հարկ է նշել, որ հետազոտողների մեծամասնությունը հանգել է տվյալ երևույթի առաջացման սոցիալական և կենսաբանական գործոնների փոխներգործության մտքին:

Տ.Նեմչինի, Ս.Ցիցարյովի, Վ.Չիրկոյի, Բ.Լեվինի, Օ.Ժիգունովայի տեսանկյունից

դեռահասության տարիքում ադդիկտիվ վարքի ձևավորման պատճառներ են հանդիսանում ինտելեկտուալ զարգացման համեմատաբար ցածր մակարդակը, անձի ձևավորման գործընթացի անավարտությունը, շրջապատի, ընտանիքի, տարաբնույթ խմբերի անբարենպաստ ազդեցությունը **[72; 101]:**

Ն.Լակոսինան, Վ.Կաչալովը, Ա.Յակուշևը, Վ.Կարպեցը մատնանշում են, որ դեռահասների ադդիկտիվ վարքը թույլ է տալիս նրանց բավարարել անձնային պահանջմունքները, օրինակ շփումը, նմանակումը **[55; 70]:**

Ադդիկտիվ վարքի համակարգված ուսումնասիրությունը հնարավոր է միայն հիմնվելով անձի ուսումնասիրության վրա, որի կայացումը դինամիկ, բազմաբնույթ փոխպայմանավորվածություններով, մշտապես զարգացող գործընթաց է: Այդ առումով ավելի համահունչ է Վ. Մյասիշչևի՝ անձին տրված սահմանումը. «Անձը դա բարձրագույն հասկացությունն է, որը բնութագրվում է ամենից առաջ որպես մարդու՝ շրջապատող իրականության հետ հարաբերությունների համակարգ: Հասարակական հարաբերությունների համակարգը, որի մեջ գտնվում է յուրաքանչյուր մարդ ծնված օրվանից մինչև մահը, ձևավորում է իրականության տարբեր կողմերի նկատմամբ նրա սուբյեկտիվ վերաբերմունք: Հենց այդ հարաբերություններն են անձի առավել յուրատեսակ բնութագրիչները: Հարաբերությունների հոգեբանական իմաստը կայանում է նրանում, որ այն հանդիսանում է մարդու կողմից շրջապատող իրականության արտացոլման ձևերից մեկը: Իրականության նրա ընկալումը, հիշողությունը, երևակայությունը, ուշադրությունը թեպետ փաստում են օբյեկտիվ աշխարհի առանձնահատկությունները, բայց այդ բոլոր հոգեկան գործընթացները կրում են մարդու՝ աշխարհի տարբեր կողմերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի ազդեցությունը՝ **[94;95]:**

Դ.Կոլեսովը մատնանշում է, որ դեռահասության տարիքը այն շրջանն է, երբ ցայտուն կերպով ձևավորվում են ինքնուրույնությունը, սեփական արժանապատ-վության զգացումը, ինքնահաստատվելը մեծերի շրջապատում: Հետևաբար, արժեքավոր է Վ.Լիսովսկիի տեսակետը, որտեղ նշվում է, որ չի կարելի բացահայտել ադդիկտիվ վարքով դեռահասների անձի ձևավորումը, հաշվի չառնելով նրանց դրդապատճառների, ցանկությունների, ձգտումների դերակատարությունները **[78, էջ**

129-134]:

Վ.Կաչալովը, Ն.Մակսիմովան, Տ.Պետրակովան մատնանշում են ինչպես ադդիկտիվ վարքը պայմանավորող գենետիկական, անպես էլ ինտելեկտուալ գործոններ.

ա/ ոչ բավարար մտավոր զարգացումը ամբողջությամբ, «բայց ոչ ախտաբանական», որը խանգարում է վարքի ինքնավերլուծությանը և հետևանքների կանխատեսմանը;

բ/ մտածողության ոչ բավարար ինքնուրույնությունը և դրա հետևանքով՝ ներշչվողականություն և կոնֆորմիզմ;

գ/ ցածր իմացական ակտիվություն, հոգևոր պահանջմունքների աղքատություն **[55; 86; 103]:**

Ըստ Ա.Լիչկոյի և Վ. Բիտենսկու տեսակետի դեռահասի համար ավելի համարժեք է ադդիկտիվ վարքի հասկացությունը կիրառել, քանի որ խոսքը գնում է ոչ թե ձևավորված հիվանդության, այլ վարքի խանգարման մասին **[80; 81]:**

Ա.Լիչկոն հատկապես նշում է ադդիկտիվ վարքի ձևավորման գործընթացում անձի առանձնահատկությունները, բնավորության շեշտվածության տիպերը [80, էջ 105-200; 83]: Նա տվել է բնավորության շեշտվածության տիպաբանությունը, որտեղ չափանիշներ են հանդիսանում դեռահասի վերաբերմունքը իր անձի և իրականության տարբեր կողմերի նկատմամբ, ինչպես նաև վարքային վառ դրսևորումները: Պատկանելությունը ընդգծվածության այս կամ այն տիպին կատարվում է ըստ նոզոլոգիական սկզբունքի:

Օ.Կերնբերգի կարծիքով, դեռահասների ադդիկտիվ վարքի պատճառ են հանդիսանում գեր-ես-ի պաթոլոգիան և անձի խանգարումը, որի հետևանքով առաջանում է «չարորակ նարցիսիզմ», բերելով անպատասխանատու վարքի, շրջապատող մարդկանց հուզական և ֆինանսական շահագործման:

Հաջողված փորձ է արված նաև խառնվածքի, բնավորության, անձի կայուն գծերի և առանձնահատկությունների՝ մեկ միասնական համակարգում խմբավորելու **[82, էջ 26-46; 101; 123]:**

Ըստ Ի.Սորոկինայի, բնավորության ընդգծվածությունը միշտ չէ և ամեն տեղ չէ,

որ դրսևորվում և խանգարում է դեռահասի սոցիալական հարմարմանը: Երբեմն այն կարող է էական ազդեցություն ունենալ սոցիալական հարմարման գործընթացի վրա, մասնավորապես ադդիկցիաների ձևավորման վրա: Բնավորության ընդգծվածությունը ինքը չի հանդիսանում ադդիկտիվ վարքի պատճառ, բայց նրա որոշակի տեսակների դեպքում կարող է լինել դեռահասի կողմից հոգեակտիվ նյութեր օգտագործելու վալիդ «ռիսկի գործոն», ինչը ապացուցված է հետազոտություններով **[126]**:

Ուսումնասիրելով շեղվող վարքի տեսակները, ռուս հետազոտող Յ.Պոպովը եկել է այն եզրակացության, որ վարքային դեվիացիաները պատճառականացված են սոցիալ-դեզադապտացնող գործոններով, որոնք ծնում են կյանքի դժվարություններ, և որի հետևվանքով մարդկանց հոգեբանական պաշտպանական մեխանիզմները ուղղվում են դեպի ադդիկտիվ վարքի միջոցով իրականությունից հեռանալու, սոցիալական կառուցողական գործունեությունից հեռանալու և այլ դրսևորումներում, մինչև անձի աստիճանական դեգրադացիայի: Հեղինակը նշում է նաև, որ հենց անձի դիսֆունկցիոնալությունը այլ ոչ թե դեվիանտ վարքի աստիճանը կամ կախվածության տեսակը կարող են հանդիսանալ անձի ախտահարվածության չափանիշ **[106, էջ 86–90; 107, էջ 3-9; 108; 118]**:

Յ.Պոպովը մշակել է ինքնակործանող վարքի կոնցեպցիա, որպես անձի դիսֆունկցիոնալ վիճակի դրսևորում, որի հիմքում ընկած է կյանքի պրոբլեմներից հեռացումը: Դասակարգման առաջին առանցքի ձևերը հետևյալն են՝ «սուիցիդալ վարք», «ինքնավնասում», «դելիկվենտ վարք» և սոցիալական կարգավիճակի վնասում, որոնք հանդիսանում են ինքնակործանող վարքի տարբերակներ: Դասակարգման երկրորդ առանցքը անձի դիսֆունկցիայի մակարդակն է, որի խանգարումը կարող է ունենալ պսիխոտիկ բնույթ: Դասակարգման երրորդ առանցքը ներառում է բնավորության ընդգծվածությունը, որով պայմանավորված է ինքնակործանող վարքի առանձնահատկությունները: Չորրորդ առանցքը արտացոլում է սոցիալական հարմարման մակարդակը, որտեղ անկայուն ադապտացիան և դեզադապտացիան բնութագրվում են սոցիալական ակտիվության պարբերական խանգարումներով և վնասում են դեռահասի բարոյական և հոգևոր զարգացումը **[106, էջ 86 – 90, 107]**:

Մ. Խրիստոֆորովան, Լ.Շիպիցինան գտնում են, որ դեռահասների ադդիկտիվ

վարքի ձևավորման գործընթացում հսկայական դեր ունի դիսհարմոնիկ ներընտանեկան հարաբերությունները, հատկապես հուզական կապերի խախտումը մոր հետ **[137]:**

Հոգեբանական գրականության մեջ ադդիկտիվ վարքը դիտարկվում է որպես սոցիալ-հոգեբանական երևույթ: Մասնավորապես, հեղինակները առանձնացնում են կյանքի դեվիանտ կենսակերպ հասկացությունը, որը դեկոմպենսացնում է օրգանիզմի գործունեությունը և բերում սոցիալական դեզադապտացիայի: Ադդիկտիվ վարքով դեռահասների բացարձակ մեծամասնության մոտ նախահիվանդագին ֆոնը եղել է նեգատիվ, այսինքն նկատվել են պսիխոպատիա, օրգանական ցերեբրալ անբավարարվածություն և այլն **[26; 30; 51; 99]:**

Ն.Շաբալովի, Ա.Լիչկոյի, Վ.Բիտենսկու, Բ.Ս.Բրատուսի կողմից կատարված հետազոտությունները հաստատում են, որ ադդիկտիվ վարքի հանդեպ հակումը դեռահասների մոտ կարող է ծագել ինչպես փողոցային խմբերի, այնպես էլ ծնողների կողմից ճնշման արդյունքում: Կա որոշակի օրինաչափություն – հոգեակտիվ նյութեր օգտագործող դեռահասների ծնողները նույնպես թմրամոլներ են միայն այն տարբերությամբ, որ հոգեակտիվ նյութերը, որոնք նրանք օգտագործում են, «սոցիալապես ընդունելի են, օրինակ ծխախոտ, ալկոհոլ» **[18;19;24; 136]:**

Ի.Մուրատովայի, Յ.Վագինի կարծիքով, դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորման հիմքում ընկած է հեդոնիստական դրդապատճառը **[31]:** Այդ տեսանկյունը հաստատում են իրենց հետազոտություններում Վ.Ֆրագինը, Բ.Բրատուսը, Լ.Շադուկովան, Ա.Գլազովը:

Ե.Կոշկինայի տվյալներով, դեռահասների ադդիկտիվ վարքի հիմնական դրդապատճառը հանդիսացել է «ժամանակ վատնելը» **[65, էջ 50-58]:**

Կարևոր նշանակություն ունեն նաև «իրադրային և միջանձնային» գործոնները, որոնք դրսևորվում են դպրոցում «երեխա – հասակակից», երեխա ոչ ձևական խումբ, երեխա - ծնող հարաբերություններում և կարող են բացասաբար ազդել դեռահասի վարքի վրա: Ընդ որում, որոշակի դեր են խաղում նաև ներհոգեկան գործոնները, դիրքորոշումները **[65, էջ 38-95]:**

Ա.Լիչկոն, Վ.Բիտենսկին Ն.Մակսիմովան նշում են, որ ադդիկտիվ վարքի նախա-

տրամադրվածություն ունեցող դեռահասը պարտադիր չէ, որ դառնա այդպիսին, քանի, որ սոցիալական միջավայրը ևս ունի կարևոր դեր: Օրինակ, եթե հոգեակտիվ նյութերի նկատմամբ գենետիկական նախատրամադրություն ունեցող դեռահասը նպատակաուղղված ձևով ներգրավվում է առողջ սոցիալական հարաբերությունների համակարգի, ընդհանուր նպատակ և խնդիրներ ունեցող գործունեության մեջ, նրա մոտ երբեք չի առաջանա առողջ ակտիվ կյանքից հեռանալու և ադդիկտիվ վարքով ճանապարհով գնալու ցանկություն **[18; 19; 85]:**

Վ.Մակարովը, Բ.Բրատուսը, Տ,Վոլկովան և ուրիշն. նշում են, որ ադդիկտիվ վարք դրսևորում են այն դեռահասները, որոնք ունեն շեղված վարքագիծ, էնուրեզ, պսիխոպատիաներ:

Հեղինակների մեծամասնությունը նշում են ադդիկտիվ վարքի ձևավորման գործընթացում ռեֆերենտային խմբերի ազդեցությունը: Հետազոտողներից ոմանք նկարագրում են միայն որոշ արտաքին առանձնահատկություններ և ոչ ֆորմալ կազմակերպությունների խմբային նորմեր **[17],** մյուսները տիպականացնում են դեռահասներին, ելնելով պահանջմունքների աղավաղումներից: Առաջիններն անտեսում են խնդրի հոգեբանական կողմը, երկրորդները՝ խմբի սոցիալական ուղղվածությունը **[86;105]:**

Այդ հետազոտությունները էպիզոդիկ բնույթ են կրում և բավականաչափ չեն մեկնաբանում ադդիկտիվ վարքի ձևավորման գործընթացում խմբի ազդեցությունը: Դ.Սեմյենովը դա բացատրում է այն հանգամանքով, որ հետազոտությունների մեծամասնությունը ադդիկտիվ վարքի պատճառը փնտրում է անձի, հոգեախտաբանության մեջ, իսկ ռեֆերենտային խմբին տալիս է երկրորդական նշանակություն **[118]:**

Հոգեակտիվ նյութերի օգտագործման երևույթը դեվիանտ վարքի մյուս ձևից տարբերվում է նրանով, որ սկզբնական շրջանում այն հիմնականում տեղի է ունենում ռեֆերենտային խմբում լիդերի ազդեցությյան տակ: Ինչպես վերը նշվեց, դեռահասության շրջանում ադդիկտիվ վարքի զարգացման պատճառները մտավոր զարգացման համեմատաբար ցածր մակարդակը, անձի ձևավորման անավարտությունը, շրջապատող միջավայրի անբարենպաստ ազդեցությունն են **[42; 43; 44]:**

Ելնելով խնդրի յուրահատկությունից, անհրաժեշտ է ուսումնասիրել դեռահասների միկրոմիջավայրի առանձնահատկությունները, ինչպես նաև անձի դրդապատճառային ոլորտի առանձնահատկությունները: Դրդապատճառները անձի կառուցվացքում ամենաէական բաղադրիչ են, ինչով էլ պայմանավորված է մարդու ներքին ուժերի, անձի կառուցվածքում նրանց տեղի և դերի ուսումնասիրությունը:

Մասնագիտական գրականության մեջ, որտեղ մոտիվացիան դիտարկված է որպես բազմամակարդակ համակարգ, առանձնացվում են դեռահասների գիտակցված և չգիտակցված դրդապատճառներ, ինչպես նաև հասկացվող և ռեալ գործող դրդապատճառներ **[9]**: Բայց առավել լավ են գիտակցվում ինքնորոշման և ինքնակատարելագործման դրդապատճառները: Ռեալ գործող դրդապատճառները միշտ չէ, որ համընկնում են հասկացվողի հետ, ինչը խանգարում է դեռահասին տեսնել իրեն կյանքում և դրդապատճառային համակարգում ստեղծում է **հակասություն [43; 85; 86]:**

Վ.Գուլդանը, Ս.Գենայլոն, Տ.Իվանովան տալով ադդիկտիվ վարքով դեռահասների բնութագիրը, նշում են, որ նրանց մոտ ծագում են աֆեկտիվ ապրումներով պայմանավորված վարքի համապատասխան ձևեր՝ նեղացկոտություն, համառություն, նեգատիվիզմ, ինքնամփոփություն, արգելակվածություն, հուզական անկայունություն: Դեռահասի ոչ համարժեք հակազդումները իրենց հերթին առաջ են բերում շրջապատի մարդկանց պատասխան գործողությունները. դեռահասը սկսում է արդարացում փնտրել իր անհաջողությունների համար, դրանց պատճառը տեսնել ոչ թե իր, այլ շջապատի մարդկանց, հանգամանքների մեջ, չընդունել սեփական ծուլությունը և անկարողությունը, որն ուղեկցվում է աֆեկտներով **[42; 43; 53]:**

Խ.Մյուռեի աշխատանքում, որտեղ հետազոտվել է անձի մոտիվացիան, առանձնացվում է չորս հիմնական մոտիվացիա՝ նվաճումի պահանջմունք, իշխելու պահանջմունք, ինքնուրույնության պահանջմունք, աֆֆիլիացիայի պահանջմունք:

Ինչպես նշում են Վ.Գուլդանը, Վ.Շաբալինան, Վ.Կաչալովը, Ն.Մակսիմովան և այլ հետազոտողներ, ադդիկտիվ վարքով դեռահասի հիմնական մոտիվը իրենց չբավարարող և տաղտկալի, մոնոտոն համարվող հոգեկան վիճակի ակտիվ փոփոխումն է: Այդպիսի դեռահասին իրականության մեջ չի հաջողվում գտնել

գործունեության այնպիսի ոլորտներ, որոնք տևական ժամանակ կշեղեն նրա ուշադրությունը, լինեն գրավիչ, ուրախացնեն, դրական հույզեր առաջացնեն: Կյանքը նրանց թվում է անհետաքրքիր, միօրինակ: Առօրյա կյանքում ադդիկտիվ վարքով դեռահասի ակտիվությունը իջած է, ընդ որում ադդիկտիվ վարքն ունի ընտրողական բնույթ և տեղակայված է այն ոլորտներում, որոնք թեկուզ ժամանակավոր, բայց դեռահասին հաճույք են պատճառում: Այդ պատճառով, այստեղ նա կարող է մեծ ակտիվություն դրսևորել: Ադդիկտիվ վարքով դեռահասը յուրատեսակ հարաբերությունների մեջ է մտնում սոցիալական նորմերի հետ, սոցիալական կապերը ունենում են մանիպուլյատիվ բնույթ, իսկ հուզական կապերը մակերեսային, քանի, որ տվյալ մարդու կամ գործունեության նկատմամբ հետաքրքրությունը կորչում է: Դեռահասը ձգտում է խաբել, մյուսներին մեղադրել սեփական սխալներում՝ դրանով փորձելով շրջապատից թաքցնել անլիարժեքության բարդույթը, որը պայմանավորված է հասարակության կողմից ընդունված նորմերին համապատասխան ապրելու անկարողությամբ: **[43; 55; 85]:**

Ըստ Վ.Շաբալինայի, փախուստը իրականությունից կատարվում է այնպես, որ ներդաշնակ փոխազդեցությունը իրականության տարբեր կողմերի հետ, փոխարինվում է որևէ մի ուղղության ակտիվացմամբ: Ընդ որում մարդը կենտրոնանում է տվյալ նեղ գործունեության վրա, որը ներդաշնակ չէ և քայքայում է անձը **[135]:**

Վ.Գուլդանը նշվում է իրականությունից փախուստի հետևյալ տեսակները՝ փախուստ մարմնի մեջ, փախուստ աշխատանքի մեջ, փախուստ երևակայության մեջ: Ադդիկտիվ վարքը հիմնվում է հոգեկան գործընթացների փոփոխությունների խանգարումների և շեղումների վրա **[46; 48; 50]**:

Ուշագրավ են նաև այն աշխատանքները, որոնք հնարավորություն են տալիս անդրադառնալ դրդապատճառներին: Մասնավորապես, Տ.Դոնսկիխը և Ց.Կորոլենկոն առանձնացրել են հետևյալ դրդապատճառների տեսակները;

- Ատրակտիվ դրդապատճառ – ադդիկտիվ վարքի նպատակն է մեղմացնել կամ վերացնել հուզական դիսկոմֆորտը, տրամադրության անկումը, տագնապը և այլն;

- Սուբմիսիվ դրդապատճառ - չվիրավորել անձանց, որոնք առաջարկում են հոգեակտիվ նյութ;

- Հեդոնիստական դրդապատճառ – ադդիկտիվ վարքի նպատակն է բարձրացնել տրամադրությունը, ստանալ հաճույք;

- Կեղծմաշկութային դրդապատճառ – ձգտում տպավորություն ստեղծել շրջապատի վրա **[63; 64]:**

Ն. Շաբալովը գտնում է, որ դրդապատճառները հանդիսանում են մարդուն ակտիվ գործունեության մղող ներքին ուժեր, որոնց դերում կարող են հանդես գալ անձի աշխարհայացքը, համոզմունքները, իդեալները **[170]**:

Լ.Կիչատինովի կարծիքով, դրդապատճառը կոնկրետ գործունեության անհրաժեշտության գիտակցված, լեզվաբանական ձևավորում ունեցող մեկնաբանությունն է **[56]:**

Ա.Լեոնտևի մեկնաբանությամբ մոտիվը դա այն օբյեկտն է, որը բավարարում է այս կամ այն պահանջմունքը և որը այս կամ այն ձևով արտացոլվելով սուբյեկտի կողմից, բերում է գործունեության **[73, էջ 216; 74]:**

Վ.Ռերկեն նշում է, որ «դրդապատճառ-նպատակ» համադրությունը մի կազմավորում է, որը տարբերվում է և մոտիվից և նպատակից առանձին վերցրած: Այդ կազմավորումը ներկայացնում է մոտիվացիան որպես վարքի և գործունեության ուղղորդված խթանիչ և կարգավորիչ: Նաև մոտիվացիան մոտիվի և նպատակի մեխանիկական միասնությունը չի, այլ ներքին մեխանիզմը, որը կազմակերպում ու ուղղորդում է մարդու գործունեությունը կենսական խնդիրներ, սոցիալական պահանջներ լուծելիս, հետևաբար նպատակ դնելու կարողությունը դեռահասի մոտիվացիոն ոլորտի հասունության ցուցանիշ է **[112]:**

Դրդապատճառների հիմնական հայեցակարգերը ուսումնասիրելիս, պարզ են դառնում պահանջմունքների դերը դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորման գործընթացում: Մասնավորապես Մակ.Դաուգալը իր կոնցեպցիայում նշում է, որ անձի վարքը մոտիվացվում է որոշակի հոգեկան ստրուկտուրայի կողմից, որտեղ նա առանձնացնում է երկու բաղադրիչ՝ մղիչ-մոտիվացիոն, որը կազմված է բնազդներից և ճանաչողական -կատարողական, որը սպասարկում է առաջինին: Բնազդը գործում և մղում է անկախ արտաքին միջավայրից: Նաև հատուկ գրականությունում նշվում է մեկ այլ հասկացությունը, որի հետ կապված է մոտիվացիան, «դրայվն է» , որը էներգիա է,

մղում: Այն լինում է բնածին, որը չի պահանջում ուսուցում և երկրորդական, որը ծագում է ուսուցման արդյունքում **[9; 73; 74]:**

Մոտիվացիայի համար էական նշանակություն ունեցան Ց.Կորոլենկոյի հետազոտությունները, ըստ որի մոտիվացիան ունի չորս կառուցվածքային բաղադրիչ. հաճույք գործունեությունից, անմիջական արդյունքի նշանակալիություն անձի համար, գործունեության համար պարգևատրման մոտիվացիա, հարկադրական ճնշում անձի վրա: Առաջին կառուցվածքային բաղադրիչը կոչվում է «հեդոնիստական», իսկ մյուս երեքը՝ նպատակային: Միաժամանակ, առաջինը և երկրորդը բացահայտում են ուղղվածություն կողմնորոշում դեպի գործունեությունը, իսկ երրորդը և չորրորդը փաստում են արտաքին, այսինքն արտաքին դրական և բացասական ազդեցությունը գործունեության վրա **[63; 64, էջ 94-135]:**

Կ.Լևինի սոցիալական մոտիվացիայի տեսությունը ևս մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Կ.Լեվինի ներդրումը այն է, որ նա բացահայտեց մշտական կապ անձի վարքի և այն պահանջմունքների և մոտիվների միջև, որոնք նրան մղում են: Նա նշել է, որ պահանջմունքների ծագման գործոնները ունեն սոցիալական և հոգեբանական բնույթ **[72]:**

Իր բովանդակությամբ յուրատեսակ է նաև Կ.Հալլի կոնցեպցիան, որը բիհեվիորիզմի պատմության մեջ առաջին անգամ ներմուծեց մոտիվացիա հասկացությունը և ըստ որի մոտիվացայի մղիչ գործառույթը հանգեցվում է պահանջմունքներին, որոնք կատարում են կարգավորող ֆունկցիա **[85]**:

Հարկ է նշել Ա.Լեոնտևի դրույթն այն մասին, որ մոտիվացիոն ոլորտի կառուցվածքը ոչ թե ստատիկ է և քարացած, այլ զարգացող է, փոփոխվող և իրենից ներկայացնում է դինամիկ համակարգ, որտեղ պահանջմունքները, մոտիվները և նպատակները փոխկապակցված և փոխպայմանավորված են **[74; 75]**: Իր հետազոտություններում հեղինակը նշում է, որ մոտիվացիան ձևավորվում է երկու մեխանիզմով: Առաջինը կայանում է նրանում, որ դաստիարակողի կողմից նպատակային ձևով կազմակերպված կամ տարերային կայացած ուսումնական և աշխատանքային գործունեության պայմանները և փոխհարաբերությունները ընտրողաբար ձևավորում են առանձին իրադրային մղումներ, որոնք սիստեմատիկ իրականացնելու դեպքում

աստիճանաբար անցնում են կայուն մոտիվացիոն կազմավորումների: Այդ մեխանիզմը կոչվում է ներքևից վերև **[73, էջ 23-29;74]:**

Երկրորդ մեխանիզմը, որը նա կոչել է վերևից ներքև կայանում է նրանում, որ պատրաստի ձևով տրվում են մղումներ, նպատակներ, իդեալներ, անձի ուղղվածության բովանդակություն, որոնք ըստ դաստիարակողի մտադրության դաստիարակվողը ինքը պետք է ներքնայնացնի և դարձնի ռեալ գործող մոտիվացիա:

Խթաններից որևե մեկի ի հայտ գալը, օրինակ աֆեկտ, հույզեր, ինքնավստահ զգալու ներքին պահանջ, առաջ է բերում հնարավոր բավարարման կանխատեսում, որը գործի է դնում և պահպանում է դեպի նպատակը ուղղված գործողությունները: Հնարավոր բավարարման կանխատեսումը ստիպում է մարդուն դնել նպատակներ, որոնք սպասման համաձայն կբերեն խրախուսման **[72; 73; 74]:**

Ադդիկտիվ վարքը նկարագրելիս, Վ.Ասեևը, Վ.Գուլդանը, Լ. Կիչատինովը նաև մատնանշում են մոտիվացիայի և հավակնությունների մակարդակի կապը: Թույլ մոտիվացիայի դեպքում մարդը ռիսկի չի դիմում և ընտրում է ամենահեշտ խնդիր կամ ընտրում է ամենաբարդը, որի ձախողումը անհաջողություն չի համարվում նրա կողմից: Ուժեղ մոտիվացիայի դեպքում մարդը ձգտում է վստահ լինել հաջողության մեջ և այդ պատճառով ընտրում է միջին դժվարության խնդիր, որը համապատասխանում է նրա հնարավորություններին. օրինակ թույլ մոտիվներով դեռահասները ձգտում են ընտրել կենսական խնդիրների հեշտ լուծումներ, այսինքն ադդիկտիվ վարքով խուսափում են անհաջողությունից **[11; 42; 43; 44]:**

Հայտնի փաստ է, որ դեռահասության շրջանում պահանջմունքները արտահայտվում են աշխարհի ակտիվ, ինքնուրույն և ստեղծագործական ճանաչմամբ, որտեղ առաջատարը հասակակիցների հետ շփումն է: Այս տարիքում ձևավորվում են բազմաբնույթ հակումներ, դրսևորվում է հետաքրքրություններ սպորտի, երաժշտության, նկարչության նկատմամբ, իսկ առաջատար գործունեությունը շփումն է հասակակիցների հետ: Բայց մեզ առանձնապես հետաքրքրում է կախվածության պահանջմունքը: Հատկապես հայկական իրականության մեջ կախվածության պահանջմունքը ունի իր յուրահատկությունները, այնքանով, որքանով հայ ծնողների և երեխաների կողմից այն ընկալվում է տարբեր կերպով: Ծնողների կողմից

չափազանցված մոտեցումը՝ ինչ գնով ուզում է լինի վերահսկել դեռահասների գործունեությունը և կյանքը ընդհուպ մինչև անմիջական ենթակայություն պահանջելը, դեռահասի փոխարեն որոշումներ կայացնելը, նրան անընդունակ համարելը ինքնուրույն գործունեության:

Մոտիվացիոն պահանջմունքային ոլորտի հիմնախնդրի բարդությունը պայմանավորում է նրա էության բնույթի, կառուցվածքի, մեթոդների ուսումնասիրության մոտեցումների բազմազանությունը:

Այդ ոլորտը դիտարկվում է որպես մարդու կենսագործունեության և վարքի բազմամակարդակ կարգավորիչ: Ինչպես նշում է Ա.Լեոնտևը՝ «Մոտիվացիոն-պահանջմունքային համակարգը ունի բարդ կառուցվածք: Այն իր մեջ ներառում է նաև մեխանիկորեն իրականացվող դիրքորոշումները, ձգտումները և մտավոր, իդեալական այն ոլորտը, որը տվյալ պահին չի հանդիսանում ակտուալ գործող, բայց անձի համար կատարում է կարևոր ֆունկցիա: Այս ամենը մի կողմից հնարավորություն է տալիս մոտիվացիոն-պահանջմունքային ոլորտը սահմանել որպես մղումների բարդ, բազմամակարդակ, ոչ միասեռ համակարգ՝ իր մեջ ընդգրկող պահաջմունքները, մոտիվները, հետաքրքրությունները, ձգտումները, հույզերը, նորմերը և արժեքները, մյուս կողմից՝ խոսել մարդու վարքի, գուծունեության բազմամոտիվացվածության և կառուցվածքում առկա դոմինանտ մոտիվի մասին» **[74; 75]:**

Մեծաքանակ գրականության վերլուծությունը մատնանշում է, որ դեռահասության շրջանում բնութագրական է հակումը վարքի խմբակենտրոն մոտիվների նկատմամբ, որոնք ձևավորվում են շփման համատեղ գործունեության արդյունքում: Ս.Կուլակովը, Ն.Մակսիմովան, Մ.Պոպովը նշում են, որ միաժամանակ առողջ դեռահասի և ադդիկտիվ վարքով դեռահասների դրդապատճառային-պահանջմունքային ոլորտի զարգացման ներքին հոգեբանական մեխանիզմները տարբեր է: Առաջին դեպքում տեղի է ունենում բարոյական արժեքների տարբերակում, ձևավորվում է մարդկանց և աշխարհի նկատմամբ վերաբերմունքի որակապես նոր մակարդակ: Ադդիկտիվ վարքի դեպքում դա չի կատարվում, քանի որ շփման շրջանը նեղանում է՝ սահմանափակելով դրդապատճառային-պահանջմունքային ոլորտը խմբակենտրոն մոտիվներով: Արդյունքում դեռահասների հետագա զարգացումը տանում է ոչ թե հասարակություն,

այլ դեպի խումբ, որն աստիճանաբար դառնում է հոգեակտիվ նյութի պահանջմունքի բավարարման կենտրոնը: Ադդիկտիվ վարքի դեպքում դեռահասները կարճ ժամանակով ձեռք են բերում ինքնավստահություն, իրենց զգում են քաջ, ակտիվ: Ինչպես նշում է Պ. Սիդորովը, դեռահասների վաղ ներգրավվումը ադդիկտիվ վարքում բերում է անձի արագ ասթենիազացիայի: Վերոհիշյալ մեխանիզմները կարելի է ընդհանուր համարել ադդիկտիվ վարքով դեռահասների համար, քանի որ հանդիսանում են ախտորոշման և կանխարգելման չափանիշ **[119, էջ 63 - 74]:**

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ա.Մասլոուի պահանջմունքների հայտնի բուրգը, որտեղ մոտիվացիոն-պահանջմունքային ոլորտը դիտարկվում է մարդու գործունեության կառուցվածքից դուրս միայն նրա զարգացման ինքնաիրականացման և հարմարավետ գոյության համատեքստում **[87, էջ 425; 88] :**

Ելնելով Մասլոուի տեսությունից, կարելի է ենթադրել, որ ադդիկտիվ վարքը կարող է լինել պատասխան մարդու չբավարարարված պահանջմունքներին: Ընդ որում, հուզական գերհագեցվածությունը ճնշում է նախաձեռնողականությունը և ստեղծագործության ընդունակությունը, որոնց արդյունքում հնարավոր է ադդիկտիվ վարքի ձևավորում:

Ըստ Մասլոուի, ադդիկտիվ վարքով անձի և առողջ անձի սկզբունքները, պահանջմունքները և արժեքները տարբերվում են ֆիզիկական, սոցիալական և սեփական հոգեբանական աշխարհի ընկալումներով **[88]:**

Ս. Բերեզինի հետազոտությունները մատնանշում են դեռահասների կողմից հոգեակտիվ նյութերի օգտագործման երեք դրդապատճառ՝ հետաքրասիրություն, որպես սթրեսից ազատվելու միջոց և միկրոմիջավայրի ազդեցեթյունը **[16]:**

Մ.Արգայլը պահանջմուքները ներառել է ընդհանուր պահանջմունքների կառուցվածքի մեջ.

1/ կենսաբանական պահանջմունքներ, օրինակ ջրի, սննդի և այլ;

2/ կախվածության պահանջմունք, օրինակ օգնության, պաշտպանության ընդունում;

3/ այլ մարդկանց հասարակության մեջ գտնվելու պահանջմունք;

4/ իշխելու պահանջմունք, այսինքն այլ մարդկանց կողմից որպես լիդեր

ընդունվելու պահանջմունք;

5/ սեռական պահանջմունք – ֆիզիկական մտերմություն, մի սեռի մտերմիկ, ինտիմ սոցիալական փոխազդեցությունը մյուս սեռի հմայիչ ներկայացուցչի հետ;

6/ ագրեսիայի պահանջմունք – վնաս հասցնելու;

7/ սեփական արժանապատվության պահանջմունք, այսինքն իրեն որպես նշանակալի մարդ ընդունելու պահանջմունք **[11]:**

Ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ ցածր ինքնագնահատական են արձանագրում իրենց հետազոտություններում Ս.Կուլակովը **[68, էջ 140-198; 69],** Յ.Գուրևիչը, մինչդեռ Ս.Բերեզինը **[16, էջ 35-95],** Ի.Մոտինգան, Կ.Լիսեցկին **[79]** հակառակ կարծիքի են:

Բ.Սեգալը առանձնացնում է ադդիկտիվ վարքով դեռահասների հետևյալ հոգեբանական առանձնահատկությունները՝ արտաքին սոցիալականացվածությունը զուգակցված վախով հուզական շփումների հանդեպ, ստախոսությամբ, անմեղ մարդկանց մեղադրելու ձգտումով **[98]:**

Հետազոտելով ադդիկտիվ վարքով դեռահասների մոտիվացիոն-պահանջմունքային ոլորտը, Վ.Մեռլինը, Ս.Կուլակովը, Լ.Կիչատինովը հանգում են արտաքին և ներքին գործոնների փոխադարձ ազդեցությանը: **[56; 69; 90]**

Է.Ֆրոմը ադդիկտիվ վարքը դասում է սպառողական կուռքի, միայնակության և ազատությունից փախուստի հիմնախնդրին: Քանի, որ մարդը ապրում է սոցիալական միջավայրում, նրան հասարակության հետ կապում են բարոյական արժեքներ, ընդունված սոցիալական նորմեր: Այդ անենի բացակայությունը հանգեցնում է ներքին հակասության վիճակի: Ադդիկտիվ վարքը օգնում է հաղթահարել ներքին կոնֆլիկտը **[134]:**

Բ.Բրատուսի հեզատությունում նշվում է, որ ադդիկտիվ վարքի ձևավորման գործընթացում տեղաշարժ է կատարվում մոտիվից դեպի նպատակ, որը ոչ թե բերում է մոտիվացիոն պատկերացումների ընդլայնման, այլ դրանց նեղացման, գործունեության որոշ առանձին էլեմենտների վրա սևեռման **[24, էջ 143; 28]:**

Ինչպես նշում են Ն.Սիրոտան, Վ.Յալտոնսկին, Ի.Խաժիլինան, Ն.Վիդերմանը դեռահասի նորմալ զարգացման դեպքում մոտիվից դեպի նպատակ տեղաշարժը

բերում է գործունեության ընդլայնման, նոր ոլորտների ներգրավման: Ադդիկտիվ վարքով դեռահասը սևեռում է իր ուշադրությունը սուբյեկտիվ ապրումների վրա, որոնց նա հասնում է որևէ հոգեակտիվ նյութ օգտագործելով, այսինքն, ոչ թե իրական, այլ խաբկանքի - փոխհատուցող գործունեությամբ: Հոգեակտիվ նյութը որպես մոտիվ իրեն է ենթարկում սոցիալական մոտիվները և դառնում առաջատար: Հետազոտությունները ապացուցում են, որ դեռահասները մինչ ադդիկտիվ վարքի ձևավավորումը հաճախ կարող են ունենալ մոտիվացիոն- պահանջմունքային լայն համակարգ՝ դրսևորելով կոլեկտիվիստական մոտիվներ, իսկ հետո կարող է դիտվել հակառակ երևույթը – դեպի խմբակենտրոն, եսակենտրոն մոտիվներ [**23, էջ 80-100; 120; 121]:**

Ըստ շատ հեղինակների, դեռահասների ադդիկտիվ վարքի զարգացումը կապված է կյանքի իմաստի որոնման ֆրուստրացիայի հետ: Եթե մարդը չունի կյանքի իմաստ, որը նրան երջանիկ կդարձներ, ապա նա ձգտում է երջանկության զգացումը առաջ բերել ադդիկտիվ վարքի միջոցով **[15, էջ 31-34; 108]:**

Ի.Մուրատովան, Ս.Կուլակովը, Ն.Տոլստիխը նշում են ադդիկտիվ վարքով դեռահասների հետևյալ անձնային գծերը, որոնք կարող են դառնալ հոգեպրոֆիլակտիկայի թիրախ՝ անհասություն, հեշտ ֆրուստրացվածություն, ցածր ինքնագնահատական, եսակենտրոնություն, մայրական սիրո պահանջմունք **[68; 69; 128]:**

Մեկ այլ հետազոտող՝ Ա.Վդովիչենկոն, նույնպես ադդիկտիվ վարքը մեկնաբանում է կոնֆլիկտով պայմանավորված լարվածությունից թեկուզ կարճատև ազատվելու ձգտումով: Նա գտնում է, որ որոշակի ազգային, ռեգիոնալ կամ էթնիկ մշակույթներում կարող են փոխանցվել կոնֆլիկտի լուծման մոդելներ, որոնք անձի կողմից ներքնայնացվելու դեպքում կարող են նրա մեջ առաջ բերել ասոցիալ վարքի հակում: Այսպես հասունության և առնականության հետ դեռահասները կապում են ադդիկտիվ վարքը **[30, էջ 77-85]:**

Այսպիսով, մեր կողմից կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ թեև տարբեր հեղինակներ և ուղղություններ ցուցաբերում են ադդիկտիվ վարքով դեռահասներիի սոցիալ-հոգեբանական և անձնային հատկությունների խնդրին տարբեր մոտեցումներ, այնուամենայնիվ որպես ընդհանրություն, առանձնացնում ենք, որ ադդիկտիվ վարք

չունեցող դեռահասի և ադդիկտիվ վարքով դեռահասների դրդապատճառային-պահանջմունքային ոլորտի զարգացման ներքին հոգեբանական մեխանիզմները տարբեր են, մասնավորապես, դեռահասության տարիքում ադդիկտիվ վարքի ձևավորման պատճառներ են հանդիսանում ինտելեկտուալ զարգացման համեմատաբար ցածր մակարդակը, անձի ձևավորման գործընթացի անավարտությունը, շրջապատի, ընտանիքի, տարաբնույթ խմբերի անբարենպաստ ազդեցությունը: Ադդիկտիվ վարքով դեռահասը ի տարբերություն ադդիկտիվ վարք չունեցող դեռահասի, յուրատեսակ հարաբերությունների մեջ է մտնում սոցիալական նորմերի հետ, սոցիալական կապերը ունենում են մանիպուլյատիվ բնույթ, իսկ հուզական կապերը մակերեսային: Նաև ադդիկտիվ վարքով դեռահասները ձգտում են խաբել, մյուսներին մեղադրել սեփական սխալներում՝ դրանով փորձելով շրջապատից թաքցնել անլիարժեքության բարդույթը, որը պայմանավորված է հասարակության կողմից ընդունված նորմերին համապատասխան ապրելու անկարողությամբ: Ընդհանրացնելով վերը շարադրվածը, մենք կարող ենք նաև եզրակացնել, որ ադդիկտիվ վարքն ունի ընտրողական բնույթ և տեղակայված է այն ոլորտներում, որոնք թեկուզ ժամանակավոր, բայց դեռահասին հաճույք են պատճառում:

ԳԼՈՒԽ 3. ԱԴԴԻԿՏԻՎ ՎԱՐՔՈՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

3.1 Փորձարարական հետազոտության կազմակերպման փուլերը և մեթոդները

Ստացված արդյունքների հավաստիությունը պայմանավորված է օգտագործված մեթոդների հուսալիության և վալիդայնության բարձր աստիճանով և մեթոդների քանակով: Բացի այդ, հետազոտության հավաստիության և հուսալիության մասին է խոսում ուսումնասիրված դեռահասների քանակը, ստացված տվյալների որակական և քանակական վերլուծությունը:

Հետազոտության ընտրական համախումբը դեռահասների խումբն է, կազմված 175 հոգուց, 11-16 տարեկան, 95 տղա և 80 աղջիկ: Խումբը առանձնացվել է Երևանի թիվ 5 և 29 միջնակարգ դպրոցների և կույր և թույլ տեսնող գիշերօթիկ միջնակարգ դպրոցի սովորողներից: Ընդհանուր քանակը համապատասխանում է հավաստի տվյալներ ստանալու մինիմալ շեմին:

Հետազոտությունը անցկացվել է երեք փուլով, հետազոտվող խումբը կազմվել է կամավորության սկզբունքի հիման վրա: Հարցման կարգը համապատասխանել է հոգեբանամանկավարժական նորմերին: Թեստավորումը անցկացվել է խմբային: Հետազոտության ընթացքում բոլոր հետազոտվողների հետ աշխատանքում կիրառվել են միևնույն՝ Բասս Դարկի ագրեսիվության ախտորոշման, Լ.Սոբչիկի դեռահասների համար ադապտացված «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարան» «MMPI» և Լիչկոյի՝ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» մեթոդիկաները: /Հավելվածներ

Մեթոդիկաների հետազոտությունների արդյունքները հետազոտվել և միմիանց հետ են կապվել եռագործոն դիսպերսիոն վերլուծության միջոցով: Որպես կախյալ գործոն օգտագործվել են թեստերի կիրառումից ստացված բնութագրերը: Որպես անկախ փոփոխական, որոնց ազդեցությունը պետք է որոշել, օգտագործվել են

հետազոտվողների տարիքը, սեռը և այն հանգամանքը, թե օգտագործում է դեռահասը հոգեակտիվ նյութ:

Անձնային բնութագրերի, բնավորության ընդգծվածության տիպի և ագրեսիվության դրսևորման ձևերի պրոֆիլները, կազմված են յուրաքանչյուր հետազոտված խմբի համար առանձին 11-13 տարեկան աղջիկների և տղաների և 14-16 տարեկան աղջիկների և տղաների համար:

Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 %, վստահելի ինտերվալներ, որոնք ներկայացված են գրաֆիկներում:

Հետազոտության մեջ ներգրավվել են տարբեր տարիքային խմբեր: Առանձնացվել են հետազոտման բնույթի հետևյալ խնդիրներ.

1. բացահայտել դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորման անձնային և սոցիալ-հոգեբանական պատճառները;

2. ուսումնասիրել ադդիկտիվ վարքի հակում ունեցող դեռահասների անձնային և վարքային առանձնահատկությունները;

3. բացահայտել հոգեկան զարգացման տարիքային և սեռային առանձնահատկությունների դերը և նշանակությունը ադդիկտիվ վարքի հակման դրսևորման գործընթացում:

Առաջին փուլի ընթացքում դպրոցներում անց է կացվել ազատ դիտում, որը տևել է երեք ամիս, որի ժամանակ դեռահասների հետ կազմակերպվել և անց են կացվել դասախոսություններ և բանավեճեր «ինչ գիտեմ ես հոգեակտիվ նյութերի մասին», «իմ ընկերը թմրամոլ է, ինչ անել», «թմրանյութերը ամեն ինչ կորցնելու միջոց» և այլ թեմաներով: Բանավեճերը անց են կացվել շաբաթը երկու անգամ: Այս փուլի նպատակն էր ստուգիչ և փորձարարական խմբերի ընտրությունը:

Հետազոտության երկրորդ փուլում ստուգիչ և փորձարարական խմբերում անց ենք կացրել Բասս Դարկի ագրեսիվության ախտորոշման, Լ.Սոբչիկի դեռահասների համար ադապտացված «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարան» «MMPI» և Լիչկոյի՝ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» մեթոդիկաները՝ ադդիկտիվ վարքով դեռահասների անձնային և սոցիալհոգեբանական առանձնահատկությունները բացահայտելու նպատակով:

Նշված մեթոդիկաները հետազոտության ընթացքում թարգմնավել և ադապտացվել են մեր կողմից: Հետազոտության երրորդ փուլում կատարել ենք փորձարարական հետազոտությունների արդյունքների մշակում և վերլուծություն՝ եռագործոն դիսպերսիոն վերլուծության միջոցով, կազմվել ենք աղյուսակներ և գրաֆիկներ, որոնք ամփոփ ներկայացված են աշխատանքում:

Փորձարարական հետազոտության մեջ կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

1. Ադդիկտիվ վարքի բացահայտման հարցաշար / Հավելված 1
2. Ադդիկտիվ վարքի կազմավորման դրդապատճառները բացահայտող հարցաշար / Հավելված 2
3. Բասս Դարկի ագրեսիվության ախտորոշման մեթոդիկա / Հավելված 3

Ստորև ներկայացնենք կիրառված մեթոդիկայի համառոտ նկարագրությունը.

Բասս Դարկի մեթոդիկան կազմված է 75 դատողությունից, որոնց հետազոտվողները պետք է պատասխանեն այո կամ ոչ: Հատուկ ուշադրություն է դարձվել հարցերի այնպիսի ձևակերպմանը, որ պատասխանների վրա չազդեն հետազոտվողների պաշտպանական միտումները, այսինքն ագրեսիվ երևալու ցանկությունը կամ սոցիալապես ընդունելի որակների ցուցադրումը: Սոցիալական ճնշումը նվազեցվել է այն բանի հաշվին, որ ենթադրվում է, որ ագրեսիվ վարքը արդեն առկա է, պարզապես հարցում է արվում դրսևորման ձևի մասին, ինչպես նաև ենթադրվում է, որ ագրեսիայի համար արդարացում կա «օրինակ, մարդիկ, որոնք միշտ հասցնում են ինձ», օգտագործվում է խրախուսող հանգամանքը և այլն:

Ա.Բասը ագրեսիան ձևակերպել է որպես խթաններ պարունակող պատասխան, որը ընդունակ է վնաս պատճառել մեկ այլ մարդու: Հետագա տարբերությունները նա դուրս է բերում, նշելով թշմանական - ագրեսիվ վարքի տարատեսակներ: Ագրեսիայի չափումը հիմնվում է ագրեսիայի և թշնամության տարբերակման վրա, ինչպես նաև ագրեսիվ վարքի՝ ուղիղ և անուղղակի, ակտիվ և պասիվ ձևերի առանձնացման վրա: Հրահանգը բավականին պարզ է. այո պատասխանել, որոնց հետ համաձայն է, և ոչ, որոնց հետ համաձայն չէ:

Այս թեսթի արդյունքների մշակումը կատարվում է ագրեսիվ և թշնամական հակազդումների տարբեր ձևերի ինդեքսների օգնությամբ, որոնք որոշվում են

պատասխանների գումարով:

Ֆիզիկական ագրեսիա – գործակից 11

այո – 1, 25, 33, 48, 55, 62, 68

ոչ – 9, 17, 41

Անուղղակի ագրեսիա – գործակից 8

այո – 2,18, 34, 42, 56,63

ոչ – 10, 26, 49

Դյուրագրգռություն – գործակից 9

այո – 3, 19, 27, 43, 50, 57, 64, 72

ոչ – 11,25, 69

Նեգատիվիզմ – գործակից 20

այո – 4,12, 20,28

ոչ - 36

Վիրավորանք – գործակից 13

այո – 5,13, 29, 37, 51, 58

ոչ – 44

Կասկածամտություն – գործակից 11

այո – 6, 14, 22, 30, 38, 45, 52, 59

ոչ – 65, 70

Խոսքային ագրեսիա – գործակից 8

այո – 7, 15, 23, 31, 46, 53, 60, 71, 73

ոչ – 39, 66, 74,75

մեղքի զգացում – գործակից 8

այո – 8, 16, 24, 32, 40, 47, 54, 61, 67

Հարցարանը բացահայտում է ագրեսիվ և թշնամական հակազդումների հետևյալ ձևերը. ֆիզիկական ագրեսիա «հարձակում» - մեկ այլ անձի նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրում:

Անուղղակի ագրեսիա – դա այն ագրեսիան է, որը անուղղակի ճանապարհով ուղղված է մեկ այլ մարդու նկատմամբ «բամբասանք, չար կատակներ և այլն», ինչպես

նաև, որն ուղղված չէ որևէ մեկի նկատմամբ « բռնկվել, ճչալ և այլն» :

Դյուրագրգռություն – յուրաքանչյուր չնչին առիթով կտրուկ, կոպիտ, բռնկվող վարքի դրսևորման պատրաստակամություն:

Նեգատիվիզմ – ընդդիմադիր վարք, որը սովորաբար ուղղված է դեպի հեղինակավոր անձը կամ ղեկավարությանը, այն կարող է դրսևորվել պասիվ դիմադրությունից մինչև գոյություն ունեցող օրենքների դեմ ակտիվ պայքարով:

Վիրավորանք – շրջապատի նկատմամբ ատելություն և կախվածություն, որը պայմանավորված է ամբողջ աշխարհի դեմ զայրույթով:

Կասկածամտություն – անվստահություն և զգուշություն մարդկանց նկատմամբ՝ հիմնված այն համոզմունքի վրա, որ շրջապատողները կարող են վնաս հասցնել:

Խոսքային ագրեսիա – նեգատիվ զգացմունքների արտահայտումը խոսքի միջոցով, «վեճեր, ճիչ, սպառնալիք , անեծք , հայհոյանք»

Մեղքի զգացում – այս հարցի պատասխանները արտահայտում են մեղքի զգացման զսպող ազդեցությունը ագրեսիայի դրսևորումների վրա: Այս համոզման էությունը կայանում է նրանում, որ փորձարկվողը համոզված է, որ ինքը վատ մարդ է, կատարում է սխալ արարքներ և ունի խղճի խայթ **[13]:**

4. Դեռահասների համար ադապտացված Լ.Սոբչիկի դեռահասների համար ադապտացված «MMPI» Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսոթյան հարցարան / Հավելված 5

Ստորև ներկայացնենք կիրառված մեթոդիկայի համառոտ նկարագրությունը.

Կրճատված տարբերակը պարունակում է 398 դատողություն: Այն թույլ է տալիս ստանալ ածնի նկարագիրը ըստ բազային սանդղակների: Հետազոտվողների պատասխանները գրանցվում են հատուկ թղթերի վրա: Եթե հետազոտվողը համաձայն է դատողության հետ և պատասխանում է ճիշտ է, ապա համապատասխան դատողության համարի դիմացի վերևի վանդակում դնում է նշան: Իսկ եթե պատասխանում է ճիշտ չէ՝ ներքևի վանդակում է դնում նշանը: Չգիտեմ պատասխանի դեպքում համապատասխան համարը վերցնում է շրջանակի մեջ: Արդյունքների մշակումը կատարվում է մեթոդիկայի բանալիների օգնությամբ, որոնք կազմվում են, նշվելով համապատասխան համընկնող պատասխանները:

Սույն մեթոդիկայի կառուցվացքում առկա են հավաստիության սանդղակները, որոնց միջոցով որոշվում են ստացված սանդղակների հուսալիությունը և հետազոտության ընթացքի նկատմամբ հետազոտվողի դիրքորոշումը: Դա ստի սանդղակն է՝L, հավաստիության սանդղակն է՝ F, և շտկման սանդղակն է՝ K: Բացի այդ կա նաև սանդղակ, որը գրանցում է այն դատողությունները, որոնց հետազոտվողը չի կարողացել որոշակի պատասխան տալ: Եթե այդ սանդղակի ցուցանիշները գերազանցում են 70 առաջնային միավորները, ապա թեսթի տվյալները հավաստի չեն: Թույլատրելի է 36-40-ը, իսկ 41-60-ի դեպքում կարելի է ասել հետազոտվողի արտահայտված զգուշության մասին:

Հարցաշարը ներգրավվում է 10 սանդղակ, որոնցից երեքը ստուգիչ են:

Մեր հետազոտության համար աշխատանքային են հետևյալ սանդղակները: «հոռետեսության», «իմպուլսիվության», «ռիգիդության», «տագնապայնության», «անհատականության», «լավատեսության», «ինտրովերսիայի»:

«Հոռետեսության» սանդղակ: Առաջատար մոտիվացիոն ուղղվածությունը այստեղ խուսափումն է անհաջողությունից: Տվյալ տիպի համար բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝ գոյություն ունեցող խնդիրների գիտակցման բարձր աստիճան, այսինքն սեփական հեռանկարների հոռետեսական գնահատման և անբավարարվածության լույսի ներքո, մտորումների հակվածություն, չեզոքություն որոշումներ ընդունելու մեջ, վերապրումների արտահայտված խորություն, ինքնաքննադատություն, որոշ անվստահություն սեփական հնարավորությունների նկատմամբ: Միջանձնային վարքը, ոճը արտահայտվում է կախվածության հատկություններով, որոնք առավել նկատելի են հեղինակավոր մարդու հետ շփում-ներում. դրա հետ մեկտեղ միաժամանակ նկատվել դիստանտություն և սեփական արժանապվության հիվանդագին սրված զգացում: Պաշտպանական մեխանիզմը ՝ ինքնահիրացումից հրաժարում և գիտակցության վերահսկողության ուժեղացում:

«Իմպուլսիվության» սանդղակ: Որպես նորմատիվային ցրման սահմաններում տեղակայված առաջատար պրոֆիլ՝ այն դրդապատճառների կառուցվածքում արտահայտում է անձնային ակտիվ դիրք, արագություն որոշումների ընդունման մեջ: Հաջողության հասնելու մոտիվացիան սերտորեն կապված է կրքոտ ցանկություններն

իրականացնելու կամային ջանքերի հետ, որոնք միշտ չէ, որ գիտակցական վերահսկողության են ենթարկվում: Որքան ցածր է անձի հասունությունը և որքան քիչ են ներգործում դաստիարակությամբ ստացված վարքի նորմերը, այնքան ավելի ուժեղ է տարերային ակտիվության դրսևորման ռիսկը՝ ուղղված ակնթարթային մղումների իրականացմանը: Բնորոշ են անհամբերությունը, ռիսկի դիմելու հակումը, անկայունությունը, հավակնությունների բարձր մակարդակը, որոնց մակարդակը զգալիորեն կախված է ակնթարթային մղումներից, արտաքին ներգործություններից, հաջողություններից և անհաջողություններից: Պաշտպանական մեխանիզմը՝ գիտակցությունից տհաճ կամ ինքնագնահատականը իջեցնող ինֆորմացիայի արտամղումն է:

«Ռիգիդության» սանդղակ: Այս սանդղակը բացահայտում է հետաքրքրությունների կայունությունը, սեփական կարծիքը պաշտպանելու համառությունը, արտաքին ուժերի հակազդման ժամանակ աճող դիրքերի ակտիվությունը, սեփական փորձի վրա հենվելու ձգտումը: Այս սանդղակով անձանց պրոֆիլում դրսևորվում են սեր դեպի կարգապահությունը, սեփական սկզբունքներին հավատարմություն: Միջանձնային շփումներում բացահայտվում է ակնհայտ մրցակցության զգացում ռեֆերենտ խմբում բարձր դերի պահպանման ձգտմամբ:

«Տագնապայնության» սանդղակ: Այս սանդղակով բարձր պրոֆիլը բացահայտում է բարձր զգայունակությունը, ենթարկվողականությունը շրջապատի ներգործությունների նկատմամբ: Գերակշռում են անհաջողությունից խուսափելու, սենզիտիվության մոտիվացիան և դիրքորոշումը շրջապատողների հետ հաստատուն հարաբերությունների նկատմամբ: Առաջատար պահանջմունքներն է վախերից և անվստահությունից ազատման պահանջմունքը: Նրանց հատուկ է ապրումակցումը, կապվածությունը ուժեղ անձին: Այս անձանց բնավորության գծերից են՝ պատասխանատվության բարձր զգացում, համեստություն: Պաշտպանական մեխանիզմներն են սահմանափակ վարքագիծը և կպչուն գործողությունները, որոնք առօրյա կյանքում վերածվում են սնահավատության:

«Լավատեսության» սանդղակ: Այս սանդղակը արտացոլում է կենսասիրության բարձր մակարդակը, հետազոտվողի ինքնավստահությունը, հաջողության

դրդապատճառի բարձր մակարդակը, որը ուղղված է շարժողական ակտիվությանը և խոսքային գերակտիվությանը: Կենցաղային դժվարությունները ընկալվում են որպես հեշտ հաղթահարելի, բայց հակառակ դեպքում անհաղթահարելիի նշանակությունը հեշտությամբ արժեզրկվում է: Գերակշռում է շրջապատող աշխարհի ուրախ ընկալումը, վստահությունը ապագայի նկատմամբ: Սովորաբար դեռահասության շրջանին բնորոշ առանձնահատկությունները ժամանակի ընթացքում հարթվում են կամ ընդհանրապես վերանում են: Դեզադապտացիայի ժամանակ վարքագիծը ստանում է հակասոցիալական գծեր:

«Ինտրովերսիայի» սանդղակ: Այս սանդղակը բացահայտում է անձնային դիրքի պասիվությունը և հետաքրքրությունների ուղղվածությունը ներքին ապրումների աշխարհ: Բարձրացած ցուցանիշները արտացոլում են սոցիալական միջավայրում անձի ընդգրկվածության ցածր մակարդակը, ամոթխածությունը, ինքնամփոփությունը: Արտահայտված շեշտվածության ժամանակ, այս սանդղակը արտացոլում է շփումների ընտրականություն, չեզոքություն որոշումների ընդունման մեջ, միջանձնային շփման ոլորտի նեղացման հաշվին կոնֆլիկտներից խուսափում **[124]:**

5. Լիչկոյի՝ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» / Հավելված 4

Ստորև ներկայացնենք կիրառված մեթոդիկայի համառոտ նկարագրությունը.

Լիչկոյի՝ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշար – մշակված Ն.Իվանովի և Ա.Լիչկոյի [101] կողմից և նախատեսված է դեռահասների մոտ պսիխոպատիաների և բնավորության ընդգծվածության դեպքում բնութագրիչ շեղումների հետազոտման համար:

Համաձայն Լազուրսկու հարաբերությունների հոգեբանության կոնցեպցիայի և Մյասիշչևի [114] հայացքների, հարցարանում ընդգծված են դեռահասների համար ակտուալ նշանակություն ունեցող պրոբլեմներ. ինքնազգացողություն, տրամադրություն, քուն և երազներ, քնից արթնանալ, ախոռժակ և սննդի նկատմամբ վերաբերմունք, վերաբերմունք հագուստի, վերաբերմունք սպիրտային խմիչքների նկատմամբ, դրամի, ծնողների, ընկերների, շրջապատողների, անծանոթների, մենակության, ապագայի, անհաջողությունների, արկածների և ռիսկի, լիդերության,

քննադատության, խնամքի և խրատների, օրենքների և նորմերի, դպրոցի նկատմամբ, ինքնագնահատականը մանկության տարիքում, ինքնագնահատականը ներկա պահին, վերաբերմունք փողի նկատմամբ:

Յուրաքանչյուր պրոբլեմին համապատասխանում է 10-20 պատասխան, որոնցից մեկը կամ մի քանիսը «մինչև3» հետազոտության առաջին փուլում պետք է ընտրի դեռահասը: Նա իրավունք ունի նաև որոշ պրոբլեմների դեպքում հրաժարվել պատասխաններ տալուց: Հետազոտության երկրորդ փուլում դեռահասին խնդրում են ընտրել ավելի շատ չհամապատասխանող պատասխանները: Ընտրության այսպիսի ազատությունը ավելի գերադասելի է այլ հարցարանների մեջ կիրառվող այո և ոչ պատասխաններից: Յուրաքանչյուր դատողութ¬յուն տալիս է ընդգծվածության համապատասխան տիպի համար մեկից երեք բալ: Այս հարցարանը հնարավորություն է տալիս բացահայտելու թե ինչպես է տեսնում և գնահատում հետազոտվողը իր բնավորությունը «սուբյեկտիվ գնահատականի սանդղակ», և ընդգծվածության որ տիպին է պատկանում իրականում հետազոտվողը «օբյեկտիվ գնահատման սանդղակ»: Բացի դրանից, ընդգծվածության տիպը համարվում է անորոշ, եթե օբյեկտիվ գնահատականի սանդղակը չի հասնում հատուկ մշակված ցուցանիշին ըստ որևէ տիպի: Արդյունքների մշակումը սկսվում է օբյեկտիվ գնահատման սանդղակի ապակոդավորումից: Այդ նպատակով նախապես պատրաստված բլանկի վրա լրացվում է գրաֆիկը, որտեղ ուղղահայաց տրված են յուրաքանչյուր տիպին համապատասխանող միավորները, որոնք ստացվել են հետազոտության երկու փուլերի ընթացքում: Գրաֆիկը գնահատվում է ըստ հետևյալ ցուցանիշների. որոշվում է ընգծվածության կամ պսիխոպատիայի տիպը, կոմֆորմության աստիճանը, հետազոտության նկատմամբ նեգատիվ վերաբերմունքը, դիսսիմուլյացիայի նկատմամբ հնարավոր հակումը, անկեղծության մակարդակը, պսիխոպատիայի կամ ընդգծվածության օրգանական բնույթի հնարավորությունը, ինքնագնահատականը, էմանսիպատիան, դելիկվենտ վարքի և հարբեցողության նկատմամբ հակումը, սոցիալական դեզադապտացիայի ռիսկը:

Մեթոդիկան կազմված է 7 սանդղակներից, որոնք թույլ են տալիս որոշել փորձարկվողների մոտ որոշակի տիպի որակական դրսևորումները, որոնք

արտացոլում են դեռահասի՝ շրջապատող աշխարհի, այլ մարդկանց և սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկությունները, որոշում են նրա մոտիվացիոն միտումների իրականացման բնորոշ միջոցները:

Հարկ է նշել, որ շեշտվածության յուրաքանչյուր տիպ ունի միայն իրան բնորոշ «թույլ տեղեր», քանի, որ դեռահասության շրջանը ճգնաժամային է, և բնավորության գծերը հաճախ սրվում են, իսկ տևական պսիխոգեն գործոնի ազդեցության դեպքում, որոնք հասցեագրված են «ամենաթույլ դիմադրության տեղերին», կարող է առաջ գալ ադապտացիայի ժամանակավոր խանգարում, վարքի շեղումներ: Ընդ որում, ընդգծվածության յուրաքանչյուր տեսակին համապատասխանում են ադդիկտիվ վարքի այս կամ այն ձևերը:

«Անկայուն սանդղակը» բնութագրում է անկայուն տիպը: Ըստ այս սանդղակի բարձր ցուցանիշներ ունեցող դեռահասները դժվարությամբ են յուրացնում վարքի սոցիալապես ընդունելի նորմերը, ունեն չափազանց մակերեսային իմացական հետաքրքրություններ, որոնք դրսևորվում են զվարճանքների և հաճույքների ձգտումով, նրանք հեշտ են խախտում վարքի սոցիալապես ընդունելի ձևերը:

«Զգայուն» սանդղակը բնութագրում են զգայուն տիպը: Ըստ այս սանդղակի բարձր միավորներ ունեցող դեռահասները աչքի են ընկնում բարձր պատասխանատվության զգացումով, չափից դուրս տպավորվող և տագնապալի են, դժվար են հարմարվում նոր իրավիճակներում, նոր կոնտակտների մեջ դժվարությամբ են մտնում:

«Հիպերտիմ» սանդղակը բնութագրում է հիպերտիմ տիպը: Այս դեռահասները ունեն կենսունակության բարձր մակարդակ, նրանց մոտ գերակշռում է պոզիտիվ տրամադրությունը, բայց վատ է զարգացած սոցիալական տարածությունը պահպանելու զգացումը, այլ մարդկաց հետ շփվելիս ձգտում են իշխել:

«Հիստերոիդ» սանդղակը բնութագրում է հիստերոիդ տիպը: Այս դեռահասները եսակենտրոն են, ձգտում են ցանկացած միջոցով ուշադրություն գրավել, հակված են ցուցադրական վարքի:

Հաջորդ սանդղակը «լաբիլ»ն է: Ըստ այս սանդղակի բարձր ցուցանիշներով դեռահասները տարբերվում են տրամադրության և ընդհանուր հուզական վիճակի փոփոխականությամբ, չափից դուրս տպավորվողականությամբ:

«Շիզոիդ» սանդղակը բնութագրում է շիզոիդ տիպին, որը բնութագրվում է ինքնամփոփությամբ, տարբեր կոնտակտների մեջ մտնելու ցանկության բացակայությամբ, ներաշխարհի ինքնատիպությամբ և հույզերի և զգացմունքների հակասականությամբ:

«Պսիխաստենիկ» սանդղակը բնութագրում է պսիխաստենիկ տիպը: Այս տիպը հակված է հոգեկան լարվածության և ֆրուստրացիաների, անվստահ է սեփական ուժերի նկատմամբ, դժվարությամբ է ընդունում որոշումներ:

«Անհատականության» սանդղակ: Բարձրացած լինելով պրոֆիլում, այն բացահայտում է անձի հարմարվողական-հայեցական դիրքը և վերլուծական մտածողությունը: Հակվածությունը դատողությունների նկատմամբ գերակշռում է զգացմունքների և գործնական ակտիվության նկատմամբ: Շփման մեջ նկատվում է որոշակի ընտրականություն, հայացքների անկախություն, սուբյեկտիվիզմ շրջապատող մարդկանց տրվող գնահատականներում: Բացահայտվում է արտահայտված սեփական անհատականության արդիականացման պահանջմունքը: Այս տիպի մարդկանց դժվար է ադապտացվել կյանքի սովորական պայմաններին: Այն, ինչը մեծամասնության կողմից որակվում է որպես արտակարգ իրավիճակ, այս տիպի մարդկանց կողմից կարող է հակառակ մեկնաբանություն ստանալ: Պաշտպանական մեխանիզմներն են տագնապի տրանսֆորմացիան, իմացական վերամշակումը և հեռացումը անուրջների և երազների աշխարհ: Այս տիպի մարդկանց հատուկ է որոշումների ընդունման ժամանակ սուբյեկտիվ ընտրության ազատության պահանջմունքը **[83]**:

Մեթոդների ընտրությունը կատարվել է ելնելով հետազոտության նպատակից, խնդիրներից, ինչպես նաև մեթոդների՝ հետազոտվող տարիքային հատվածի առանձնահատկությունների համարժեքությունից, դրանց ադապտացվածության և մշակվածության բնութագրերից:

3.2 Փորձարարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունները

Հետազոտության արդյունքների հավաստիությունը ապահովվել է ընտրանու ծավալով անց կացված՝ ադդիկտիվ վարքի բացահայտման հարցաշարի, ադդիկտիվ վարքի կազմավորման դրդապատճառները բացահայտող հարցաշարի, ագրեսիայի մակարդակի, անձնավորության ուսումնասիրության և բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկաների համապատասխանությամբ հետազոտական խնդիրներին և դրանց արդյունքների եռագործոն դիսպերսիոն վերլուծությամբ:

Որպես կախյալ գործոն օգտագործվել են մեթոդիկաների կիրառումից ստացված բնութագրերը: Որպես անկախ փոփոխական օգտագործվել են հետազոտվողների տարիքը, սեռը և հոգեակտիվ նյութեր օգտագործելու հանգամանքը:

Անձնային բնութագրերի, բնավորության շեշտվածության տիպի և ագրեսիվության դրսևորման ձևերի պրոֆիլները, կազմվել են յուրաքանչյուր հետազոտվող խմբի համար առանձին՝ 11-13 տարեկան աղջիկների և տղաների և 14-16 տարեկան աղջիկների և տղաների համար «կրտսեր և ավագ դեռահասներ»:

Բոլոր հետազոտվողները իրականացրել են գործունեության նույն տեսակը՝ ուսումնական գործունեությունը:

Դիտման ժամանակ փաստել ենք հետազոտվողների վերբալ ակտիվությունը և պասիվությունը, էքսպրեսիայի, տագնապի և ագրեսիայի արտաքին դրսևորումները:

Ըստ մեր կողմից կազմված ադդիկտիվ վարքի ախտորոշման հարցաշարի անցկացման արդյունքների, կազմվել են ստուգիչ և փորձարարական խմբերը:

Ստուգիչ խումբը բաղկացած էր ադդիկտիվ վարք չունեցող 90 դեռահասից՝ 50 տղա, 40 աղջիկ, որոնցից 20 աղջիկ 11-13 տարեկան, 20 տղա 11-13 տարեկան և 20 աղջիկ 14-16 տարեկան և 30 տղա 14-16 տարեկան, իսկ փորձարարական խումբը՝ 85 ադդիկտիվ վարքով դեռահասներից՝ 45 տղա և 40 աղջիկ, որոնցից 20 աղջիկ 11-13 տարեկան, 20 տղա 11-13 տարեկան և 20 աղջիկ 14-16 տարեկան և 25 տղա 14-16 տարեկան:

Ստացված արդյունքները խմբավորված և մեկնաբանված են՝ ըստ տարիքային և սեռային խմբերի:

Ադդիկտիվ վարքի կազմավորման դրդապատճառները բացահայտող հարցաշարի կիրառման արդյունքում ստացված տվյալները, հնարավորություն տվեցին բացահայտել ադդիկտիվ վարքի մղող դրդապատճառները:

Աղյուսակ 1

Տարբեր տարիքային խմբերի տղաներին ադդիկտիվ վարքի մղող դրդապատճառներ

	Դրդապատճառներ	Տղաների թիվը %	Տղաների թիվը %
		11-13 տարեկան	14-16 տար..
1.	Ինձ ազատ զգալու համար	10	17
2.	Սուր զգացողություններ ապրելու համար	14	16
3.	Լավ տրամադրություն ստեղծելու համար	3	6
4.	Ձանձրույթից ազատվելու համար	2	4
5.	Հետաքրքրքսիրության, անծանոթ զգացողություններ ունենալու համար	16	12
6.	Հակառակ սեռի ներկայացուցիչների հետ շփումը հեշտացնելու համար	1	8
7.	Ֆիզիկապես ավելի ուժեղ լինելու համար	2	4
8.	Առօրյա կյանքի հոգսերից ազատվելու համար	1	3
9.	Հասակակիցներիս անկախությունս ցույց տալու համար	15	3
10.	Խմբից ետ չմնալու համար	18	4
11.	Ծնողների պահանջներին ընդդիմանալու համար	17	23

Աղյուսակ 2

Տարբեր տարիքային խմբերի աղջիկներին
ադդիկտիվ վարքի մղող դրդապատճառներ

	Դրդապատճառներ	Տղաների թիվը %	Տղաների թիվը %
		11-13 տարեկան	14-16 տար..
1.	Ինձ ազատ զգալու համար	6	10
2.	Սուր զգացողություններ ապրելու համար	8	9
3.	Լավ տրամադրություն ստեղծելու համար	7	11
4.	Ձանձրույթից ազատվելու համար	4	3
5.	Հետաքրքրքսիրության, անծանոթ զգացողություններ ունենալու համար	21	11
6.	Հակառակ սեռի ներկայացուցիչների հետ շփումը հեշտացնելու համար	1	3
7.	Ֆիզիկապես ավելի ուժեղ լինելու համար	2	0
8.	Առօրյա կյանքի հոգսերից ազատվելու համար	3	5
9.	Հասակակիցներիս անկախությունս ցույց տալու համար	13	15
10.	Խմբից ետ չմնալու համար	18	14
11.	Ծնողների պահանջներին ընդդիմանալու համար	17	22

Հետազոտության տվյալ փուլում փաստեցինք, որ ադդիկտիվ վարքի մղող ամենատարածված դրդապատճառը 11-13 տարեկան տղաների մոտ խմբից ետ չմնալն է, որը կազմում է 18 %, ապա, ծնողների պահանջներին ընդդիմանալու մոտիվն է, որը կազմում է 17 % և «հասակակիցներիս անկախությունս ցույց տալու համար» դրդապատճառը 15 % կազմում:

14-16 տարեկան տղաների մոտ ամենատարածված ադդիկտիվ վարքի մղող դրդապատճառը ծնողների պահանջներից սեփական անկախությունը ցույց տալն է 23%, ապա ազատ զգալու ցանկությունը 17% և սուր զգացողություններ ապրելու մոտիվը կազմում է 16%:

Հետազոտության արդյունքները ամփոփ ներկայացված են առաջին աղյուսակում տղաների համար:

Երկրորդ աղյուսակում ներկայացված են հետազոտության արդյունքները երկու տարիքային խմբերի աղջիկների համար:

Աղջիկների 11-13 տարեկանների մոտ ադդիկտիվ վարքի մղող տիրապետող

դրդապատճառը հետաքրքրությունն է 21%, խմբից ետ չմնալը 18%, ապա , ծնողների պահանջներին ընդդիմանալու մոտիվն կազմում է 17% :

14-16 տարեկան աղջիկների մոտ ադդիկտիվ վարքի մղող տիրապետող դրդապատճառը ծնողների պահանջներին ընդդիմանալը 22%, հետո ցուցադրել հասակակիցներին սեփական անկախությունը կազմում է 15 %:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ադդիկտիվ վարքի մղող ամենատարածված դրդապատճառը հայ դեռահաս-տղաների և աղջիկների 14-16 տարեկանների համար ծնողների պահանջներին ընդդիմանալը, նրանցից անկախանալն է: Մենք նաև փաստում ենք, որ այս խմբի տղաներին ադդիկտիվ վարքի մղող դրդապատճառ է հանդիսանում ազատ զգալու ցանկությունը, մինչդեռ կրտսեր դեռահաս-տղաների ամենատարածված ադդիկտիվ վարքի մղող դրդապատճառը հանդիսանում է խմբից ետ չմնալը, հետաքրքրությունը, իսկ 11-13 տարեկան աղջիկ-դեռահասների տիրապետող դրդապատճառը հետաքրքրությունն է:

Այսպիսով, այս փուլի հետազոտությունը մեզ հնարավորություն տվեց բացահայտել, որ ադդիկտիվ վարքով հայ դեռահասին ավելի բնորոշ են ծնողների պահանջներին ընդդիմանալու, ազատ զգալու ցանկությունը դրդապատճառները, ինչը կարելի է մեկնաբանել ոչ միայն դեռահասության շրջանի տարիքային առանձնահատկություններով, այլ նաև հայ իրականությանը բնորոշ դաստիարակության առանձնահատկություններով, մասնավորապես՝ ծնողների գերխնամքով:

Քննարկենք ադդիկտիվ վարք ունեղող և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների անձնային և սոցիալհոգեբանական առանձնահատկությունների հետազոտությունը: Հետազոտվողների առաջին խումբը կազմում են ադդիկտիվ վարքով դեռահասները՝ փորձարարական խումբ, երկրորդ խումբը՝ ադդիկտիվ վարք չունեցող դեռահասները՝ ստուգիչ խումբ:

Մեր կողմից կատարված դիսպերսիոն վերլուծության արդյունքում բացահայտվել է դեռահասների մոտ ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունների կապը նրանց սեռի և տարիքի հետ, ինչպես նաև հոգեակտիվ նյութեր օգտագործող և չօգտագործող դեռահասների մոտ տարբերությունները: Անց է կացվել նաև հետազոտություն ագրեսիայի դրսևորման սեռային տարբերությունների

բացահայտման համար: Դրանք առավել նկատելի են ագրեսիայի ֆիզիկական ձևերի դրսևորման ընթացքում, ինչպես նաև այն իրավիճակներում, երբ ստիպված են դիմել ագրեսիայի, օրինակ, որևէ սոցիալական դեր կատարելիս, ի տարբերություն այն իրավիճակների, երբ ագրեսիան օգտագործում են առանց հարկադրանքի:

Բասս Դարկի թեսթի դիսպերսիոն վերլուծությունը ցույց տվեց, որ տղաների և աղջիկների մոտ ագրեսիայի դրսևորման ձևերը տարբեր են:

Ֆիզիկական, ինչպես նաև անուղղակի ագրեսիայի դրսևորումները ավելի բնութագրական են տղաներին քան աղջիկներին: Ինչպես նաև բացահայտվեցին տարբերություններ տղաների և աղջիկների մոտ կասկածամտության առումով. տղաների ավագ տարիքային խմբի մոտ կասկածամտությունը ավելի բարձր ցուցանիշ ունի, իսկ աղջիկների մոտ հակառակը՝ ավագ խմբում կասկածամտությունը նվազում է: Ագրեսիայի դրսևորման մյուս հինգ ձևերի առումով տղաների և աղջիկների միջև էական տարբերություններ չեն բացահայտվել:

Տարիքը ևս ազդում է դեռահասների ագրեսիայի դրսևորման ձևերի վրա: Ագրեսիայի՝ վեբալ և դյուրագրգռության դրսևորումները ավելի հաճախ են ավագ աղջիկների և տղաների տարիքային խմբերում:

Տղաների մոտ տարիքի հետ մեծանում է ագրեսիայի անմիջական ֆիզիկական և վիրավորանքի ձևով դրսևորումների ինտենսիվությունը, իսկ աղջիկների մոտ՝ անուղղակի ագրեսիայի ինտենսիվությունը:

Ագրեսիայի դրսևորումների՝ նեգատիվիզմի, մեղքի զգացման և կասկածամտության ձևերի ինտենսիվությունը ավա և կրտսեր խմբերում չի տարբերվում:

Դիսպերսիոն վերլուծյությունը հաստատեց մեր վարկածում նշված այն հանգամանքը, որ դեռահասների մոտ ագրեսիայի դրսևորման ձևերը խիստ կապված են դեռահասների՝ ադդիկտիվ վարքի կազմավորման կամ ադդիկտիվ վարքի չկազմավորման փաստի հետ: Այսինքն, ադդիկտիվ վարք ունեղոց և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների ագրեսիայի դրսևորման ձևերի ինտենսիվության և աղջիկների, և տղաների երկու տարիքային խմբերի մոտ հավաստի տարբերություններ են բացահայտված, ընդ որում՝ շատ բարձր մակարդակի նշանակալիությամբ բոլոր սանդղակների համար $p < 0.001$:

Քանի, որ այս կապի ապացուցելը մեր հետազոտության նպատակներից մեկն է, բացահայտված տարբերությունները քննարկենք ավելի մանրամասն:

Գրաֆիկ 1

Բասս Դարկի թեսթի արդյունքների մշակում կրտսեր խմբի 11-13 տարեկան աղջիկների համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ Բասս Դարկի թեսթի արդյունքների մշակման դեռահասների մոտ ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունների միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված ագրեսիայի հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Գրաֆիկ 2

Բասս Դարկի թեսթի արդյունքների մշակում կրտսեր խմբի 11- 13 տարեկան տղաների համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ Բասս Դարկի թեսթի արդյունքների մշակման դեռահասների մոտ ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունների միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված ագրեսիայի հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Գրաֆիկ 3

Բասս Դարկի թեսթի արդյունքների մշակում ավագ խմբի 14-16 տարեկան տղաների համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ Բասս Դարկի թեսթի արդյունքների մշակման դեռահասների մոտ ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունների միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված ագրեսիայի հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Գրաֆիկ 4

Բասս Դարկի թեսթի արդյունքների մշակում ավագ խմբի 14-16 տարեկան աղջիկների համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ Բասս Դարկի թեսթի արդյունքների մշակման դեռահասների մոտ ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունների միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված ագրեսիայի հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Հետազոտված բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի համար՝ ավագ և կրստեր տղաներ, ավագ և կրտսեր աղջիկներ, բացահայտվեցին հետևյալ առանձնահատկությունները. ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ, ի տարբերություն ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների, միևնույն տարիքային և սեռային խմբերում

1 / Ագրեսիայի դրսևորման ութ ձևերից յոթը վառ արտայատված են՝ ֆիզիկական ագրեսիա, անուղղակի ագրեսիա, նեգատիվիզմ, նյարդայնություն, խոսքային ագրեսիա, վիրավորանք և կասկածամտություն:

2/ Թույլ է արտահայտված մեղքի զգացումը, քանի որ նրանք խղճի խայթ չեն զգում և իրենց արարքները և ապրելակերպը չեն համարում սխալ:

Այսպիսով, Բասս Դարկի թեսթի դիսպերսիոն վերլուծությունից բացահայտվեց և հաստատվեց, որ ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ ագրեսիայի տարբեր ձևերի դրսևորման ինտենսիվությունը նշանակալիորեն ավելի բարձր է, քան ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների մոտ: Նաև կարող ենք փաստել, որ տղաների և աղջիկների մոտ ագրեսիայի դրսևորման ձևերը տարբեր են և տարիքը ևս ազդում է դեռահասների ագրեսիայի դրսևորման ձևերի վրա:

Տղաներին ավելի բնութագրական են ֆիզիկական, անուղղակի ագրեսիայի դրսևորումները, իսկ տղաների ավագ տարիքային խմբի մոտ կասկածամտությունը ավելի բարձր ցուցանիշ ունի քան կրտսեր տարիքի տղաների մոտ: Ինչպես նաև բացահայտվեցին տարբերություններ տղաների և աղջիկների մոտ կասկածամտության առումով. տղաների ավագ տարիքային խմբի մոտ կասկածամտությունը ավելի բարձր ցուցանիշ ունի, իսկ աղջիկների մոտ հակառակը՝ ավագ խմբում կասկածամտությունը նվազում է: Ագրեսիայի՝ վեբալ և դյուրագրգռության դրսևորումները ավելի հաճախ են ավագ աղջիկների և տղաների տարիքային խմբերում:

Տղաների մոտ տարիքի հետ մեծանում է ագրեսիայի անմիջական ֆիզիկական և վիրավորանքի ձևով դրսևորումների ինտենսիվությունը, իսկ աղջիկների մոտ՝ անուղղակի ագրեսիայի ինտենսիվությունը: Միաժամանակ, ադդիկտիվ վարքով չորս տարիքային խմբերում՝ թե աղջիկներին, թե տղաներին բնորոշ են մեղքի զգացման ցածր մակարդակ, նրանք խղճի խայթ չեն զգում և իրենց արարքները և ապրելակերպը չեն համարում սխալ:

Ագրեսիայի դրսևորման մյուս հինգ ձևերի առումով տղաների և աղջիկների միջև էական տարբերություններ չեն բացահայտվել:

Դիտարկենք Լ.Սոբչիկի դեռահասների համար ադապտացված «Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսոթյան հարցարան» հետազոտման մեթոդիակայի կիրառման արդյունքները: Նշենք, որ տվյալ մեթոդիկան հայերեն թարգմանվել և հետազոտության ընթացքում ադապտացվել է մեր կողմից:

Մեր կողմից կատարված դիսպերսիոն վերլուծության արդյունքում բացահայտվել է դեռահասների անձնային առանձնահատկությունների կապը նրանց սեռի և տարիքի հետ, ինչպես նաև ադդիկտիվ վարքի կազմավորման հանգամանքի հետ:

Դիսպերսիոն վերլուծությունը ցույց տվեց, որ դեռահասների անձնային առանձնահատկությունները քիչ են կապված նրանց սեռի հետ, և ավելի շատ կապված են տարիքի հետ: Միայն անհատականության և վատատեսության մակարդակն է հավասար տարբեր տղաների և աղջիկների մոտ:

Աղջիկների ավագ տարիքային խմբի մոտ վատատեսության մակարդակը ավելի ցածր է, քան նույն տարիքային խմբի տղաների մոտ: Համապատասխանաբար, անհատականության մակարդակը աղջիկների ավագ խմբում ավելի ցածր է, քան նույն խմբի տղաների մոտ՝ կրտսեր տարիքային խմբերում: Այս առումով էական տարբերություններ բացահայտված չեն: Այս մեթոդիկայով ուսումնասիրվող մյուս անձնային որակները էական տարբերություններ չեն տալիս տարբեր սեռերի դեռահասների մոտ: Տարիքն ավելի էական նշանակություն ունի դեռահասների անձնային որակների և ադդիկցիայի նկատմամբ հակման առումով:

Բացահայտվեց, որ կրտսեր և ավագ խմբերի մոտ տարբերվում են «անկայունություն», «իմպուլսիվություն», «ռիգիդություն», «անհատականություն» սանդղակները, այսինքն տվյալ մեթոդիկայում նշված յոթ սանդղակներից չորսը: Ինչպես նաև բացահայտվեց, որ ավագ տարիքային խմբի մոտ բարձր են ցուցանիշները «ռիգիդություն», «անհատականություն» սանդղակներով և ցածր են «վատատեսություն» սանդղակում: «Իմպուլսիվություն» սանդղակի ցուցանիշը ավելի բարձր է կրտսեր խմբի դեռահասների, հատկապես աղջիկների մոտ:

Դիսպերսիոն վերլուծությունը հաստատեց մեր վարկածում նշված այն հանգա-

մանքը, որ դեռահասների անձնային որակները խիստ կապված են դեռահասների՝ ադդիկտիվ վարքի կազմավորման և ադդիկտիվ վարքի չկազմավորման փաստի հետ: Բացահայտված են հավաստի տարբերություններ դեռահասների համար ադապտացված Լ.Սոբչիկի դեռահասների համար ադապտացված «MMPI» Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսոթյան հարցարանի յոթ սանդղակների միջին նշանակությունների առումով, ընդ որում՝ շատ բարձր մակարդակի նշանակալիությամբ՝ բոլոր սանդղակների համար $p < 0.001$:

Քանի, որ դեռահասների անձնային որակների և ադդիկտիվ վարքի երևույթի կապը ապացուցելը մեր հետազոտության նպատակներից մեկն է, բացահայտված տարբերությունները քննարկենք ավելի մանրամասն:

Գրաֆիկ 5

Լ.Սոբչիկի «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարան» դեռահասների համար ադապտացված մեթոդիկայի արդյունքների մշակում կրտսեր դեռահասների 11-13 տարեկան տղաների համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ Լ.Սոբչիկի «Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսոթյան հարցարան» դեռահասների համար ադապտացված մեթոդիկայի արդյունքների մշակման դեռահասների մոտ անձնային առանձնահատկությունների միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված անձի հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Տվյալ գրաֆիկի վերլուծությունը ցույց տվեց, որ ադդիկտիվ վարքով դեռահասների կրտսեր տարիքային խումբը ի տարբերություն ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի տղաների, բնութագրվում է

- լավատեսության հավաստի ցածր մակարդակով
- ինտրովերսիայի հավաստի ցածր մակարդակով
- անհատականության հավաստի բարձր մակարդկով
- ռիգիդության հավաստի ցածր մակարդակով
- վատատեսության բարձր մակարդակով:

Բացահայտված տարբերությունների հավաստիությունը արտահայտված է դիսպերսիոն վերլուծությամբ:

Ադդիկտիվ վարքով և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների կրտսեր տարի-քային խմբի տղաների միջև տագնապալիության և իմպուլսիվության բացահայտված տարբերություններ բացահայտված չեն:

Գրաֆիկ 6

Լ.Սոբչիկի «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարան» դեռահասների համար ադապտացված մեթոդիկայի արդյունքների մշակում ավագ դեռահասների ՝ տղաների «14-16 տարեկան» համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ Լ.Սոբչիկի «Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսոթյան հարցարան» դեռահասների համար ադապտացված մեթոդիկայի արդյունքների մշակման դեռահասների մոտ անձնային առանձնահատկությունների միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված անձի հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Տվյալ գրաֆիկի վերլուծությունը ցույց տվեց, որ ադդիկտիվ վարքով դեռահասների ավագ տարիքային խումբը ի տարբերություն ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի տղաների, բնութագրվում է

- լավատեսության հավաստի ցածր մակարդակով
- ինտրովերսիայի հավաստի ցածր մակարդակով
- անհատականության հավաստի բարձր մակարդկով
- ռիգիդության հավաստի ցածր մակարդակով
- վատատեսության բարձր մակարդակով:
- տագնապայնության հավաստի ավելի ցածր մակարդակով
- իմպուլսիվության հավաստի բարձր մակարդկով

Բացահայտված տարբերությունների հավաստիությունը արտահայտված է դիսպերսիոն վերլուծությամբ:

Գրաֆիկ 7

Լ.Սոբչիկի «Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսության հարցարան» դեռահասների համար ադապտացված մեթոդիկայի արդյունքների մշակում կրտսեր դեռահասների ՝ աղջիկների «11-13 տարեկան» համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ Լ.Սոբչիկի «Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսության հարցարան» դեռահասների համար ադապտացված մեթոդիկայի արդյունքների մշակման դեռահասների մոտ անձնային առանձնահատկությունների միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված անձի հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Տվյալ գրաֆիկի վերլուծությունը ցույց տվեց, որ ադդիկտիվ վարքով դեռահասների աղջիկների ավագ տարիքային խումբը ի տարբերություն ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի աղջիկների, բնութագրվում է

- լավատեսության հավաստի ցածր մակարդակով
- ինտրովերսիայի հավաստի ցածր մակարդակով
- անհատականության հավաստի բարձր մակարդկով
- ռիգիդության հավաստի ցածր մակարդակով
- վատատեսության բարձր մակարդակով
- տագնապի հավաստի ավելի բարձր մակարդակով:

Բացահայտված տարբերությունների հավաստիությունը արտահայտված է դիսպերսիոն վերլուծությամբ:

Ադդիկտիվ վարքով և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների աղջիկների կրտսեր տարիքային խմբերի միջև ըստ իմպուլսիվության սանդղակի, տարբերություններ բացահայտված չեն:

Գրաֆիկ 8

Լ.Սոբչիկի «Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսության հարցարան» դեռահասների համար ադապտացված մեթոդիկայի արդյունքների մշակում ավագ դեռահասների ՝ աղջիկների «14-16 տարեկան» համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ Լ.Սոբչիկի «Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսության հարցարան» դեռահասների համար ադապտացված մեթոդիկայի արդյունքների մշակման դեռահասների մոտ անձնային առանձնահատկությունների միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված անձի հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Տվյալ գրաֆիկի վերլուծությունը ցույց տվեց, որ ադդիկտիվ վարքով դեռահասների աղջիկների ավագ տարիքային խումբը ի տարբերություն ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի աղջիկների, բնութագրվում է

- լավատեսության հավաստի ցածր մակարդակով
- ինտրովերսիայի հավաստի ցածր մակարդակով
- անհատականության հավաստի բարձր մակարդկով
- ռիգիդության հավաստի ցածր մակարդակով
- իմպուլսիվության բարձր մակարդակով
- տագնապայնության հավաստի ավելի բարձր մակարդակով:

Ադդիկտիվ վարքով և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների աղջիկների ավագ տարիքային խմբերի միջև ըստ վատատեսության սանդղակի, տարբերություններ բացահայտված չեն:

Բացահայտված տարբերությունների հավաստիությունը արտահայտված է դիսպերսիոն վերլուծությամբ:

Լ.Սոբչիկի «Անձի բազմագործոն ուսումնասիրության մինեսոթյան հարցարան» դեռահասների համար ադապտացված հետազոտության արդյունքների վերլուծություն

Հետազոտված բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի համար՝ ավագ և կրտսեր դեռահաս տղաներ, ավագ և կրտսեր դեռահաս աղջիկներ բացահայտվեցին հետևյալ առանձնահատկությունները. ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ, ի տարբերություն ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների միևնույն տարիքային և սեռային խմբերում:

Ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ լավատեսությունը հավաստի ավելի ցածր է, քան ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների մոտ: Վերջիններիս մոտ այն կազմում է 50-60%, իսկ ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ 20-30 %:

Ինտրովերսիայի մակարդակը ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ հավաստիորեն ավելի ցածր է, քան ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների մոտ: Նշենք, որ ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ այն հասնում է ծայրահեղ ցածր նիշի 10 % ցածր: Իսկ ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների մոտ այն անցնում է

20%: Ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ անհատականության մակարդակը նշանակալիորեն ավելի բարձր է, քան ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների մոտ:

Ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների մոտ այն հազիվ հասնում է 10%, մինչդեռ, ադդիկտիվ վարք դրսևորող դեռահասների մոտ այն հասնում է 10-20%-ի:

Ադդիկտիվ վարքով դեռահասների ռիգիդությունը ավելի ցածր է, քան ադդիկտիվ վարք չունեցող դեռահասներինը: Այս տարբերությունը հատկապես վառ արտահայվում է ավագ տարիքային խմբերում: Ադդիկտիվ վարքով դեռահասների կրտսեր խմբերում այն ավելի բարձր է, քան ավագ խմբում:

Այսպիսով, ադդիկտիվ վարքով դեռահասների և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների մոտ բացահայտվեցին մեթոդիկայում նշված յոթ անձնային գծերից չորսում տարբերություններ, որոնք բնութագրական են երկու սեռերի և երկու տարիքային խմբերի դեռահասների համար:

Հետազոտված չորս խմբերից երեքի մոտ ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ բացահայտվեց վատատեսության բարձր մակարդակ: Աղջիկների ավագ խմբի մոտ այն բացահայտված չէ:

Ադդիկտիվ վարքով ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների ավագ խմբերում բացահայտվեց իմպուլսիվության բարձր մակարդակ: Կրտեր դեռահասների երկու խմբերում իմպուլսիվության մակարդակը բավականին բարձր է մինչև 50%: Իմպուլսիվության մակարդակը ադդիկտիվ վարքով դեռահասների ավագ խմբերում մնում է շատ բարձր, իսկ ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների մոտ իջնում է մինչև 20-30 %:

Երկու տարիքային խմբերի աղջիկների մոտ բացահայտվեց, որ տագնապի մակարդակը ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ ավելի բարձ է, քան ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների մոտ: Իսկ տղաների ավագ խմբերում, հակառակը, ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ տագնապի մակարդակը ավելի ցածր է, քան ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների մոտ: Տղաների կրտսեր խմբերում ադդիկտիվ վարքով դեռահասների և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների միջև տագնապի մակարդակի էական տարբերություններ չեն բացահայտվել:

Այսպիսով, ադդիկտիվ վարքով դեռահասներին հոգեբանական առումով կարելի

է բնութագրել այսպես. ավելի շատ վատատես են, ավելի քիչ լավատես, ավելի քիչ հակված ինտրովերսիայի. ավելի անհատականացված, ավելի քիչ ռիգիդ: Ադդիկտիվ վարքով աղջիկները ավելի տագնապային են :

Ադդիկտիվ վարքով դեռահասների ավագ խմբին բնորոշ է իմպուլսիվության ավելի բարձր մակարդակ: Ադդիկտիվ վարք չունեցող դեռահասները ավելի շատ լավատես են, ավելի քիչ վատատես, ավելի շատ հակված ինտրովերսիայի, ավելի քիչ անհատականացված, ավելի շատ ռիգիդ: Ադդիկտիվ վարքով և ադդիկտիվ վարք չունեցող կրտսեր տարիքի աղջիկները ավելի քիչ տագնապալի են, իսկ ավագ տարիքային խմբում բնորոշ է ավելի քիչ իմպուլսիվություն:

Այսպիսով, ընդհանրացնելով արդյունքները, կարելի նշել, որ տագնապի սանդղակի բարձր մակարդակը բնութագրում է պասիվ դիրքորոշում, անվստահություն սեփական ուժերին, բարձր զգայունություն միջավայրի ազդեցությունների նկատմամբ, զգոնության բարձր մակարդակ վտանգի դեպքում, գերակշռում է անհաջողությունից խուսափելու դրդապատճառը, զգայունությունը, շրջապատի հետ համարժեք հարաբերությունների դիրքորոշումը, մեծամասնության կարծիքից կախվածությունը: Այդ պատճառով վերը թվարկած դեռահասների անձնային առանձնահատկությունները կարող են խթան լինել հոգեակտիվ նյութեր օգտագործելու համար:

Վատատեսության սանդղակի բարձր ցուցանիշը ենթադրում է անձի առանձնահատկություններ, որոնք կարող են խոչընդոտել սոցիալական միջավայրի հետ շփվելու: Հոգեակտիվ նյութեր օգտագործող դեռահասների մոտ այս սանդղակի ցուցանիշը բարձր է, որը վկայում է այն մասին, որ այս տարիքին բնորոշ պահանջմունքները չեն գտնում իրենց բավարարման հնարավորությունները և համապատասխանաբար առաջանում է պահանջմունքային վիճակների լարված դաշտ, ինչը կարող է նպաստել հոգեակտիվ նյութերի օգտագործմանը:

Իմպուլսիվության սանդղակի բարձր ցուցանիշը բացահայտում է ակտիվ անձնային դիրքորոշում, բարձր որոնողական ակտիվություն, դրդապատճառներում գերակշռում է նվաճումների դրդապատճառը, արագ և վստահ են որոշումներ կայացնում: Հաջողության հասնելու դրդապատճառը այստեղ սերտ կապված է ուժեղ ցանկությունների իրականացման կամքի հետ, որոնք միշտ չէ, որ ենթարկվում են

բանականության կառավարմանը: Որքան քիչ է հասուն անձը, այնքան մեծ է ինքնաբերական ակտիվության դրսևորման ռիսկը՝ ուղղված որևէ րոպեական պահանջմունքի բավարարմանը, անգամ ի հակադրություն շրջապատող միջավայրի հետաքրքրությունների:

Անհատականության սանդղակի ցածր ցուցանիշները վկայում են այն մասին, որ դեռահասության տարիքում գերակշռում է ընկալման վերացական-վերլուծական ոճը, որը դրսևորվում է նվազագույն ինֆորմացիայի հիման վրա ամբողջական կերպարներ ստեղծելու, ընդունակությամբ: Բնութագրական է նաև սոցիալական կոնտակտներում ընտրողականությունը, մարդկանց և երևույթները գնահատելիս սուբյեկտիվության, հայացքների անկախության և վերացարկման հակումը:

Դեռահասին դժվար է հարմարվել կյանքի առօրյա ձևերին, ինչը կարող է նպաստել ադդիկտիվ վարքի կազմավորմանը:

Ռիգիդության սանդղակի բարձր ցուցանիշը ցույց է տալիս հետաքրքրությունների կայունություն, համառություն, դիրքորքշումների սթենիկություն, կենսական դիրքորոշման ակտիվություն, որը մեծանում է արտաքին ուժերի հակազդեցության պարագայում, գործնականություն, կյանքի նկատմամբ հայացքների սթափություն, արտահայտված մրցակցություն, որը մատնանշաում է ադդիկտիվ վարքի հակվածությունը:

Լավատեսություն սանդղակի բարձր ցուցանիշները արտահայտում են դիքորոշումների ակտիվություն, կենսախինդություն, ինքնավստահություն, դրական ինքնագնահատական, կատակելու հակում, նվաճումների հասնելու բարձր մոտիվացիա, որը ցույց է տալիս սթրեսի նկատմամբ կայունություն, ինչպես նաև հակվածություն ադդիկտիվ վարքի նկատմամբ:

Առաջին խմբին, ինչպես աղջիկներին, այնպես էլ տղաներին, ավելի բնորոշ են շփման և ընդհանրապես սոցիալական հաղորդակցման պրոբլեմները, որը հաստատվում է ինտրովերսիայի սանդղակով ստացած բարձր ցուցանիշով, ինչը անուղղակիորեն ցույց է տալիս ադդիկտիվ վարքի չընդունելու փաստը:

Այսպիսով, ստացված արդյունքները մատնանշում են ադդիկտիվ վարքով և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների անձնային գծերի, սեռային և տարիքային

էական, հավաստի տարբերություններ:

Մեր կողմից կատարված դիսպերսիոն վերլուծության արդյունքում բացահայտվել է դեռահասների բնավորության ընդգծվածության կապը նրանց սեռի և տարիքի հետ, ինչպես նաև ադդիկտիվ վարքի առկայության և ադդիկտիվ վարք չունենալու հանգամանքի հետ:

«Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշարի դիսպերսիոն վերլուծությունը ցույց տվեց, որ դեռահասների վարքի առանձնահատկությունները կապված չեն նրանց սեռի հետ: Տարիքը ունի որոշակի նշանակություն դեռահասի վարքի որոշ առանձնահատկությունների առումով: Բացահայտվեց, որ դեռահասների կրտսեր և ավագ խմբերում տարբեր են բնավորության ընդգծվածության զգայուն, պսիխաստենիկ և լաբիլ տիպերը ըստ արտահայտվածության աստիճանի: Հետազոտությունը ցույց տվեց, որ ավագ խմբի դեռահասների մոտ ավելի վառ արտահայտված է զգայունությունը և լաբիլությունը: Աղջիկների ավագ խմբի մոտ ավելի բարձր են պսիխաստենիկի ցուցանիշները: Անկայուն, հիպերտիմ, հիստերոիդ և շիզոիդ տիպերի արտահայտվածության առումով, դեռահասների կրտսեր և ավագ խմբերում տարբերություններ բացահայտված չեն:

Դիսպերսիոն վերլուծությունը հաստատեց մեր վարկածում նշված այն հանգամանքը, որ դեռահասների վարքի առանձնահատկությունները խիստ կապված են դեռահասների կողմից ադդիկտիվ վարք ունենալու կամ ադդիկտիվ վարք չունենալու փաստի հետ:

Բացահայտված են հավաստի տարբերություններ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցարանի՝ բնավորության շեշտվածության յոթ միջին նշանակությունների առումով, ընդ որում՝ շատ բարձր մակարդակի նշանակալիությամբ՝ բոլոր սանդղակների համար $p < 0.001$:

Քանի, որ դեռահասների վարքի, տարիքային և սեռային առանձնահատկությունների ադդիկտիվ վարքի կազմավորվելու երևույթի կապը ապացուցելը մեր հետազոտության նպատակներից մեկն է, բացահայտված տարբերությունները քննարկենք ավելի մանրամասն:

Գրաֆիկ 9

«Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշար մեթոդիկայի արդյունքների մշակում կրտսեր դեռահասների ՝ տղաների «11-13 տարեկան» համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշարի արդյունքների մշակման դեռահասների մոտ բնավորության շեշտվածության միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված բնավորության ընդգծվածության հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Գրաֆիկ 10

«Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշար մեթոդիկայի արդյունքների մշակում ավագ դեռահասների ՝ տղաների «14-16 տարեկան» համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշարի արդյունքների մշակման դեռահասների մոտ բնավորության շեշտվածության միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված բնավորության ընդգծվածության հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Գրաֆիկ 11

«Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշար մեթոդիկայի արդյունքների մշակում կրտսեր դեռահասների ՝ աղջիկների «11-13 տարեկան» համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշարի արդյունքների մշակման դեռահասների մոտ բնավորության շեշտվածության միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված բնավորության ընդգծվածության հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Գրաֆիկ 12

«Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշար մեթոդիկայի արդյունքների մշակում ավագ դեռահասների՝ աղջիկների «14-16 տարեկան» համար



Գրաֆիկում ներկայացված են ըստ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշարի արդյունքների մշակման դեռահասների մոտ բնավորության շեշտվածության միջինացված պրոֆիլները: Օրդինատների առանցքով ցույց են տրված բնավորության ընդգծվածության հետազոտված պարամետրերը: Իսկ աբսցիսների առանցքով՝ համապատասխան ցուցանիշի նշանակությունը: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված անձնային պրոֆիլը: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Հետազոտված բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի համար՝ ավագ և կրտսեր տղաներ, ավագ և կրտսեր աղջիկներ բացահայտվեցին հետևյալ առանձնահատկությունները. ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ, ի տարբերություն ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների, միևնույն տարիքային և սեռային խմբերում

Ավելի թույլ է արտահայտված բնավորության շեշտվածության լաբիլ տիպը:

Ավելի թույլ է արտահայտված բնավորության շեշտվածության շիզոիդ տիպը:

Ավելի թույլ է արտահայտված բնավորության շեշտվածության պսիխասթենիկ տիպը:

Ավելի ուժեղ է արտահայտված բնավորության շեշտվածության հիստերոիդ տիպը:

Ավելի ուժեղ է արտահայտված բնավորության շեշտվածության հիպերտիմ տիպը:

Ավելի թույլ է արտահայտված բնավորության շեշտվածության զգայուն տիպը:

Ավելի ուժեղ է արտահայտված բնավորության շեշտվածության անկայուն տիպը:

Ադդիկտիվ վարքով դեռահասի մոտ լաբիլ տիպի թույլ արտահայտվածությունը, որը չի գերազանցում 10 տոկոսը, խոսում է այն մասին, որ նրանք հակված չեն տրամադրության փոփոխականության, տպավորվողականության, նրանց հուզական վիճակը կայուն է:

Բնավորության շիզոիդ թույլ արտահայտվածությունը ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ «մոտ10%» վկայում է, որ նրանց բնորոշ չէ ինքնանփոփությունը, նրանք հեշտ են կոնտակտի մեջ մտնում և նրանց կյանքում արտաքին աշխարհը դոմինանտ է ներքին աշխարհի նկատմամբ:

Բոլոր հետազոտված դեռահասներին բնորոշ է ընգծվածության պսիպաստենիկ տիպի թույլ արտահայտվածություն: Հարկ է նշել, որ ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ այս գործոնը չի հասնում նույնիսկ 10%: Դա նշանակում է, որ բոլոր հետազոտված դեռահասները հակված չեն ֆրուստրացիաների, ինքնավստահ են, հեշտ են որոշումներ կայացնում: Ադդիկտիվ վարքով դեռահասների մեջ այս գծերն ավելի վառ են արտահայտված:

Ադդիկտիվ վարքով դեռահասները ավելի շատ բնութագրվում են հիստերոիդ շեշտվածությամբ, նրանք ձգտում են ցանկացած գնով ուշադրություն գրավել, եսակենտրոն են, հակված են ցուցադրական վարքի:

Ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ հեպերտիմ սանդղակի բարձր մակարդակը խոսում է իշխելու, սոցիալական տարածությունը անտեսելու, ինքնավստահության և մշտական բարձր տրամադրության մասին:

Ադդիկտիվ վարքով դեռահասների զգայունություն սանդղակով ստացած ցածր ցուցանիշները վկայում են պատասխանատվության զգացման ցածր մակարդակի, քիչ տպավորվողականության մասին: Նրանք հեշտ են մտնում նոր կոնտակտների մեջ, լավ են հարմարվում փոփոխվող իրավիճակներին:

Ադդիկտիվ վարքով դեռահասների համար ստացված բարձր ցուցանիշը անկայունության սանդղակում, բնութագրում է դեռահասներին որպես մակերեսային, ընդունված սոցիալական նորմերը վատ յուրացնող անձ:

Ընհանրացնելով վերը շարադրվածը, կարող ենք եզրակացնել, որ ադդիկտիվ վարքով դեռահասները գերազանցապես բնութագրվում են բնավորության հիստերոիդ, հիպերտիմ, անկայուն ընդգծվածությամբ: Իսկ ադդիկտիվ վարք չունեցող դեռահասները բնութագրվում են լաբիլ, շիզոիդ և զգայուն տիպերով:

Պսիխաստենիկ ակցենտուացիան թույլ է դրսևորվել հետազոտված խմբերում, ընդ որում այն ավելի բնութագրական է ադդիկտիվ վարք չունեցող դեռահասներին: Անկայուն սանդղակով բարձր ցուցանիշներ ստացած դեռահասները դժվարությամբ են յուրացնում վարքի սոցիալապես խրախուսելի ձևեր, ունեն իմացական մակերեսային հետաքրքրություններ, որոնք դրսևորվում են զվարճանքներում: Նրանք հեշտությամբ են խախտում սոցիալապես ընդունելի նորմերը, ձգտում են փողոցային խմբերի, բայց վախկոտության և նախաձեռնողականության պակասի պատճառով միշտ հայտնվում են ենթակա դիրքում, ցանկացած դժվարությունից ձգտում են փախչել: Ադդիկտիվ վարքը նրանց մոտ կապված է զվարճանալու ցանկության հետ:

Հիպերտիմ դեռահասներին բնորոշ է անկախության, ինքնուրույնության ձգտումը, նրանք ըմբոստանում են ազատությունը սահմանափակող օրենքների դեմ: Մեծահասկաների կողմից նրանց կառավարելու փորձերը միայն մեծացնում են ըմբոստությունը: Այս դեռահասները տարբերվում են կենսական ակտիվ ուժերով, դրական տրամադրությամբ, վատ են պահպանում սոցիալական տարածությունը կոնտակտներում՝ ձգտելով իշխել: Մեծ շփվողականությունը և ծանոթությունների

նկատմամբ ոչ ընտրողական վերաբերմունքը նրանց տանում են հաճախ ասոցիալ խմբեր: Ադդիկտիվ վարքը կարող է կապված լինել ինչ-որ նոր բան փորձելու ցանկության հետ: Հիստերոիդ որակների գերակշռությունը վկայում է հոգեբանական դեզադապտացիայի, ինչպես նաև հասարակական միջավայրի հետ կապերի խանգարման մասին: Հայտնի է, որ հիստերոիդների կենտրոնական գիծը եսակենտրոնականությունն է, իր նկատմամբ ուշադրության անհագուրդ պահանջը, հիացմունք, զարմանք, հարգանք, կարեկցանք առաջացնելը, ինչպես նաև ստախոսությունը և վառ երևակայությունը: Հուզականության արտաքին դրսևորումների տակ թաքնված է խորը զգացմունքների անընդունակությունը, ապրումների թաթերականացումը, այդ պատճառով ադդիկտիվ վարքը կարող է կրել ցուցադրական բնույթ:

Զգայուն սանդղակով բարձր ցուցանիշ ունեցող դեռահասները բնութագրվում են անլիարժեքության զգացումով, երբեմն կարող է պատահել նաև գերկոմպենսացիայի հակազդումներ – ձգտում են հաջողության հասնել հենց այն ոլորտում, որ ոլորտում տեղայնացված է թերարժեքությունը: Նրանց մոտ ձևավորվում են էթիկական բարձր պահանջներ իրենց և շրջապատի նկատմամբ, ինչի պատճառով ադդիկտիվ վարք չեն ցուցադրում:

Շիզոիդ սանդղակի բարձր ցուցանիշները վկայում են ինքնանփոփության, հակասական հույզերի և ներաշխարհի հակասականության մասին: Ինքնագնահատականում երբեմն կարող է դրսևորվել նոնկոնֆորմիզմ: Զգացմունքների զսպվածությունը և ամփոփվածությունը երբեմն նպաստում են ձևական կոնտակտների պահպանմանը: Այս դեռահասները ադդիկտիվ վարքով գրեթե հետաքրքրված չեն:

Լաբիլ սանդղակի բարձր ցուցանիշները խոսում են տրամադրության և ընդհանուր հուզական վիճակի փոփոխականության մասին, ավելորդ տպավորվողականության մասին: Տրամադրությունից է կախված նրանց քունը, աշխատունակությունը, շփումը, զգացմունքները և կապվածությունները խորն են և անկեղծ, հատկապես այն մարդկանց նկատմամբ, ովքեր հոգատար են վերաբերվում նրանց: Այս դեռահասները խուսափում են էքսցեսներից և ծայրահեղություններից:

Այսպիսով հաստատվեց, որ ադդիկտիվ վարքով դեռահասներին և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասներին բնորոշ են բնավորության ընդգծվածության տարբեր

տեսակներ: Ադդիկտիվ վարքով բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի համար՝ ավագ և կրստեր տղաներ, ավագ և կրտսեր աղջիկներ դեռահասներին բնորոշ են հիստերոիդ, հիպերտիմ, զգայուն և անկայուն տիպերը: Ադդիկտիվ վարք չունեցող բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի համար՝ ավագ և կրստեր տղաներ, ավագ և կրտսեր աղջիկներ դեռահասներին բնորոշ են լաբիլ, շիզոիդ, պսիխաստենիկ տիպերը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը շարադրվածը, կարող ենք ներկայացնել ադդիկտիվ վարքով և ադդիկտիվ վարք չունեցող աղջիկների և տղաների կրտսեր և ավագ տարիքային խմբերի սոցիալ-հոգեբանական և անձնային առանձնահատկությունների հետազոտության արդյունքները:

Գրաֆիկ 13

Ավագ խմբի աղջիկների «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշարի, Լ.Սոբչիկի «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարանի» և Բասս Դարկի թեստի վերլուծությունների ամփոփ ներկայացում



Գրաֆիկում ներկայացված են ըստ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա», Լ.Սոբչիկի «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարանի» և Բասս Դարկի թեստի արդյունքների ամփոփ մշակված միջինացված պրոֆիլները: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված պրոֆիլները: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված պրոֆիլները: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Այսպիսով, ամփոփելով հետազոտության արդյունքները կարող ենք փաստել, որ ադդիկտիվ վարքով ավագ խմբի աղջիկների վատատեսության, իմպուլսիվության, տագնապայնության, անհատականության սանդղակների մակարդակները անհամեմատ բարձր են, քան նույն տարիքային խմբի ադդիկտիվ վարք չունեցող աղջիների մոտ, որոնք բնութագրվում են լավատեսության, ռիգիդության և ինտրովերսիայի բարձր մակարդակներով:

Հետազոտված ադդիկտիվ վարքով ավագ խմբի աղջիկների մոտ բացահայտվեցին բնավորության ընդգծվածության անկայուն, հիպերտիմ և հիստերոիդ. բնավորության ընդգծվածության տիպերը, իսկ ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի աղջիկների մոտ բացահայտվեցին սենզիտիվ, պսիխաստենիկ, շիզոիդ և լաբիլ բնավորության ընդգծվածության տիպերը:

Հետազոտված ադդիկտիվ վարքով ավագ խմբի աղջիկների մոտ ագրեսիայի դրսևորման ութ ձևերից յոթը վառ արտայատված են՝ ֆիզիկական ագրեսիա, անուղղակի ագրեսիա, նեգատիվիզմ, նյարդայնություն, խոսքային ագրեսիա, վիրավորանք և կասկածամտություն: Ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի աղջիկների մոտ վառ արտայատված է մեղքի զգացման դրսևորման ինտենսիվությունը:

Ամփոփելով հետազոտության արդյունքները կարող ենք փաստել, որ ադդիկտիվ վարքով կրտսեր խմբի աղջիկների վատատեսության, տագնապայնության, սանդղակների մակարդակները անհամեմատ բարձր են, քան նույն տարիքային խմբի ադդիկտիվ վարք չունեցող աղջիների մոտ, որոնք բնութագրվում են լավատեսության, ռիգիդության և ինտրովերսիայի բարձր մակարդակներով:

Հետազոտված ադդիկտիվ վարքով կրտսեր խմբի աղջիկների մոտ բացահայտվեցին բնավորության ընդգծվածության անկայուն, հիպերտիմ և հիստերոիդ. բնավորության ընդգծվածության տիպերը, իսկ ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի աղջիկների մոտ բացահայտվեցին սենզիտիվ, պսիխաստենիկ, շիզոիդ և լաբիլ բնավորության ընդգծվածության տիպերը:

Հետազոտված ադդիկտիվ վարքով կրտսեր խմբի աղջիկների մոտ ագրեսիայի դրսևորման ութ ձևերից յոթը վառ արտայատված են՝ ֆիզիկական ագրեսիա, անուղղակի

ագրեսիա, նեգատիվիզմ, նյարդայնություն, խոսքային ագրեսիա, վիրավորանք և կասկածամտություն: Ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի աղջիկների մոտ վառ արտայատված է մեղքի զգացման դրսևորման ինտենսիվությունը:

Գրաֆիկ 14

Կրտսեր խմբի աղջիկների «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշարի, Լ.Սոբչիկի «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարանի» և Բասս Դարկի թեսթի վերլուծությունների ամփոփ ներկայացում



Գրաֆիկում ներկայացված են ըստ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա», Լ.Սոբչիկի «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարանի» և Բասս Դարկի թեսթի արդյունքների ամփոփ մշակված միջինացված պրոֆիլները: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված պրոֆիլները: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված պրոֆիլները: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Հետազոտված ադդիկտիվ վարքով կրտսեր խմբի տղաների վատատեսության, տագնապայնության, սանդղակների մակարդակները անհամեմատ բարձր են, քան նույն տարիքային խմբի ադդիկտիվ վարք չունեցող տղաների մոտ, որոնք բնութագրվում են լավատեսության, ռիգիդության բարձր մակարդակներով:

Հետազոտված ադդիկտիվ վարքով կրտսեր խմբի տղաների մոտ բացահայտվեցին բնավորության ընդգծվածության անկայուն, հիպերտիմ և հիստերոիդ. բնավորության ընդգծվածության տիպերը, իսկ ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի տղաների մոտ բացահայտվեցին սենզիտիվ և լաբիլ բնավորության ընդգծվածության տիպերը:

Հետազոտված ադդիկտիվ վարքով կրտսեր խմբի տղաների մոտ ագրեսիայի դրսևորման ութ ձևերից յոթը վառ արտայատված են՝ ֆիզիկական ագրեսիա, նեգատիվիզմ, վիրավորանք: Ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի տղաների մոտ վառ արտայատված է մեղքի զգացման դրսևորման ինտենսիվությունը:

Գրաֆիկ 15

Կրտսեր խմբի տղաների «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշարի, Լ.Սոբչիկի «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարանի» և Բասս Դարկի թեսթի վերլուծությունների ամփոփ ներկայացում



Գրաֆիկում ներկայացված են ըստ »Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա», Լ.Սոբչիկի «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարանի» և Բասս Դարկի թեսթի արդյունքների ամփոփ մշակված միջինացված պրոֆիլները: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված պրոֆիլները: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված պրոֆիլները: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Հետազոտված ադդիկտիվ վարքով ավագ խմբի տղաների վատատեսության, տագնապայնության, սանդղակների մակարդակները անհամեմատ բարձր են, քան նույն տարիքային խմբի ադդիկտիվ վարք չունեցող տղաների մոտ, որոնք բնութագրվում են լավատեսության, ռիգիդության բարձր մակարդակներով:

Հետազոտված ադդիկտիվ վարքով ավագ խմբի տղաների մոտ բացահայտվեցին բնավորության ընդգծվածության անկայուն, և հիստերոիդ. տիպերը, ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի տղաների մոտ բացահայտվեցին սենզիտիվ և լաբիլ բնավորության ընդգծվածության տիպերը:

Հետազոտված ադդիկտիվ վարքով ավագ խմբի տղաների մոտ ագրեսիայի դրսևորման ութ ձևերից յոթը վառ արտայատված են՝ ֆիզիկական ագրեսիա, նեգատիվիզմ, վիրավորանք: Ադդիկտիվ վարք չունեցող նույն տարիքային խմբի տղաների մոտ վառ արտայատված է մեղքի զգացման դրսևորման ինտենսիվությունը:

Գրաֆիկ 16

Ավագ խմբի տղաների «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշարի, Լ.Սոբչիկի «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարանի» և Բասս Դարկի թեստի վերլուծությունների ամփոփ ներկայացում



Գրաֆիկում ներկայացված են ըստ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա», Լ.Սոբչիկի «Անձի բազմակողմանի ուսումնասիրության մինեսոթյան հարցարանի» և Բասս Դարկի թեստի արդյունքների ամփոփ մշակված միջինացված պրոֆիլները: Կարմիր գույնով տրված են ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված պրոֆիլները: Երկնագույն գույնով՝ տրված են ադդիկտիվ վարքով դեռահասների տվյալ տարիքային խմբի միջինացված պրոֆիլները: Կառուցված պրոֆիլների միջին արժեքների համար սահմանված են 95 % վստահելի ինտերվալներ:

Այսպիսով, ստացված արդյունքները մատնանշում են ադդիկտիվ վարքով դեռահասների բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի համար՝ ավագ և կրտսեր տղաներ, ավագ և կրտսեր աղջիկներ և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների չորս տարիքային և սեռային խմբերի անձնային գծերի հետևյալ տարբերություններ. ադդիկտի վարքով դեռահասների մոտ բացահայտվեց վատատեսության, տագնապության, իմպուլսիվության բարձր մակարդակ: Ունեն մեղքի ավելի ցածր զգացում, չեն համարում իրենց կենսակերպը և արարքները սխալ:

Դեռահասների հետազոտված չորս տարիքային խմբերում բացահայտվեցին հոգեկան զարգացման հետևյալ սեռային և տարիքային տարբերությունները: Ադդիկտիվ վարքով աղջիկների ավագ խմբում դիտվում է տագնապության բարձր մակարդակ, իսկ տղաների նույն խմբում վատատեսության բարձր մակարդակ: Կրտսեր տարիքի աղջիկների տագնապայնության մակարդակը զգալիորեն բարձր է քան ավագ խմբի աղջիկներինը: Կրտսեր տղաների խմբի տագնապայնության և վատատեսության մակարդակները ավագ տղաների խմբի հետ համեմատ բարձր են:

Ադդիկտիվ վարքով բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի համար՝ ավագ և կրտսեր տղաներ, ավագ և կրտսեր աղջիկներ և ադդիկտիվ վարք չունեցող ավագ և կրտսեր տղաներին, ավագ և կրտսեր աղջիկներին բնորոշ են բնավորության ընդգծվածության տարբեր տեսակներ: Ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ ավելի ուժեղ է արտահայտված բնավորության շեշտվածության հիստերոիդ, հիպերտիմ, զգայուն և անկայուն տիպը: Բացահայտվեց և հաստատվեց, որ ադդիկտիվ վարքով դեռահասների բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի մոտ ագրեսիայի տարբեր ձևերի դրսևորման ինտենսիվությունը նշանակալիորեն ավելի բարձր է, քան ադդիկտիվ վարք չունեցող բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի դեռահասների մոտ: Հետազոտված տարիքային խմբերում բացահայտվեցին հետևյալ սեռային տարբերությունները: Ֆիզիկական, անուղղակի ագրեսիայի դրսևորումները ավելի բնութագրական են տղաներին քան աղջիկներին, տղաների ավագ տարիքային խմբի մոտ կասկածամտությունը ավելի բարձր ցուցանիշ ունի, իսկ աղջիկների մոտ այն նվազում է: Ագրեսիայի՝ վերբալ և դյուրագրգռության դրսևորումները ավելի հաճախ են տղաների և աղջիկների ավագ տարիքային խմբերում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր կոմից իրականացված տեսական և փորձարարական հետազոտության վերլուծությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Դեռահասի ադդիկտիվ վարքի հիմնախնդիրը ոչ միայն ժամանակակից գիտության այլ նաև քաղաքակիրթ կյանքի հրատապ լուծում պահանջող խնդիրներից է: Հետազոտված գրականությունը ցույց տվեց, որ դեռահասի տարիքային առանձնահատկությունները նրան շատ խոցելի են դարձնում անբարենպաստ ազդեցությունների և կյանքի դժվարությունների հանդեպ: Հաճախ նրանք պատրաստ չեն կյանքի կոշտ պայմաններին, ընդունակ չեն ինքնուրույն ընտրություն կատարելու և պատասխանատվություն կրելու, ինչի պատճառով հաճախ հայտնվում են սթրեսային իրավիճակներում: Չունենալով կյանքի հմտություններ և լարվածությունից ազատվելու արդյունավետ միջոցներ, նրանք հաճախ հակվում են դեպի ադդիկտիվ վարքը: Հատկապես հայկական իրականության մեջ ծնողների կողմից չափազանցված մոտեցումը՝ ինչ գնով ուզում է լինի վերահսկել դեռահասների գործունեությունը և կյանքը ընդհուպ մինչև անմիջական ենթակայություն պահանջելը, դեռահասի փոխարեն որոշումներ կայացնելը, նրան անընդունակ համարելը ինքնուրույն գործունեության, մղում են դեռահասին անկախություն ձեռք բերել՝ ադդիկտիվ վարքի գնով:

2. Ադդիկտիվ վարքը որպես դեռահասության շրջանում ադապտացիայի խանգարման յուրահատուկ տարատեսակ բնութագրվում է որպես մեկ կամ մի քանի հոգեակտիվ նյութերի չարաշահում՝ առանց հոգեկան և ֆիզիկական կախվածության նշանների՝ համակցված վարքի այլ խանգարումների հետ:

3. Դեռահասների ադդիկտիվ վարքի ձևավորման մեխանիզմները և օրինաչափությունները անմիջականորեն կապված են ինչպես սոցիալ-հոգեբանական գործոնների, այնպես էլ դեռահասի անձի, նրա հոգեկան զարգացման տարիքային և սեռային առանձնահատկությունների հետ, որոնք դեռահասին դարձնում են ավելի խոցելի ադդիկտիվ վարքի ձևավորման գործընթացում:

4. Ադդիկտիվ վարքով և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների հետ անց կացված հետազոտությունների համեմատական վերլուծությունը թույլ տվեց բացահայտել

հայ դեռահասների հոգեկան զարգացման անձնային, տարիքային և սեռային տարբերությունները:

5. Ստացված արդյունքները մատնանշում են ադդիկտիվ վարքով դեռահասների բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի համար՝ ավագ և կրստեր տղաներ, ավագ և կրտսեր աղջիկներ և ադդիկտիվ վարք չունեցող դեռահասների չորս տարիքային և սեռային խմբերի անձնային գծերի հետևյալ տարբերություններ. ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ բացահայտվեց վատատեսության, տագնապության, իմպուլսիվության բարձր մակարդակ: Ունեն մեղքի ավելի ցածր զգացում, չեն համարում իրենց կենսակերպը և արարքները սխալ:

Դեռահասների հետազոտված չորս տարիքային խմբերում բացահայտվեցին հոգեկան զարգացման հետևյալ սեռային և տարիքային տարբերությունները: Ադդիկտիվ վարքով աղջիկների ավագ խմբում դիտվում է տագնապության բարձր մակարդակ, իսկ տղաների նույն խմբում վատատեսության բարձր մակարդակ: Կրտսեր տարիքի աղջիկների տագնապայնության մակարդակը զգալիորեն բարձր է քան ավագ խմբի աղջիկներինը: Կրտսեր տղաների խմբի տագնապայնության և վատատեսության մակարդակները ավագ տղաների խմբի հետ համեմատ բարձր են:

6. Տղա և աղջիկ դեռահասների երկու տարիքային խմբերում անց կացված հարցման արդյունքները ցույց տվեցին, որ ադդիկտիվ վարքի ամենատարածված դրդապաըճառը 11-13 տարեկան տղաների մոտ խմբից ետ չմնալն է, հետաքրքրասիրությունը, անծանոթ զգացողությունը և ծնողների պահանջներին ընդդիմամանալն է: 14-16 տարեկան տղաների մոտ ամենատարածված դրդապատճառը ծնողների պահանջներին ընդդիմամանալն է, ապա ազատ զգալու ցանկությունը և հետաքրասիրությունը:

Աղջիկների 11-13 տարեկանների մոտ տիրապետող դրդապատճառը հետաքրքրությունն է, խմբից ետ չմնալը, ապա ցուցադրել հասակակիցներին սեփական անկախությունը: 14-16 տարեկան աղջիկների մոտ տիրապետող դրդապատճառը ծնողների պահանջներին ընդդիմանալը, հետո ցուցադրել հասակակիցներին սեփական անկախությունը:

7. Ադդիկտիվ վարքով բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի համար՝ ավագ

և կրտսեր տղաներ, ավագ և կրտսեր աղջիկներ և ադդիկտիվ վարք չունեցող ավագ և կրտսեր տղաներին, ավագ և կրտսեր աղջիկներին բնորոշ են բնավորության ընդգծվածության տարբեր տեսակներ: Ադդիկտիվ վարքով դեռահասների մոտ ավելի ուժեղ է արտահայտված բնավորության շեշտվածության հիստերոիդ, հիպերտիմ, զգայուն և անկայուն տիպը:

8. Բացահայտվեց և հաստատվեց, որ ադդիկտիվ վարքով դեռահասների բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի մոտ ագրեսիայի տարբեր ձևերի դրսևորման ինտենսիվությունը նշանակալիորեն ավելի բարձր է, քան ադդիկտիվ վարք չունեցող բոլոր չորս տարիքային և սեռային խմբերի դեռահասների մոտ: Հետազոտված տարիքային խմբերում բացահայտվեցին հետևյալ սեռային տարբերությունները: Ֆիզիկական, անուղղակի ագրեսիայի դրսևորումները ավելի բնութագրական են տղաներին քան աղջիկներին, տղաների ավագ տարիքային խմբի մոտ կասկածամտությունը ավելի բարձր ցուցանիշ ունի, իսկ աղջիկների մոտ այն նվազում է: Ագրեսիայի՝ վերբալ և դյուրագրգռության դրսևորումները ավելի հաճախ են տղաների և աղջիկների ավագ տարիքային խմբերում:

9. Հայաստանում անց կացված հետազոտությունները կարող են տվյալ խնդրի համար լրացուցիչ նյութ հանդիսանալ հետագա՝ ինչպես տեսական վերլուծությունների, այնպես էլ գործնական՝ ախտորոշիչ, շտկիչ և կանխարգելիչ աշխատանքների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Абрамова Г.С. Возрастная психология. Учебное пособие для студентов вузов.-М. Академический Проект. Екатеринбург: Деловая книга 2000. – 624 с..
2. Абшаихова У.А., Сирота Н.А. Клинико-катамнестические особенности подростков, больных гашишной наркоманией. Саморазрушающее поведение у подростков. Медицина, 1991. стр.72-75
3. Аверина Е.В., Профилактика наркомании в российской школе: дис. канд. пед. наук , Москва 2003.стр.140
4. Адлер, А. Наука жить Текст/ А. Адлер. – Киев: Port-Royal, 1997. – 315 с.
5. Актуальные проблемы наркоситуации в молодежной среде: состояние, тенденции, профилактика. Центр социологических исследований Минобразования и науки РФ. М., 2010, стр.18-41
6. Ананьев Б.Г. Человек как предмет познания. Избранные психологические труды: В 2 т. - Т.1. М.: Педагогика, 1980. стр.150-165
7. Ананьев Б.Г. О человеке как объекте и субъекте воспитания Избр. психологические. труды: В 2 т. - М.: Педагогика, 1980.-Т.2. стр.62-90
8. Антонян Ю. В., Юстицкий В. В. Несовершеннолетние преступники с акцентуациями личности.- М., 1994. стр.160-164
9. Анцыферова Л.И. Личность с позиции динамического подхода. Психология личности в социальном обществе: личность и ее жизненный путь.- М: Наука, 1990. 367 с.
10. Арефьев, А.Л. Поколение, которое теряет Россия Текст. Социологические исследования. 2002. - №8. Стр. 97 – 105
11. Асеев В.Г. Мотивация поведения и формирования личности. - М.: Мысль, 1976, 157 с.
12. Бардадымов В.А. Аутентичность личности подростков на разных стадиях аддиктивного поведения 2012, 225 с
13. Басс-Дарки опросник Прикладная социальная психология:Учебное пособие под ред. А.Н. Сухова, А.А. Деркача – М,1998г

14. Бандура А. Принципы модификации поведения 1999. стр.26
15. Башкатов И.П. Психология групп несовершеннолетних правонарушителей: Социально-психологические особенности. - М.: Прометей, 1993. - 251с
16. Березин С.В., Лисецкий К.С.Предупреждение подростковой и юношеской наркомании Текст М, 2003. - 256 с.
17. Берн Э. Игры, в которые играют люди: Психология человеческих взаимоотношений; Люди, которые играют в игры: Пер. с англ.; Общ. ред. М. С. Мацковского. - СПб.: Лениздат, 1992. - 399 с.
18. Битенский В.С, Херсонский Б.Г., Дворяк СВ., Глушков В.А. Наркомании у подростков. - К.: Здоровья.-1989 - 216с.
19. Битенский В. С. Клинические и терапевтические аспекты наркоманий в подростковом возрасте.: Диссер. докт.мед.наук. - Одесса.,1991. - 130 с.
20. Боброва Т.В. Педагогические условия организации профилактики наркомании в молодежной среде Дисс. канд.пед.наук 2004 – 209с.
21. Бодалев А. А. Восприятие и понимание человека человеком. — М.: Изд-во МГУ, 1982. — 199с.
22. Божович Л.И. Проблемы развития мотивационной сферы ребенка. М. Просвещение 1972, стр.8-45.
23. Борохов А.Д., Исаев Д.Д. Роль социально - психологических факторов в формировании пристрастия к алкоголю и наркотическим веществам у подростков мужского пола. 1999 стр 80-100
24. Братусь Б. С., Сидоров П. И. Психология, клиника и профилактика раннего алкоголизма. -М.: Изд-во МГУ, 1984. – стр. 145.
25. Блос П. Психоанализ подросткового возраста – Киев 2010, стр. 210
26. Брюн Е.А. Экокультурные основы смыслообразования и психоактивные вещества Этническая психология и общество Под ред. Н.М. Лебедевой. - М., 1997. - С 334
27. Бочкарев Б Размышление о наркомании: Книга для учителя. - М.: Просвещение, 1990 - 278 с
28. Брюн Е.А. Наркоман – это нацианальность. Нарко-Нет **2000.** стр. 13-18
29. Вагин Ю.Р. Особенности аддиктивного поведения у подростков, злоупотребляющих

ингалянтами.: Автореф. дисс. канд. мед. наук. - Новосибирск.,1994. 24 с.

30. Вдовиченко А. А. Патохарактерологическое исследование подростков, зло-употребляющих ингалянтами. 1989. стр.31-80

31. Вепренцова С.Ю. Особенности воздействия старших подростков на эффективность первичной профилактики употребления младшими подростками психоактивных веществ на материале социально-психологического тренинга 2012, 121с.

32. Возрастные и индивидуальные особенности младших подростков Под ред. Д. Б. Эльконина, Т. В. Драгуновой. - М.:Просвещение,1967. - 360 с.

33. Вопросы оптимизации воспитательной работы с трудными подростками Под ред. Д. И. Фельдштейна.: Душанбе., 1970. - 370 с.

34. Выготский Л.С. Собрание сочинений, том 3, М.Педагогика 1983, 368 с.

35. Выготский Л. С. История развития высших психических функций Собр. сочинений.: М.: Педагогика, 1983. - 368 с.

36. Габиани А.А. Наркотизм вчера и сегодня. – Тбилиси 1988 .-260с

37. Габиани А.А. Наркотики в среде учащейся молодежи Соц. исслед. - 1990. -№9. с. 84-91.

38. Гроф К. Неистовый поиск себя М.: Изд-во Трансперсонального института, 1997 - 256с.

39. Гроф С. Психология будущего: Уроки современных исследований сознания -М. 2001. – 198с

40. Грибанова О.В. Педагогические условия предупреждения аддиктивного поведения подростков диссертация кандидата педагогических наук Волгоград, 2007

41. Гоголева А. Аддиктивное поведение и его профилактика Воронеж 2003. — 240 с.

42. Гульдан В.В. Поиск впечатлений, как фактор приобщения подростков к наркотикам Вопросы наркологии. -1990, №2. – С. 40-45.

43. Гульдан В.В. Социальное пространство» подростка-наркомана. 1991. стр. 25-28

44. Гульдан В.В., Шведова М.В. Психологический анализ мотивообразующих факторов наркотизации подростков.1991 стр. 64-72

45. Давыдова В.М. Психическое развитие младших кольников Педагогика, 1990

46. Драгунова Т.В. Подростковый возраст. Возрастная и педагогическая психология Под ред. А.В. Петровского,1973 .стр.19-43

47. Евдокимова Т. Современные тенденции и особенности девиантного поведения подростков. 2009 140с.
48. Егозина В.И., Шакманова А.А., Сафиуллин Р.Э. Формирование аддиктивного поведения у детей и подростков как угроза национальной безопасности Материалы 2-ой научно-методической конференции ПИФК МНПУ 2003 стр.54-61
49. Егозина В.И, Овчинников Н.Д., Шакманов А.А. Педагогическая коррекция аддиктивного поведения детей и подростков Материалы 2-ой научно-методической конференции ПИФК МНПУ 2003 стр.56
50. Завьялов В.Ю. Мотивация потребления алкоголя у больных алкоголизмом и здоровых. Психологический журнал. - 1986. №5. С. 102—111.
51. Загидулин Р.И. Наркоситуация в РФ — угроза национальной безопасности Текст. Уфа: БГУ, 2003. - 171с.
52. Заика Е.В. Психологическая характеристика личности подростков с отклоняющимся поведением Вопросы психологии. - 1990, №4 83-89
53. Исаакян Н., Варданян А. Проблема омоложения наркозависимости и ее психологические аспекты> Актуальные проблемы прикладной психологии Калуга 2006г – стр. 41-46
54. Ильин Е. П. Мотивация и мотивы — СПб., 2000 – 512 с.
55. Качалов В. Об аддикциях и аддиктивном поведении. —2002. - 192 с.
56. Кичатинов Л.П. Формирование мотивов деятельности школьников. -ИГПИ, 1990. - 191 с.
57. Кле, Мишель. Психология подростка: психосоциальное развитие. - М.,1991. -143с
58. Колесов Д.В. Эволюция психики и природа наркотизма. - М.: Педагогика, 1991. - 312 с.
59. Кон И.С. Ребенок и общество М.Наука 1988. 250с
60. Кон И.С. Психология ранней юности. - М.: Просвещение, 1989. - 256с.
61. Кондратенко В.Т. Девиантное поведение у подростков: социально - психологические и психиатрические аспекты. - Мн.: Беларусь, 1988. - 207 с.
62. Копытов А.В. Диагностика факторов риска алкогольной аддикции у несовершеннолетних Республика Беларусь 2009 стр.36-51
63. Короленко Ц.П. Аддиктивное поведение. Общая характеристика и закономерности развития. 1991, №1. - С. 8–15

64. Короленко Ц.П., Донских Т.А. Семь путей к катастрофе: деструктивное поведение в современном мире. - Новосибирск., 1990. — 224 с.
65. Кошкина Е.А. Динамика употребления психоактивных веществ среди подростков. М., 2005. С. 53-58.
66. Копытов А.В. Диагностика факторов риска алкогольной аддикции у несовершеннолетних Республика Беларусь 2009 стр.34-64
67. Кулагина И.Ю. Возрастная психология Учебное пособие. - М. Изд-во РОУ, 2006. - 180 с.
68. Кулаков С.А. Особенности формирования аддиктивного поведения у подростков и психокоррекционная работа с ними. Дисс. канд.псих.наук. - Л, 1989.стр.190
69. Кулаков С.А. Психотерапия и психопрофилактика аддиктивного поведения у подростков. М.:Фолиум, 1996. 48 с.
70. Лакосина Н.Д. О девиантном поведении подростков на ранних этапах злоупотребления психоактивными веществами 1992 №3. - С.98 -101
71. Лазурус Р. Этиологические концепции аддикции 1980 стр.24-45
72. Левин Б.М., Левин М.Б. Наркомания и наркоманы М. Просвещение, 1991 - 160 с.
73. Леонтьев А.Н. Проблемы развития психики. - М. МГУ, 1981 - 564 с.
74. Леонтьев А.Н. Потребности и мотивы деятельности М. МГУ, 1971. Стр. 1-23.
75. Леонтьев В.Г. Психологические механизмы мотивации. - Новосибирск 1992. - 216 с.
76. Лидак С.В. Педагогическая профилактика наркотической зависимости у подростков Дисс. канд. пед. наук 2005 стр.28-50
77. Лисецкий К. Психологические основы предупреждения наркотической зависимости личности 2007 – 308 с.
78. Лисовский В.Д., Колесникова Э.А. Наркотизм как социальная проблема. -СПб., 2003. № 8. С. 129-134.
79. Лисецкий К., Литягина Е. Психология не – зависимости Изд.<Универес-групп> 2003 стр.32-41
80. Личко А.Е. Особенности саморазрушающего поведения при разных типах акцентуации характера у подростков. Саморазрушающее поведение у подростков. -Л., 1991. стр.10-15

81. Личко А. Е. Психопатии и акцентуации характера у подростков. — Л.: Медицина, 1977. — 208 с.
82. Личко А.Е., Битенский В.С. Подростковая наркология. - Л.: Медицина. - 1991. 304 с
83. Личко А.Е Патохарактерологический диагностический опросник для подростков. Методическое пособие 2001 - 57 с.
84. Максимова Н.Ю., Психологическая предрасположенность подростков к употреблению наркотических веществ. Чернигов, 1991 стр.25-35
85. Максимова Н.Ю. О склонности подростков к аддиктивному поведнию Психологический журнал. - 1996 №3. - С.149-152
86. Максименкова Л.И. Аддиктивное поведение в подростковом возрасте как психологическая проблема 2008 стр.14-38
87. Маслоу А. Новые рубежи человеческой природы. - М.: Смысл, 1999. - 425 с.
88. МаслоуА. Г. Мотивация и личность Пер. с англ. А. М. Татлыбаевой.— СПб., 1999. – 412 с.
89. Менделевич В. Психология девиантного поведения 2007 – 432 с.
90. Мерлин В.С. Лекции по психологии мотивов человека. - М, 1973. - 125с.
91. Микадзе Ю.В. Методические принципы психологического анализа нарушений поведения Вестник Московского университета. Психология. 1987 стр.15-19
92. Менегетти А. Система и личность – М. 1996 - 128 с.
93. Мухина В. Возрастная психология: феноменология развития, детство. отрочество – М.2000 - 456 с.
94. Мясищев В.Н. Психология отношений. Избранные психологические труды Под ред., А.А.Бодалева. – М 1998 . - 364с
95. Мясищев В.Н. Проблема потребности в системе психология. Ученые записки ЛГУ. - 1957. стр.32
96. Набатникова Т.Д. Психолого-педагогические условия предупреждения аддиктивного поведения подростков 14-15 лет в школьной и внешкольной практике Дисс. канд пед.наук 2001 стр.145
97. Назаров Е.А. Наркотическая зависимость и созависимость личности в семье Дисс.канд. псих.наук 2000 стр.28-38

98. Нартова-Бочавер С. Аутентичность личности подростков на разных стадиях аддиктивного поведения 2009 стр.34
99. Носко И.В. Психология развития и возрастная психология 2003 стр5-28
100. Обухова Л. Возрастная психология 1996 - 374 с.
101. Овчаренко В.А. Педагогическая профилактика наркомании у подростков Дисс. канд. пед.наук 2004 стр.150
102. Основы социально-психологической теории Под.ред. А.А. Бодалева., А.Н. Сухорукова. М.: Международная педагогическая академия, 1995. — 421 с.
103. Петракова Т.И. Риск аддиктивного поведения и профилактика наркологических заболеваний среди подростков. Вопросы наркологии. 1995 №2 с.79-82.
104. Петровский В. Личность в психологии: парадигма субьектности – Ростов на Дону 1996 - С 320-335
105. Положение молодёжи в России. Аналитический доклад Текст. — М.: Машмир 2005. стр.17-32
106. Попов Ю.В. Границы и типы саморазрушающего поведения у детей и подростков. — Л. Медицина,1991 стр.3-17
107. Попов Ю.В. Концепция саморазрушающего поведения как дисфункционального состояния личности. 1994, №1. стр.6-14
108. Попов Ю.В. Ранняя алкоголизация и токсиманическое поведение как проявление делинквентности у детей и подростков. М. 1988. стр.86-92
109. Психология современного подростка. Под ред. Д.И. Фельдштейна - М.,1989. 245с.
110. Пятницкая И.Н. Профилактика токсикомании у подростков: задачи наркологии и психиатрии Вопросы наркологии. – 1988 №1 стр.43-47
111. Реан А.А. Характерологические особенности подростков делинквентов Вопросы психологии. – 1991 стр.139-144
112. Рерке В. Особенности мотивационно-потребностной сферы подростков с аддикциями 2003 - 318 с
113. Роджерс К. О Становлению личностью М. 1998 стр.41-65
114. Руководство по профилактике злоупотребления психоактивными веществами несовершеннолетними и молодежью. Под ред. Т.М. Щипициной, Л.С. Шпилени., М., 2003.

64с.

115. Рубинштейн С.Л. Бытие и сознание. -М.: Изд-во АН СССР, 1957 . - 328 с

116. Семчук Л., Янчий А. Возрстная психология 1995 стр.13-29

117. Самыгин, П.С. Девиантное поведение молодёжи Самыгин; Ростов-на-Дону: Феникс, 2006.стр 27-34

118. Семенов Д. В. Социально-психологические особенности подростков с аддиктивным поведением 2003 145 с.

119. Сидоров П.И. Механизмы формирования деликвентного образа жизни подростков. Современные задачи психиатрии и наркологии.- Барнаул, 1990 стр. 9-14

120. Сирота Н. А., Ялтонский В. М. Проблемы профилактики наркомании в подростковом возрасте М., 2000. стр.12-41

121. Сирота Н. А., Ялтонский В. М. Программа формирования здорового жизненного стиля. — М., 2007. стр.8-21

122. Слободчиков И. М. Социально-педагогическое прогнозирование одиночества как средство предупреждения дезадаптивного поведения подростков : Дис. канд. пед. наук : 13.00.01 : Екатеринбург, 2000 стр.28-38

123. Смирнов В.В. Педагогическая коррекция направленности личности подростков, эпизодически употребляющих психоактивные вещества Дисс. канд.псих.наук 2002

124. Собчик Л.Н. Стандартизированный многофакторный метод исследования СМИЛ, подростковый вариант 2001

125. Соловьев С.И. Социально-педагогическая профилактика наркомании в школьной среде во Франции Дисс. канд.пед.наук 2005 стр.2

126. Сорокина И.Р. Социально-педагогические условия наркотизации среди учащейся молодежи в зарубежной науке практике на материалах США и Англии Дисс.канд. псих.наук 2002 стр.154

127. Социально-педагогические основы профилактики алкоголизма и наркомании среди детей и подростков тема диссертации и автореферата по ВАК 13.00.01, доктор педагогических наук Фортова, Л. К. 2002

128. Толстых И.Н. Изучение мотивации подростков имеющих пагубные привычки Вопросы психологии. - 1989, №2. стр.35-38

129. Томиров Т.В. Типологические особенности подростков, предрасположенных к употреблению наркотических и токсических веществ М.,1989 64с.
130. Ульянова В.П.«Социально-психологические особенности рефлексии нормативной ситуации подростками с делинквентным поведением» 2008 стр.26-41
131. Фельдштейн Д.И. Психологические аспекты изучения современного подростка. Вопросы психологии. – 1983.стр.33-42
132. Фельдштейн Д.И. Психология развивающейся личности. - М.: Институт практической психологии, В. 1996. — 512 с.
133. Фрейд З. Основы психоанализа 1996 - 576 с.
134. Фромм Э. Бегство от свободы Человек для себя Минск 2000 – 672 с.
135. Шабалина В.В. Зависимое поведение школьников. Психологическое консультирование школьников и их родителей по проблеме зависимого поведения.- СПб., 2001. – 176 с.
136. Шабалов Н. Аддиктивное поведение подростков 2008 стр.12-54
137. Руководство по профилактике злоупотребления психоактивными веществами несовершеннолетними и молодежью. Под ред. Т.М. Щипициной, Л.С. Шпилени., М., **2003**.стр.28-38
138. Эльконин Д.Б. Возрастные и индивидуальные особенности младшего подростка. - М.: Просвещение, 1967. - 360 с
139. Эриксон Психосоциальное развитие личности М: Просвещение,1995 стр.28-69
140. Ялтонский В.М., Сирота Н.А. Исследование особенностей самооценки и условий ее формирования при аддиктивном поведении и гашишной наркомании у подростков М. 1991. стр.79-80
141. Ялтонский В.М. Влияние наркотизации гашишем на акцентуации характераподростков с аддиктивным поведением и гашишной наркоманией М. 1991,. стр.41- 43
142. Brenner T.H. Drugs and society in Laroponetis, Drug abuse Proceedings of the International conference, Philadelphia, 1992.-С.115-124.
143. Cohen A.Y. The Journey beyond trips: Alternatives to drugs Psyche delic Drugs.-1971.-№ 3.
144. Davidson F., Etiene M., Piesset J. Medico-social survey of 662 drags users. Bull. Narc. 2004. Vol.25., №4.

145. Freedman M., Wilson E. Childhood and adolescent addictive disorders.Pediatrics. 1994. Vol.34.,№2.

146. Goodwin L.R., Jr. Drugless alternatives Unpublished paper, Tallalvissea, FL; department of Health and Rehabilitive Services, Florida Drug Abuse Program, 2002.

147. Mijuskovic Ben. Loneliness and adolescent alcoholism.// Adolescence. 2000. 23.,№91.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Ադդիկտիվ վարքի բացահայտման հարցաշար

Խնդրում եք պատասխանել հարցերին այո կամ ոչ: Պատասխանները չեն հրապարակվելու, ձեր անունը չեք նշում, նշում եք միայն սեռը և տարիքը:

1.Օգտագործում եք արդյոք հոգեակտիվ նյութեր «դրանց մասին խոսել ենք նախնական զրույցներում»

2. Եթե չեք օգտագործել, փորձել եք արդյոք գոնե մեկ անգամ

3. Կհամաձայնեիք արդյոք հոգեակտիվ նյութ օգտագործել, եթե առաջարկում է ձեզ համար հեղինակավոր մարդ

4. Կարիք զգում եք արդյոք հոգեակտիվ նյութերի վեճերից, տհաճություններից հետո

5. Որպես լիցքաթափման միջոց օգտագործում եք հոգեակտիվ նյութեր

6. Խնդիրներ ունենալիս կամ դժվարությունների հանդիպելիս հոգեակտիվ նյութերի կարիք զգում եք արդյոք

7. Դուք միշտ ունեք պատճառ հոգեակտիվ նյութեր օգտագործելու

8. Լինում են դեպքեր, երբ առանց հոգեակտիվ նյութերի դիսկոմֆորտ եք զգում

9. Ձեզ չի թվում արդյոք, որ շրջապատի մարդիկ անարդարացի են վերաբերվում ձեզ

10 Դուք միշտ եք կարողանում կարգավորել հոգեակտիվ նյութեր օգտագործելու ձեր պահանջը

Եթե 1-3 հարցերին պատասխանում են ոչ, ապա չկա ոչ ադդիկցիա, ոչ էլ կախվածություն

4-8 հարցերը ախտորոշում են ադդիկցիայի առկայությունը

8-10 հարցերը ախտորոշում են կախվածություն

Հավելված 2

Հո•եակտիվ նյութերի օ•տա•ործման մոտիվացիան բացահայտող հարցաշար

Խնդրում ենք նշել այն պատճառները, որոնցից ելնելով դուք հոգեակտիվ նյութեր եք օգտագործում: Պատասխանները չեն հրապարակվելու, ձեր անունը չեք նշում, նշում եք միայն սեռը և տարիքը: Աշխատեք տալ անկեղծ պատասխաններ, ընտրությունը անսահմանափակ է: Եթե կհանդիպեք անհասկանալի բառերի, մի խուսափեք հարցնել և ճշտել:

1. Ինձ ազատ զգալու համար
2. Սուր զգացողություններ ապրելու համար
3. Լավ տրամադրություն ստեղծելու համար
4. Ձանձրույթից ազատվելու համար
5. Հետաքրքրասիրության, անծանոթ զգացողություններ ունենալու համար
6. Հակառակ սեռի ներկայացուցիչների հետ շփումը հեշտացնելու համար
7. Ֆիզիկապես ավելի ուժեղ լինելու համար
8. Առօրյա կյանքից ազատվելու համար
9. Հասակակիցներիս անկախությունս ցույց տալու համար
10. Խմբից ետ չմնալու համար
11. Ծնողների պահանջներին ընդդիմանալու համար

Հավելված 3

Բասս Դարկի ագրեսիվության ախտորոշման մեթոդիկա

Բաս Դարկիի ագրեսիայի ախտորոշման մեթոդիկա

սեռ ----------

տարիք ---------

Ընտրեք տարբերակներից մեկը՝ <այո> կամ <ոչ>:

1. Երբեմն չեմ կարողանում զսպել ուրիշին վնաս պատճառելու ցանկությունս:

<այո>, <ոչ>

2. Երբեմն կարող եմ բամբասել մարդկանց, որոնց չեմ սիրում:

<այո>, <ոչ>

3. Հեշտությամբ նյարդայնանում եմ, բայց արագ էլ հանգստանում եմ:

<այո>, <ոչ>

4. Երբ մեկին խաբում եմ, խղճի խայթ եմ զգում:

<այո>, <ոչ>

5. Եթե լավ չխնդրեն, խնդրանքը չեմ կատարի:

<այո>, <ոչ>

6. Ոչ միշտ եմ ստանում այն, ինչ իմն է:

<այո>, <ոչ>

7. Գիտեմ, որ մարդիկ իմ թիկունքում խոսում են իմ մասին:

<այո>, <ոչ>

8. Եթե ինձ դուր չի գալիս մարդկանց արարքները, այնպես եմ անում, որ զգան:

<այո>, <ոչ>

9. Երբեմն ինձ թվում է, որ չեմ կարող հարվածել որևէ մեկին:

<այո>, <ոչ>

10. Երբեք այնքան չեմ նյարդայնանում, որ իրեր շպրտեմ:

<այո>, <ոչ>

11. Միշտ ներում եմ ուրիշների սխալները:

<այո>, <ոչ>

12. Երբ հաստատված կարգը ինձ դուր չի գալիս, այն ուզում եմ խախտել:

<այո>, <ոչ>

13. Ուրիշները համարյա միշտ օգտագործում են բարենպաստ պայմանները:

<այո>, <ոչ>

14. Զգաստանում եմ այն մարդկանցից, որ ինձ լավ են վերաբերվում, քան ես սպասում էի:

<այո>, <ոչ>

15. Հաճախ չեմ համաձայնվում մարդկանց հետ:

<այո>, <ոչ>

16. Երբեմն մտքովս բաներ են անցնում, որից ես ամաչում եմ:

<այո>, <ոչ>

17. Եթե մեկը ինձ հարվածի, ես նույնը չեմ անի:

<այո>, <ոչ>

18. Նյարդայնացած պահերին, դռները շրխկացնում եմ:

<այո>, <ոչ>

19. Ես ավելի նյարդային եմ, քան թվում է ուրիշներին:

<այո>, <ոչ>

20. Եթե մեկը իրեն դնում է ղեկավարի տեղ, ես գործում եմ նրա դեմ:

<այո>, <ոչ>

21. Ինձ մի փոքր տխրեցնում է իմ ճակատագիրը:

<այո>, <ոչ>

22. Կարծում եմ, որ շատերը ինձ չեն սիրում:

<այո>, <ոչ>

23. Չեմ կարող չվիճել, երբ մարդիկ ինձ հետ համաձայն չեն:

<այո>, <ոչ>

24. Գործից փախչողները պետք է ամաչեն:

<այո>, <ոչ>

25. Ով վիրավորում է ինձ կամ իմ ընտանիքին, կռվի առիթ է ստեղծում:

<այո>, <ոչ>

26.Ես չեմ անում կոպիտ կատակներ:

<այո>, <ոչ>

27.Զայրանում եմ, երբ ինձ վրա ծիծաղում են:

<այո>, <ոչ>

28.Երբ մարդիկ ղեկավար են իրենց զգում, ամեն ինչ անում եմ, որ չգոռոզանան:

<այո>, <ոչ>

29.Համարյա ամեն շաբաթ տեսնում եմ որևէ մեկին, ով ինձ դուր չի գալիս:

<այո>, <ոչ>

30. Ինձ շատ մարդիկ են նախանձում:

<այո>, <ոչ>

31. Ես տխրում եմ, որ քիչ բան եմ անում ծնողներիս համար:

<այո>, <ոչ>

32.Պահանջում եմ, որ մարդիկ հարգեն ինձ:

<այո>, <ոչ>

33. Մարդիկ, որոնք միշտ ձեզ տանջում են, արժանի են պատժի:

<այո>, <ոչ>

34.Զայրույթից երբեմն մռայլ եմ լինում:

<այո>, <ոչ>

35. Եթե ինձ վերաբերվում են ավելի վատ, քան ես դրան արժանի եմ, ես միշտ տխրում եմ:

<այո>, <ոչ>

36. Եթե ինձ ուզում են ջղայնացնել, ես ուշադրություն չեմ դարձնում:

<այո>, <ոչ>

37.Չնայած ցույց չեմ տալիս, երբեմն նախանձը ինձ կրծում է:

<այո>, <ոչ>

38. Երբեմն ինձ թվումա, որ ինձ վրա ծիծաղում են:

<այո>, <ոչ>

39. Եթե բարկանում եմ, կոպիտ արտահայտություններ չեմ անում:

<այո>, <ոչ>

40. Հազվադեպ եմ պատասխանում, եթե ինձ հարվածում են:

<այո>, <ոչ>

41. Նեղանում եմ, երբ ինչ-որ բան իմ ցանկությամբ չի ստացվում:

<այո>, <ոչ>

42.Երբեմն մարդիկ նյարդայնացնում են իրենց ներկայությամբ:

<այո>, <ոչ>

43.Ուզում եմ, որ մեղքերս ներվի:

<այո>, <ոչ>

44.Չկան մարդիկ, որոնց ես ատում եմ:

<այո>, <ոչ>

45.Եթե մեկը ինձ նյարդայնացնում է, ասում եմ այն, ինչ մտածում եմ նրա մասին:

<այո>, <ոչ>

46. Իմ սկզբունքն է. երբեք չվստահել ուրիշներին:

<այո>, <ոչ>

47.Շատ եմ անում այնպիսի բաներ, որի համար հետո ափսոսում եմ:

<այո>, <ոչ>

48. Եթե բարկանամ, կարող եմ հարվածել:

<այո>, <ոչ>

49. Տասը տարեկանից ես չեմ բարկացել:

<այո>, <ոչ>

50. Հաճախ ինձ զգում եմ պայթուցիկ սարք:

<այո>, <ոչ>

51. Եթե իմանային, թե ինչ եմ զգում, ինձ հետ լեզու չէին գտնի:

<այո>, <ոչ>

52.Միշտ մտածում եմ, թե ինչ է ստիպում մարդկանց հաճելի բաներ անել ինձ համար:

<այո>, <ոչ>

53. Երբ ինձ վրա գոռում են, ես էլ եմ գոռում:

<այո>, <ոչ>

54.Անհաջողությունները ինձ տխրեցնում են:

<այո>, <ոչ>

55. Կռվում եմ ուրիշներից ոչ ավել, ոչ էլ պակաս:

<այո>, <ոչ>

56. Կարող եմ հիշել, երբ այնքան չարացած եմ եղել, որ ձեռքիս տակ իրերը ջարդել եմ:

<այո>, <ոչ>

57. Երբեմն զգում եմ, որ պատրաստ եմ առաջինը սկսել ծեծկռտուքը:

<այո>, <ոչ>

58. Երբեմն զգում եմ, որ կյանքը իմ նկատմամբ անարդարացի է վարվում:

<այո>, <ոչ>

59. Նախկինում կարծում էի, որ մարդկանց մեծ մասը ճիշտ է խոսում, բայց այժմ դրան չեմ հավատում:

<այո>, <ոչ>

60. Հայոյում եմ միայն կատաղությունից:

<այո>, <ոչ>

61. Երբ ճիշտ չեմ վարվում, խիղճս տանջում է:

<այո>, <ոչ>

62.Եթե իրավունքներս պաշտպանելու համար պետք է ֆիզիկական ուժ գործադրել, ապա ես այդպես էլ անում եմ:

<այո>, <ոչ>

63. Երբեմն զայրույթս արտահայտում եմ սեղանին թխկթխկացնելով:

<այո>, <ոչ>

64. Կոպիտ եմ այն մարդկանց հետ, որոնք ինձ դուր չեն գալիս:

<այո>, <ոչ>

65. Ինձ վնասել ցանկացող թշնամիներ չունեմ:

<այո>, <ոչ>

66. Չեմ կարողանում մարդուն իր տեղը ցույց տալ, եթե նույնիսկ նա արժանի է:

<այո>, <ոչ>

67.Հաճախ մտածում եմ, որ ճիշտ չեմ ապրում:

<այո>, <ոչ>

68. Գիտեմ մարդկանց, որոնք ընդունակ են ինձ ներքաշել ծեծկռտուքի մեջ:

<այո>, <ոչ>

69. Չեմ տխրում մանրուքների պատճառով:

<այո>, <ոչ>

70. Հազվադեպ է մտքովս անցնում, որ մարդիկ փորձում են բարկացնել ինձ:

<այո>, <ոչ>

71. Հաճախ միայն սպառնում եմ չպատրաստվելով իրագործել սպառնալիքներս:

<այո>, <ոչ>

72. Վերջին ժամանակներս տաղտկալի եմ դարձել:

<այո>, <ոչ>

73. Վեճի ժամանակ հաճախ ձայնս բարձրացնում եմ:

<այո>, <ոչ>,

74. Փորձում եմ թաքցնել մարդկանց հանդեպ վատ վերաբերմունքս:

<այո>, <ոչ>

75. Ավելի լավ է համաձայնվել ինչ-որ բանի հետ, քան վիճել:

<այո>, <ոչ>

Հավելված 4

Լիչկոյի՝ «Բնավորության ախտաբանության ախտորոշման մեթոդիկա» հարցաշար

Բնավորության շեշտվածության ուսումնասիրությա մեթոդիկա

սեռ ----------

տարիք -------

Խնդրում ենք ընտրել երեք այնպիսի պատասխան, որոնք Ձեզ ավելի բնորոշ են և երեք պատասխան, որոնք քիչ են բնորոշ:

Դատողությունների ցուցակը	**Առավել բնորոշ**	**Ամենաքիչ բնորոշ**
Ինքնազգացողություն		
Տրամադրություն		
Քուն և երազներ		
Քնից արթնանալը		
Ախորժակը և սննդի նկատմամբ վերաբերմունքը		
Վերաբերմունք հագուստի նկատմամբ		
Վերաբերմունք սպիրտային խմիչքների նկատմամբ		
Վերաբերմունքը ծնողների նկատմամբ		

Վերաբերմունք ընկերների նկատմամբ		
Վերաբերմունք շրջապատի նկատմամբ		
Վերաբերմունք անծանոթ մարդկանց նկատմամբ		
Վերաբերմունք մենակության նկատմամբ		
Վերաբերմունք ապագայի նկատմամբ		
Վերաբերմունք անհաջողությունների նկատմամբ		
Վերաբերմունք արկածների և ռիսկի նկատմամբ		
Վերաբերմունք լիդերության նկատմամբ		
Վերաբերմունք քննադատության նկատմամբ		
Վերաբերմունք խնամքի և խրատների նկատմամբ		
Վերաբերմունք կանոններ և օրենքի նկատմամբ		
Ինքնագնահատականը մանկական տարիքում		
Վերաբերմունքը դպրոցին		
Ինքնագնահատականը ներկա պահին		
Վերաբերմունք փողի նկատմամբ		

Հավելված 5

Լ.Սոբչիկի դեռահասների համար ադապտացված «MMPI» Անձի հետազոտման բազմագործոն մեթոդ մինեսոթյան հարցարան

Անձնավորության ուսումնասիրության ստանդարտացված բազմագործոն մեթոդիկա

սեռ ----------
տարիք -------

Եթե Ձեր պատասխանը <ճիշտ է>, ապա խաչ դրեք թերթիկի համապատասխան համարի վերևի մասում: Եթե Ձեր պատասխանը <ճիշտ չէ>, ապա խաչ դրեք թերթիկի համապատասխան համարի ներքևի մասում:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30
31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	49	50	51	52	53	54	55	56	57	58	59	60
61	62	63	64	65	66	67	68	69	70	71	72	73	74	75	76	77	78	79	80	81	82	83	84	85	86	87	88	89	90
91	92	93	94	95	96	97	98	99	100	101	102	103	104	105	106	107	108	109	110	111	112	113	114	115	116	117	118	119	120
121	122	123	124	125	126	127	128	129	130	131	132	133	134	135	136	137	138	139	140	141	142	143	144	145	146	147	148	149	150
151	152	153	154	155	156	157	158	159	160	161	162	163	164	165	166	167	168	169	170	171	172	173	174	175	176	177	178	179	180
181	182	183	184	185	186	187	188	189	190	191	192	193	194	195	196	197	198	199	200	201	202	203	204	205	206	207	208	209	210
211	212	213	214	215	216	217	218	219	220	221	222	223	224	225	226	227	228	229	230	231	232	233	234	235	236	237	238	239	240
241	242	243	244	245	246	247	248	249	250	251	252	253	254	255	256	257	258	259	260	261	262	263	264	265	266	267	268	269	270
271	272	273	274	275	276	277	278	279	280	281	282	283	284	285	286	287	288	289	290	291	292	293	294	295	296	297	298	299	300
301	302	303	304	305	306	307	308	309	310	311	312	313	314	315	316	317	318	319	320	321	322	323	324	325	326	327	328	329	330
331	332	333	334	335	336	337	338	339	340	341	342	343	344	345	346	347	348	349	350	351	352	353	354	355	356	357	358	359	360
361	362	363	364	365	366	367	368	369	370	371	372	373	374	375	376	377	378	379	380	381	382	383	384	385	386	387	388	389	390